



**Լռութիւնը
պատվաբեր չէ.
Հայաստանում
ընտանեկան
բռնութեան դէմ
պայքար**

**AMNESTY
INTERNATIONAL**



Միջազգային Համաներումը համաշխարհային շարժում է, որի 2,2 միլիոն հետեւորդներն ավելի քան 150 երկրներում եւ տարածքներում մասնակցում են մարդու իրավունքների լուրջ ոտնահարումներին վերջ դնելու պայքարին: Մեր երազանքն է, որ յուրաքանչյուր անձ վայելի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում եւ մարդու իրավունքների այլ միջազգային չափանիշներով ամրագրված բոլոր իրավունքները: Մենք անկախ ենք ցանկացած կառավարությունից, քաղաքական գաղափարախոսությունից, տնտեսական շահից կամ կրոնից՝ ֆինանսավորվելով հիմնականում անդամագրությունից եւ հանրային նվիրատվություններից ստացված գումարով:

**AMNESTY
INTERNATIONAL**



Միջազգային Համաներում հրատարակություն

Առաջին անգամ տպագրվել է 2008 թվականին
Միջազգային Համաներում հրատարակության կողմից
Միջազգային քարտուղարություն
Peter Benenson House
1 Easton Street
London WC1X 0DW
United Kingdom
www.amnesty.org

© Միջազգային Համաներում հրատարակություն 2008

Ինդեքս՝ EUR 54/004/2008
Բնագրի լեզուն՝ անգլերեն
Տպագրությունը՝ Միջազգային Համաներման
Միջազգային քարտուղարություն, Միացյալ
Թագավորություն

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս հրատարակությունը պաշտպանված է հեղինակային իրավունքով, սակայն քարոզչության, քարոզարշավ կազմակերպելու եւ ուսուցման նպատակով այն կարող է ցանկացած եղանակով անվճար վերահրատարակվել, վերավաճառքի ենթակա չէ: Հեղինակային իրավունքի սեփականատերերն օգտագործման յուրաքանչյուր այսպիսի դեպք խնդրում են անձանագրել իրենց գրասենյակում՝ ազդեցության գնահատման նպատակով: Ցանկացած այլ հանգամանքներում պատճենելու, այլ հրատարակություններում օգտագործելու, թարգմանության կամ տեքստը տեղայնացնելու համար հարկավոր է հրատարակիչներից նախնական գրավոր համաձայնություն ստանալ, որի համար հնարավոր է վճարում պահանջվի:

Գրաշապիկի լուսանկարը, 11-ամյա նկարչի այս աշխատանքը ներկայացվել էր Գեղարքունիքի մարզի Մարտունու Կանանց համայնքային խորհրդի կողմից կազմակերպված «Երբ տանը խաղաղություն է տիրում» մրցույթին:

© Մարտունու Կանանց համայնքային խորհուրդ/
Մարիամ Գալստյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1.2 ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	5
1.3 ԿԱՆԱՆՑ ԴԵՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ	6
1.4 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԵՒ ԱՊԱՀՈՎԵԼ ԿԱՆԱՆՑ ՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ	7
2. ԿԱՆԱՅԵ ԵՒ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ..	9
2.1 ՀԱՅԱՍՏԱՆ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	9
2.2 ԿԱՆԱՅԵ ՀԵՏԵՈՐՅՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	10
2.3 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ	11
2.4 ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏԱՄԱԲ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ	13
2.5 ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐՈՒՄ	14
2.6 ԹՐԱՖԻԿԻՆԳ	14
3. ԲՈՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՊՐԵԼԸ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱՆՑ ՓՈՐՁԸ	16
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ	16
ՄԵԿՈՒՄԱՅՈՒՄ ԵՒ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ	17
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ	17
ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ.....	19
ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆ	20
ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԱՐԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԸ	20
ԲՈՒԹՅԱՄԲ ՈՐԴԵԿՅՎՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԼԸ ԶԿԱ	21
ԿՆՈՋ ԿՈՂՄԻՑ ԿՆՈՋ ԴԵՄ ԳՈՐԾԱԴԻՎՈՂ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ	22
ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԵԼԸ	22
4. ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՒ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ	23
4.1 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	23

4.2 ԵՐԿՐԻ ՕՐԵՆՔԸ	25
4.3 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ	26
5. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԾԱՌԱՅԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ	29
5.1 ՉՃԱՆԱՉԵԼԸ	29
5.2 «ԸՆՏԱՆԻՔԻ ՆԵՐՍՈՒՄ ՊԱՅԵԼԸ»	29
5.3 ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	32
5.4 ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՂԵԿԿԱՏ ԱՐՁԱԳԱՆՔԸ	33
5.5 ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՒ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	35
5.6 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՊԱՏԺԼԻՈՒԹՅՈՒՆ	36
5.7 ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴԵՊՔԵՐ	37
5.8 ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ	38
6. ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ	40
6.1 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	40
ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ	41
ԿԱՆԱՆՑ ՌԵՍՈՒՐՍ-ԿԵՆՏՐՈՆ	42
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ	42
ԱՋԱԿԻՑ	42
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ	42
ՄԱՐՏՈՒՆՈՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ	43
ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՆԱԽԱՁԵՐՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	43
6.2 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԻՆԱԳԻԾԸ	43
7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	45
7.1 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	46
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	51

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ես 25 տարեկան էի, երբ ամուսնացա, այսինքն արդեն չափահաս էի եւ գիտակցում էի՝ ում հետ եմ ամուսնանում: Նա շատ-շատ լավ մարդ էր: Դա այն եզակի դեպքերից էր, երբ մարդը քայքայվում է ... Ես փորձել եմ փրկել նրան, որովհետեւ իսկապես սիրում էի. գիտեք, մարդիկ խոսում էին, թե որքան սիրով էինք միմյանց նկատամամբ: Երկու աղջիկ ունեցա, իսկ հինգ տարի հետո սկսվեց այդ ամենը: Նա սկսեց խաղատուն գնալ, հետո աշխատանքը կորցրեց եւ սկսեց պարտք անել, այլևս գիշերը տուն չէր գալիս, սկսեց տանել տան փողերը, ինչը արգելել էի կարող, որովհետեւ կծեծեր ինձ: Հետո սկսվեց խմելը, հետո էլ՝ թմրանյութեր օգտագործելը: Աստիճանաբար նա դարձավ ալկոհոլիկ, իսկ իր զայրույթը սկսեց թափել իմ ու երեխաների վրա, ու սկսվեց՝ ծեծ, հայիոյանք եւ այլն: Պետությունը ասում է՝ բռնությունն ընտանիքում մեր երկրում պրոբլեմ չէ: Ես ուզում եմ, որ ե՛ւ պետությունը, ե՛ւ հասարակությունը պարզապես ընդունեն, որ Հայաստանում առկա է այս խնդիրը: Նրանք չեն ուզում ընդունել, որովհետեւ ըստ հայկական մեյթափիտետի՝ սրա մասին չի կարելի խոսել: Նույնիսկ կան կանայք, որոնք մեղադրում են ապաստարան գնացող կանանց: Ես համոզված եմ՝ այս կանանցից ոմանք իրենք էլ են բռնության զոհ, բայց մեր հայկական պատիվն ասում է, որ սրա մասին բարձր խոսել չի կարելի: Կին ես՝ պիտի հաշտվես: (Պ.Ն.)¹

Ինչպես եւ տարածաշրջանի այլ երկրներում եւ աշխարհում, Հայաստանի հազարավոր կանայք պարբերաբար բռնության են ենթարկվում իրենց ընտանիքում՝ իրենց սեռական պատկանելիության պատճառով: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի կանանց մեկ քարորդից ավելին կարող են ֆիզիկական բռնության ենթարկվել իրենց ամուսինների կամ ընտանիքի այլ անդամների կողմից, իսկ հոգեբանական բռնության դեպքերը ավելի շատ են: Չնայած ընտանեկան բռնության մեղավորներն ու զոհերը կարող են լինել ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ, դեպքերի ճնշող մեծամասնությունում կանայք են ենթարկվում բռնության տղամարդկանց ձեռքից: Կանայք հանդիսանում են նաեւ սեռական բռնության առաջնային զոհերը: Ընտանեկան բռնության գեղեցիկ բնույթը, ինչի հետեւանքով կանայք ենթարկվում են բռնության անհամամասնորեն ավելի հաճախ, նշանակում է, որ զործ ունենք խտրականության, հետեւաբար եւ մարդու իրավունքների ոտնահարման հետ: Քանի որ հասարակական խիստ ճնշման տակ ընտանեկան եւ սեռական բռնության զոհերը պահպանում են լռությունը, Amnesty International-ը (թարգ. Միջազգային Համալսարան) անհանգստացած է, որ Հայաստանում կանանց իրավունքի դեմ այս հանցագործությունները եւ ոտնահարումը մեծ մասամբ չեն գրանցվում եւ հիմնականում մնում են անպատիժ:

Այս զեկույցն անդրադառնում է գեղեցիկ բռնության տարբեր ձեւերին՝ ներառյալ կանանց դեմ՝ ամուսինների, այլ ինտիմ զուգընկերների կամ ընտանիքի այլ անդամների կողմից (ընտանեկան բռնություն) գործադրվող բռնությունը, սեռական բռնությունը ընտանիքում եւ կանանց դեմ սեռական ոտնձգությունը աշխատանքի վայրում: Այս բոլոր երեւույթները հանդիսանում են մարդու իրավունքների ոտնահարում, ինչը պահանջում է համապատասխան գործողություն Հայաստանի կառավարության կողմից՝ պաշտպանելու կանանց եւ աղջիկների՝ ընտանիքում եւ աշխատանքի վայրում իրենց անվտանգ եւ լիակատար անհատականություն զգալու իրավունքը:

2000 թվականի *Ընտանեկան բռնությունը Հայաստանում* հաշվետվության մեջ ամերիկյան «Միննետտայի մարդու իրավունքների պաշտպաններ» կազմակերպությունը խորհուրդ է տվել Հայաստանի կառավարությանը ապահովել հավասար եւ արդյունավետ քրեական արդարադատության համակարգի մատչելիությունը ընտանեկան բռնության զոհերի համար եւ փոխհատուցել կրած վնասի համար:² Ութ տարի անց, չնայած այս հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) աճող թվի, հարցումներում այս երեւույթի վերաբերյալ ավելի եւ ավելի մանրամասն փաստագրությանը եւ ՄԱԿ-ի կոմիտեների հանձնարարականները, Հայաստանի քրեական արդարադատության համակարգի հավասարությունն ու արդյունավետությունը եւ ընտանեկան ու սեռական բռնության փոխհատուցումը մնում են այս հանցանքների զոհերի համար անհասանելի նպատակ:

Հայկական իշխանությունները կատարել են մի քանի առաջնային քայլեր կանանց դեմ բռնության վերաբերյալ: 2004-ին ընդունվել են թրաֆիկինգը վերացնելուն և կանանց դեմ հասարակությունում բարձրացնելուն, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության վերացմանը ուղղված Գործողության ազգային ծրագրեր: Ընտանեկան բռնությունը քրեորեն հետապնդելի դարձնող օրենքի նախագիծը 2008-ին քննարկման փուլում էր, և ոստիկանության համար վերապատրաստման որոշ ծրագրեր էին նախաձեռնվել՝ օգնելու նրանց իրականացնելու ընտանեկան բռնությանը արձագանքելու պարտականությունների ուղեցույցի կետերը:

Այնուամենայնիվ, այս քայլերը բավական չեն հակազդելու տարածված և եղբմիկ խտրականությանը այն կանանց նկատմամբ, որոնք արդարություն են պահանջում իրենց իրավունքները ոտնահարողների դեմ, աջակցելու ընտանեկան և սեռական բռնության զոհերին կամ փոխելու կանանց նկատմամբ բռնությունը արդարացնող վերաբերմունքը: Ընտանեկան բռնությունը շարունակում է պատժվել ծանր մարմնական վնասվածք հասցնելու, հարձակման և ՀՀ Զրեական օրենսգրքի այլ հանցագործությունների համար սահմանված ընդհանուր դրույթներով և դեռևս չի տարանջատվում անծանոթների կողմից գործադրված բռնության դեպքերից, չնայած դրա կանխարգելման և պատժի հետեւանքները միանգամայն տարբեր են: Կանանց դեմ բռնության վերացման ուղղությամբ պետության կողմից ձեռնարկված միջոցները կանանց իրավունքների վերաբերյալ գործողությունների ազգային ծրագրի ընդամենը մի բաղկացուցիչ մասն են, և չնայած դրա կատարմանը մնացել է ընդամենը երկու տարի՝ ծրագիրը մնում է հիմնականում չիրագործված: Հայաստանում վերջին տարիներին ընդհատումներով աշխատող ՀԿ-ների կողմից ստեղծված փոքրաթիվ ապաստարանները՝ բացառությամբ մեկի, 2008-ի հունիսին փակվել են ֆինանսական խնդիրների պատճառով:

Amnesty International-ը կոչ է անում հայկական իշխանություններին մարդու իրավունքների միջազգային օրենքով սահմանված իրենց պարտավորությունները կատարելու համար շատ ավելին անել՝ հարգելու, պաշտպանելու և կյանքի կոչելու կանանց և աղջիկների՝ առանց բռնության ապրելու իրավունքը: Մասնավորապես, վերաբերմունքի հսկայական փոփոխություն է անհրաժեշտ քրեական արդարադատության համակարգի մի շարք մակարդակներում՝ հակազդելու ընտանեկան և սեռական բռնության զոհերի վրա ճնշմանը, որպեսզի նրանք արդարություն չփնտրեն: Ազգային ռազմավարությանը բովանդակություն հաղորդելու համար զգալիորեն ավելի միջոցներ և գործողություններ են անհրաժեշտ՝ աջակցության ծառայությունների՝ ներառյալ «թեժ գծերի» և ապաստարանների հաստատման և իրավապահ մարմինների ներուժի զարգացման միջոցով, որը նրանց հնարավորություն կտա առավել արդյունավետ միջամտել կանանց և աղջիկներին բռնությունից պաշտպանելուն: Մինչ այժմ հիմնականում ՀԿ-ներն են իրենց՝ սովորաբար չչլին և անկանոն ռուսուրսներով գեղեցիկաբան բռնության զոհերին աջակցելու տարրական կառուցվածքներ, ինչպես օրինակ «թեժ գծեր», ճգնաժամային կետերներ և ապաստարաններ ստեղծել:

Այս գեղույցի համար Amnesty International-ի կողմից կատարված հետազոտությունը վկայում է, որ Հայաստանում գերիշխում է կանանց նկատմամբ բռնությունը ընդունող և նույնիսկ արդարացնող հասարակական վերաբերմունքը: Այսպիսի վերաբերմունքը, որն ամենեւին չի սահմանափակվում տղամարդկանցով, լայն տարածում ունի նաև կանանց շրջանում: Այս տեսակետները լուրջ արգելք են հանդիսանում կանանց իրավունքների պաշտպանության և կիրառման համար և պետք է փոխվեն: Կանանց նկատմամբ ամեն տեսակի խտրականության վերացման մասին Կոնվենցիայի (Կանանց կոնվենցիա) 5-րդ հոդվածը պետություններից պահանջում է միջոցներ ձեռնարկել՝ «փոխելու կանանց և տղամարդկանց սոցիալական և մշակութային վարվելակերպը վերացնելու համար այս կամ այն սեռի թերաբժեքության կամ գերազանցության, ինչպես նաև կանանց և տղամարդկանց կարծրատիպ դարձած դերաբաշխման վրա հիմնված նախապաշարմունքները, ավանդական և բոլոր այլ սովորույթները»: Հայաստանի իշխանությունների մինչ այժմ ձեռնարկած քայլերը հիմնականում դեկլարատիվ բնույթ են կրել. շատ ավելին պետք է արվի փոխելու համար այսպիսի վերաբերմունքը և դրանով արդարացվող բռնությունը:

Գեղեցիկաբան բռնությունը զուտ հայկական խնդիր չէ. այն համաշխարհային երեւույթ է, որն

արտավորում է կանանց եւ աղջիկների կյանքը երկրագնդով մեկ: Amnesty International-ը չի համարում, որ գենդերային բռնությունը Հայաստանում առանձնահատուկ կամ անհամամասնորեն խորը դրսեւորում ունեցող երեւոյթ է, ինչպես ցույց են տալիս տարածաշրջանի այլ երկրների վերաբերյալ կազմակերպության կողմից հրապարակված նմանատիպ հաշվետվությունները՝, ներառյալ Վրաստանը, Բելոռուսը, Ուկրաինան, Ռուսաստանը եւ Թուրքիան.³ Amnesty International-ը համոզված է, որ գենդերային բռնության ունիվերսալ լինելը չի կարող որեւէ կերպ նվազեցնել կառավարությունների պատասխանատվությունը այս հարցը լուծելու ուղղությամբ: Ինչպես ասել է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը, «[կ]անանց նկատմամբ բռնությունը շարունակվում է աշխարհի բոլոր երկրներում, որպես մարդու իրավունքների կոպիտ խախտում եւ գենդերային հավասարության մեծ խոչընդոտ: Այսպիսի բռնությունը անհանդուրժելի է անկախ նրանից՝ կատարվում է այն պետության եւ պետական մարմինների թե ընտանիքի անդամների կամ անձանքների կողմից, հասարակական թե անձնական ոլորտում, խաղաղ պայմաններում թե զինված հակամարտության ժամանակ... Պետությունները պարտավոր են կանանց պաշտպանել բռնությունից, պատասխանատվության ենթարկել մեղավորներին եւ ապահովել զոհերին արդարադատությամբ եւ փոխհատուցմամբ: Կանանց նկատմամբ բռնության վերացումը մեր ժամանակների կարեւորագույն խնդիրներից է»:⁴

Amnesty International-ն ընդունում է, որ սերտ ընտանեկան կապերը հայ մշակույթի անաբաժանելի եւ նվիրական բաղկացուցիչն են: Այս հաշվետվության համար հարցազրույց տված Գյումրիի ՀԿ-ի ներկայացուցչի բառերով, «մարդիկ ուզում են եւ սիրում են ընտանիքի գաղափարը Հայաստանում»: Այնուհանդերձ, Amnesty International-ն անհանգստացած է, որ հասարակության կողմից ընտանիքի պաշտպանության ետեւում թաքնվում է արմատավորված սովորույթը՝ լռություն պահպանել ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ եւ դրանց զոհերին արդարադատությունից զրկել: Արդարադատություն փնտրող կանայք բազմաթիվ խոչընդոտների են բախվում: Նրանց ստիպում են պահպանել ընտանիքի ամբողջականությունը՝ ընդունելով ընտանեկան բռնությանը որպես անձնական «ընտանեկան հարց», այլ ոչ թե իրազեկելով պետական մարմիններին, օրինակ՝ ոստիկանությանը. որպես արդյունք՝ կանայք շարունակում են բռնության ենթարկվել: Amnesty International-ը համարում է, որ չնայած պետությունները պարտավոր են պաշտպանել ընտանեկան կյանքը, սակայն դա չպետք է արվի ընտանիքում բռնության քողարկման կամ ներման հաշվին՝ անտեսելով դրա անխուսափելի հետեւանքները բռնությանը ենթարկվող կանանց, բռնության զոհ կամ դրա ականատեսը դարձող երեխաների եւ ամբողջ հասարակության համար: Ընտանեկան եւ սեռական բռնության դեմ Amnesty International-ի կողմից իրականացվող քարոզարշավը նպատակ ունի աջակցել տեղական ՀԿ-ների եւ պետական պաշտոնյաների ջանքերին՝ ապահովելով բռնությունից գերծ ընտանիքներ: Հատկապես այն պատճառով, որ ընտանեկան հարաբերությունները մեծ արժեք ունեն, ընտանիքի անդամների եւ ինտիմ զուգընկերների նկատմամբ հանցանքները պետք է կանքվեն, իսկ դրանց մեղավորները կանգնեն օրենքի առաջ ու պատժվեն:

1.2 ՆԱՆԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս գեկույցը Amnesty International-ի 2004 թվականի մարտին մեկնարկած «Վերջ դնենք կանանց նկատմամբ բռնությանը» քարոզարշավի շրջանակներում տպագրվող հրապարակումների շարքից է: Այս արշավը գենդերային բռնության հանցագործությունները լուսաբանում է որպես կանանց եւ աղջիկների՝ առանց բռնության ապրելու իրավունքի ոտնահարում: Արշավի նպատակն է ազդել աշխարհի պետությունների կառավարությունների վրա՝ համոզելով նրանց առաջնային դարձնել գենդերային բռնության վերացումը, որպես մարդու իրավունքների միջազգային օրենքով՝ կանանց եւ աղջիկների նկատմամբ խտրականության դեմ պայքարի իրենց պարտավորության կենսական բաղկացուցիչ մաս:

Չեկույցում հայկական իշխանություններին մի շարք առաջարկություններ են ներկայացվում, այդ թվում եւ օրենսդրական, ինստիտուցիոնալ եւ հանրակրթական ռազմավարության ոլորտներում բազմաշերտ մոտեցման վերաբերյալ: Հաշվետվությունը կոչ է անում հատուկ օրենք ընդունել, որը կքրեականացնի ընտանեկան բռնությունը եւ խնդրին միջգործակալական մոտեցում կցուցաբերի՝ համակարգելով ոստիկանության, առողջապահական մարմինների, իրավաբանական օգնության

Կենտրոնների եւ դատական համակարգի, ապաստարանների, ճգնաժամային կենտրոնների եւ կանանց ՅԿ-ների աշխատանքները: Ելնելով հասարակության մեջ արմատավորված վերաբերմունքից, որը կանանց նկատմամբ բռնությունը հրապարային քննարկման նյութ չի համարում, այլ՝ «ընտանեկան գործ», հաշվետվությունը խորհուրդ է տալիս կրթական եւ հանրային իրազեկման բարձրացման ուղղված միջոցառումներ ձեռնարկել՝ ընդգծելու համար, որ կանանց նկատմամբ բռնությունը անձնական հարց չէ, որի մասին պետք է լռել, այլ՝ տարածված հանցագործություն եւ մարդու իրավունքների ոտնահարում:

Այս գեկույցը հիմնված է 2007-2008 թվականներին Amnesty International-ի աշխատակիցների Չայաստան կատարած երեք այցերի ընթացում նրանց կողմից արված հետազոտությունների, ինչպես նաեւ հայկական ՅԿ-ների, գիտնականների եւ ՉԼՄ-ների կողմից տպագրված նյութերի վրա: Չեկույցի համար կատարված հարցումներն անց են կացվել մայրաքաղաք Երեւանում, Չայաստանի երկրորդ քաղաք Գյումրիում եւ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում: Այն հիմնված է կանանց հայկական ՅԿ-ների, պետական պաշտոնյաների, ոստիկանության, իրավաբանների, առողջապահության աշխատակիցների եւ լրագրողների՝ Amnesty International-ին տրամադրած տեղեկությունների վրա: Չնայած Չայաստանում գեղեցիկ բռնության մաշտաբը իրականից նվազ ներկայացնելու միտումին, պետական պաշտոնյաները հիմնականում ազատ քննարկում էին այս խնդիրը եւ պատրաստակամություն հայտնում կատարել կանանց եւ աղջիկներին պաշտպանելու մարդու իրավունքների միջազգային օրենքով Չայաստանի ստանձնած պարտավորությունները:

Դեպքերի մասին նյութերի հիմքում Amnesty International-ի՝ ընտանեկան եւ սեռական բռնության զոհերի հետ անցկացրած հարցազրույցներն են, ինչպես նաեւ հայկական ՅԿ-ների եւ լրագրողների կողմից տրամադրված այդ դեպքերի մասին պատմող դոսյեները (տես ծանոթագրությունները): Բացառությամբ նշված տեղերի, զոհերի անձը պաշտպանված է իրական անունների հետ կապ չունեցող անվան սկզբնատառերով:

1.3 ԿԱՆԱՆՑ ԴԵՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՍԱՅՄԱՆՈՒՄ

Չեկույցում օգտագործված են մի շարք տերմիններ՝ նկարագրելու համար կանանց նկատմամբ ինտիմ հարաբերություններում կամ աշխատավայրում կատարված բռնության տարբեր դրսեւորումները: Սրանք ներառում են ընտանեկան բռնություն, բռնություն ընտանիքում, բռնություն ինտիմ զուգընկերոջ կողմից, գեղեցիկ բռնություն, սեռական ոտնձգություն աշխատաքի վայրում տերմինները: Այս տերմինաբանությունը վկայում է միասնական տերմինի բացակայության փաստը, որը պատշաճ կերպով կսահմաներ բոլոր կոնտեքստներում կանանց մահվան, ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնասի հանգեցնող գործողությունները կամ վարքն այն անձի կեղմից, ում կինը, անկախ սեռից, ընտանեկան կարգավիճակից կամ բնակության վայրից, համարում է կամ համարում էր իրեն հետ ինտիմ հարաբերություն հաստատած մեկը:

Կանանց նկատմամբ բռնության վերացման ՄԱԿ-ի հռչակագիրը (UN Declaration on the Elimination of Violence against Women, DEVAW) կանանց դեմ բռնությունը սահմանում է որպես «գեղեցիկ բռնության ցանկացած գործողություն, որը հանգեցնում է կամ կարող է կնոջը ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս պատճառել՝ ներառյալ հասարակական կամ անձնական կյանքում այնպիսի գործողություններն, ինչպիսիք են սպառնալը, հարկադրումը կամ ազատությանից կամայականորեն զրկումը»: Այսպիսով, ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական բռնության դեպքերը, լինեն դրանք ընտանիքում, համայնքում թե պետության կողմից կատարված կամ խրախուսված, համապատասխանում են կանանց նկատմամբ բռնության այս սահմանմանը:⁵ Սահմանման վերջին մեկնաբանության մեջ կանանց նկատմամբ բռնությունը կարող է ներառել «զոհին տնտեսական կարիքների զրկելը»:⁶

Կանանց դեմ խտրականության վերացման կոմիտեի (Committee on the Elimination of Discrimination Against Women, CEDAW) Ընդհանուր հանձնարարական 19-ը սահմանում է գեղեցիկ բռնությունը «որպես խտրականության ձեւ, որը լրջորեն խոչընդոտում է կնոջը՝ իր իրավունքներն ու ազատությունները տղամարդկանց հետ հավասար հիմունքով վայելելուն», որն

«ուղղված է կնոջ դեմ, որովհետեւ նա կին է, կամ որը ազդում է անհամաչափորեն»:⁷ Գենդերային բռնությունը կարող է խախտել ՄԱԿ-ի Կանանց կոնվենցիայի որոշ դրույթները, անկախ նրանից, թե այդ դրույթներում հստակ նշված է բռնությունը, թե ոչ:

Ինչպես նկատել է կանանց դեմ բռնության հարցերով ՄԱԿ-ի Հատուկ գեկուցողը, «գենդերային բռնությունը վերաբերում է նաեւ նրան, թե ինչ է նշանակում լինել կին կամ տղամարդ տվյալ սոցիալական կառուցվածքում»:⁸ Որոշակի գործողությունները գենդերային որակելու համար հարկավոր է տվյալ կոնտեքստում գնահատել, թե տղամարդկանց հետ համեմատած ինչպես են կանանց վրա ազդում որոշակի գործողությունները: Այն դեպքում, երբ կանանց վրա ազդեցությունը անհամաչափորեն մեծ է, օրինակ՝ երբ համայնքի կողմից նրանք դիտվում են որպես «ամոթի» առարկա կամ երբ դատական պաշտպանությունն անհասանելի է (օրինակ՝ իրավապահները հրաժարվում են կնոջը հավատալ, երբ նա հայտնում է իր նկատմամբ բռնության մասին), կանանց նկատմամբ բռնության գործողությունները համարվում են խտրական, ինչպես նաեւ քրեական:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն ինտիմ զուգընկերոջ կողմից բռնությունը սահմանել է որպես ինտիմ հարաբերությունում ցանկացած այնպիսի վարքագիծ, որը հանգեցնում է ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական վնասի. վերջիններիս թվում են..

- Ֆիզիկական ագրեսիայի դրսեւորումները, օրինակ՝ ապտակելը, հարվածելը, աքացին եւ ծեծը,
- Հոգեբանական բռնությունը, օրինակ՝ վախեցնելը, մշտական առհամարիումը եւ նսեմացումը,
- Բռնի սեռական հարաբերությունը եւ սեռական բռնության այլ ձևերը,
- Վերահսկման տարբեր ձևերը, օրինակ՝ անձի մեկուսացումը իր ընտանիքից եւ ընկերներից, նրա տեղաշարժին հետեւելը, ինֆորմացիայի եւ օգնության մատչելիության սահմանափակումը:⁹

1.4 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԵՒ ԱՊԱՀՈՎԵԼ ԿԱՆԱՆՑ ՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը նշել է.

Պետությունները կոնկրետ եւ հստակ պարտավորություններ ունեն կանանց նկատմամբ բռնության դեմ քայլեր ձեռնարկելու ուղղությամբ՝ անկախ նրանից, թե բռնությունը կատարվել է պետական կամ ոչ պետական մարմինների կողմից: Պետությունները պատասխանատու են հենց կանանց առջեւ, իրենց քաղաքացիների եւ միջազգային հանրության առջեւ: Պետությունները պարտավոր են կանխել կանանց նկատմամբ բռնությունը, հետաքննել բռնության դեպքերը, հետապնդել եւ պատժել մեղավորներին, իսկ զոհերին տրամադրել փոխհատուցում եւ օգնություն:¹⁰

Ըստ Մարդու իրավունքների միջազգային օրենքի, պետությունները՝ ազգային կառավարություններն են կրում կանանց իրավունքները կյանքի կոչելու համար անհրաժեշտ կարույցներ ստեղծելու հիմնական պատասխանատվությունը: Հայաստանը պաշտոնապես միացել է Կանանց նկատմամբ բոլոր ձևերի խտրականության վերացման կոնվենցիային (Կանանց կոնվենցիա), ինչպես նաեւ վավերացրել մարդու իրավունքներին վերաբերող այլ պայմանագրեր, որոնք կանանց եւ տղամարդկանց հավասարություն են պահանջում մարդու բոլոր իրավունքների առումով՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական կամ մշակութային:¹¹ Միջազգային պարտավորությունների այս շրջանակում Հայաստանի կառավարությունը պարտավոր է ակտիվ քայլեր ձեռնարկել վերացնելու գենդերային բռնությունը՝ կանխելու, հետաքննելու եւ քրեորեն հետապնդելու միջոցով: Այս պարտավորությունները վերաբերում են ոչ միայն պետական մարմինների կողմից կանանց իրավունքների ոտնահարմանը, այլեւ մարդու իրավունքների խախտմանը ոչ պետական մարմինների կողմից: Այդպիսի

Խախտումներից են կնոջ իրավունքները ոտնահարող մասնավոր գործողությունները դաժան ամուսնու, այլ ինտիմ զուգընկերոջ կամ բարեկամի կողմից:

Չամաձայն մարդու իրավունքների միջազգային չափանիշների, պետությունները պետք է ամեն ջանք գործադրեն կանխելու հավասարության, կյանքի, ազատության եւ անվտանգության, խտրականությունից, խոշտագումից կամ դաժան, անմարդկային ու այլ նսեմացուցիչ վերաբերմունքից զերծ լինելու իրավունքների ոտնահարումները: Եթե պետությունները համապատասխան քայլեր չեն ձեռնարկում այսպիսի բռնությունը կանխելու կամ հետաքննելու եւ դատական հետապնդման ենթարկելու ուղղությամբ, նրանք կարող են համարվել կանանց իրավունքների ոտնահարման մեղսակից եւ այդ իրավունքները խախտող կողմ: Այդ իսկ պատճառով պետությունները, ինչպես օրինակ Չայաստանը, պետք է ակտիվ քայլեր ձեռնարկեն քաղաքական օրինագծեր, ծրագրեր, կատարողականներ, բյուջեներ եւ կիրառման մեխանիզմներ ստեղծելով, որպեսզի այս իրավունքներն իրագործվեն, անձինք այս իրավունքների ոտնահարումից պաշտպանված լինեն, իսկ այն մարդիկ, ում իրավունքները ոտնահարվել են, փոխհատուցվեն:

2. ԿԱՆԱՅՔ ԵՒ ԳԵՆԴԵՐՎՅԻՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2.1 ՀԱՅԱՍՏԱՆ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Անգամ տարածաշրջանային չափանիշներով Հայաստանի խորհրդային հանրապետությունից անկախ պետության անցումը առանձնապես ցավազին եւ դաժան գործընթաց է: Բնական աղետը, պատերազմը, փախստականների հոսքը, տնտեսական գրեթե լիակատար անկումը եւ տարածաշրջանային մեկուսացումը զգալի լարվածություն ստեղծեցին երկրի բնակչության համար, ինչն արտացոլվեց լայնածավալ արտագաղթում:

Երբ 1980-ականների վերջին Միխայիլ Գորբաչովի բարեփոխումներն ավարտվեցին, Հայաստանը թեւակոխեց իր պատմության առանձնապես բարդ եւ քաոսային ժամանակաշրջան: 1988 թվականին Սպիտակ քաղաքում տեղի ունեցած երկրաշարժը մոտ 25,000 մարդու կյանք խլեց՝ տարածքին մեծ ավերածություն պատճառելով: Այդ տարվա սկզբին պաշտոնապես Ադերբեջանի իրավասության տակ գտնվող, սակայն մեծամասամբ տեղի հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղի ինքնավար տարածքը վերահսկելու համար սկսված հայ-ադերբեջանական հակամարտության առաջին գործողությունները հանգեցրին բռնության եւ Հայաստանի եւ Ադերբեջանի միջեւ բնակչության լայն զանգվածների փոխանակման: 1991 թվականին հակամարտությունը վերածվեծ լայնածավալ պատերազմի եւ ավարտվեց 1994 թվականին, երբ Ղարաբաղի հայկական ուժերը, Հայաստանի աջակցությամբ, իրենց վերահսկողության տակ առան Լեռնային Ղարաբաղը եւ հարակից յոթ շրջանները (ամբողջությամբ կամ մասնակի):

1994 թվականից ի վեր Լեռնային Ղարաբաղի հայերը Հայաստանի աջակցությամբ պահպանում են այս տարածքների վերահսկողությունը, իսկ Ադերբեջանի հետ խաղաղ բանակցային գործընթացն առայժմ անարդյունքների չի հանգեցնում: Հակամարտության արդյունքում Հայաստանի սահմանները Թուրքիայի եւ Ադերբեջանի հետ փակվեցին, եւ այսօր էլ փակ են մնում: Հակամարտությունը հանգեցրեց նաեւ Հայաստանի եւ Ադերբեջանի էթնիկ համայնքների փոխադարձ զանգվածային արտաքսմանը, ինչի արդյունքում լայնածավալ տեղահանություններ տեղի ունեցան: Մոտ 360,000 հայեր Ադերբեջանից Հայաստան արտաքսվեցին՝ տեղահանումների թեժ փուլում կազմելով Հայաստանի բնակչության մոտ 11%-ը:¹²

Հակամարտության հետ զուգահեռ, Հայաստանի տնտեսությունը 1992-1994 թվականներին գրեթե ամբողջապես անկում ապրեց, ինչը արտագաղթի հիմնական պատճառը դարձավ: Չկարգավորված հակամարտությունը եւ Ադերբեջանի նավթային եկամուտներով պայմանավորված ռազմական ներդրումների ծավալների նկատմամբ աճող անհանգստությունը եւս զգալիորեն նպաստեցին Հայաստանում ընդհանուր անպաշտանվածության զգացողության խարացմանը: Չնայած արտագաղթը միշտ կարելուր դերակատարություն ունեցել հայ պատմության մեջ, հետխորհրդային մթնոլորտում չկարգավորված հակամարտությունն ու հումանիտար օգնությունից կախվածությունը բնակչության քանակի զգալի անկումը հասարակակն վիճակագրությունը չափազանց նուրբ հարց դարձրին:¹³

Վերջին պաշտոնական մարդահամարն անց է կացվել 2001 թվականին, ըստ որի ընդհանուր բնակչության թիվը գրանցվել է 3,213,011 մարդ՝ այդ թվում 52%-ը կանայք (1,671,012):¹⁴ Որոշ դիտորդներ այս թվերն ուճացված են համարում, որոնք հավանաբար ներառում են նաեւ Հայաստանում պաշտոնապես գրանցված, բայց իրականում այլուր բնակվող մարդկանց մի զգալի թիվ:¹⁵ Ինչեւէ, հաշվի առնելով, որ ընդհանուր բնակչության թիվը համեմատաբար վստահելի 1989 թվականին անցկացված խորհրդային մարդահամարով 3,448,600 էր, պաշտոնական վիճակագրությունն անգամ բնակչության թվի անկման ծավալների մասին որոշակի պատկերացում է տալիս: Ըստ ոչ պաշտոնական տվյալների, 1991 թվականից ի վեր մեկ միլիոն կամ ավելի հայեր են լքել երկիրը:¹⁶ Արտագաղթը հատկապես ինտենսիվ բնույթ է կրել երկրի

գյուղական բնակավայրերում. ըստ 2001 թվականի մարդահամարի, Չայաստանի ընդհանուր բնակչության 64%-ը քաղաքաբնակներ են: Ավելին, քանի որ Չայաստանից չգրանցված տնտեսական պատճառներով գաղթողների մեծամասնությունը ենթադրաբար տղամարդիկ են, կանայք ըստ վիճակագրության կազմում են բնակչության ավելի քան 52%-ը: Որոշ կանանց խմբերի ղեկավարների կարծիքով կանայք Չայաստանի *de facto* բնակչության 60%-ն են կազմում:¹⁷

Աշխարհի էթնիկ հայ բնակչության միայն փոքր մասը (մոտ մեկ հինգերորդը) է ապրում Չայաստանում: Գոյություն ունի մոտ ութ միլիոնանոց մեծ հայկական սփյուռք, որն ապրում է գերազանցապես Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Միջին Արևելքում եւ Լատինական Ամերիկայում: Սփյուռքը կենսական դեր է խաղում Չայաստանի տնտեսական գոյատևման մեջ՝ ներդնելով իր անդամների դրամային փոխադրումները ու մասնագիտական փորձը:

Չայաստանի այժմյան կառավարությունը, որը գլխավորում է Նախագահ Սերժ Սարգսյանը, ընտրվել է 2008 թվականի փետրվարին անցկացված վիճարկելի ընտրություններում, որոնք Երեւանում զանգվածային ցույցերի պատճառ դարձան: Այս ցույցերն ուժի կիրառամբ ցրվեցին մարտի 1-ին՝ հանգեցնելով ութ ցուցարարների եւ երկու անվտանգության ծառայողների մահվան (ըստ պաշտոնական տվյալների), ինչին հետեւեցին Սերժ Սարգսյանի հիմնական մրցակցի՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի ընտրարշավի հետ առնչություն ունեցող անձանց զանգվածային ձերբակալությունները:

2.2 ԿԱՆԱՅՔ ՉԵՏՆՈՐՉՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Այստեղ բոլորն ուզում են որդիներ ունենալ: Կնոջ ազդեցությունը կախված է նրանից, թե քանի որդի նա ունի:*¹⁸

Պետական կառույցների թուլացումը, իսկ որոշ դեպքերում նաեւ անհետացումը, տնտեսական դժվարությունների հետ մեկտեղ տարբեր ձևով ներգործել են Չայաստանի կանանց վրա: Մի կողմից, ընտանիքը եւ ոչ ֆորմալ սեկտորը նոր կարելություն ձեռք բերեցին՝ որպես աջակցման ֆորմալ կառույցների կենսականորեն անհրաժեշտ այլընտրանք: Սա կանանց դրեց մի իրավիճում, երբ ավանդույթը թելադրում է, որ նրանք ընտանիքի հենքն են, պատասխանատու են երեխաների դաստիարակման եւ ավանդական արժեքների փոխանցման համար, իսկ գոյատևելու անհրաժեշտությունը ասում է, որ կանայք նույնպես պետք է դառնան օրվա հացի փող վաստակողներ:¹⁹ Գյուղացի կանայք հատկապես զգում են բազմաթիվ պարտավորությունների այս ծանրությունը, քանի որ տղամարդիկ աշխատանք փնտրելու նպատակով գաղթել են քաղաք կամ արտերկիր:

Այս հաշվետվության համար անցկացված հետազոտության ժամանակ Amnesty International-ին հաճախ են պատմել հայ պատմության մեջ կանանց կարելու դերի եւ հավասարության բնատուր ավանդույթների մասին: Այդ թվում այն, որ Չայաստանի կանայք Եվրոպայում առաջիններից էին, որ ստացան քվեարկելու իրավունք Չայաստանի դեմոկրատական հանրապետությունում (1918-1920), որոշ արեւելաեվրոպական պետությունների կանանցից տասնամյակներ առաջ, իսկ բարձրագույն կրթությամբ կանանց թիվը Խորհրդային Չայաստանում միջինից զգալիորեն բարձր էր: Ընտանիքում հայերի վերաբերմունքը գենդերային դերերին արտահայտված է պետական պաշտոնյայի ամփոփիչ խոսքերում. «Եթե ամուսինը ընտանիքի գլուխն է, ապա կինը վիզն է. վիզն ուր պտտի, գլուխն այնտեղ պիտի գնա»:

Այնուամենայնիվ, պատմական այս նախադեպերը կամ մշակութային արժեքները չեն արտացոլում կանանց ներկայացվածությունը ժամանակակից Չայաստանում: Վերոնշյալ ավանդույթներին զուգահեռ կանանց մասին կարծրատիպերը՝ կապված կուսության, մայրության եւ ընտանեկան արժեքների հետ, «ավանդական» օժանակ դերեր են հատկացնում կանանց կամ ստիպում վերաբերվել նրանց՝ որպես «մշակութային ինքնության օրրանների»:²⁰ Ինչպես երեւում է ամսագրում տպագրված հայ հաջողակ գործարար կնոջ հետ հարցազրույցի քաղվածքից, կանանց որպես կանոն հորդորում են իրենց ազգոհության գնալ՝ հանուն ընտանիքի եւ ազգի բարօրության. «Ես կարծում եմ, որ կնոջ ամենակարելուր գիծը դա անձնագոհությունն է: Կինը ինքն իրեն զոհում

Է, երբ երեխա է ունենում եւ մեծացնում նրան: Նա զոհում է իր շահերը հանուն իր ամենամտերիմ անձի...»: ²¹

Հայկական օրենսդրությունը ընդհանուր առմամբ ամրագրում է հավասարության եւ ոչ խտրականության սզկբունքները: Հայաստանի Սահմանադրությունը (Հոդված 14.1) եւ այլ փաստաթղթերը երաշխավորում են իրավունքներն առանց խտրականության: Սակայն չկան օրենքներ, որոնք հստակ սահմանեն կամ արգելեն գենդերային խտրականությունը, եւ իրականում խտրականությունն ակնհայտ է բազմաթիվ ոլորտներում: Օրինակ, այն մասնագիտություններում, որտեղ կանանց թիվը բարձր տոկոս է կազմում, շատ քիչ կանայք են զբաղեցնում մենեջերի կամ տնօրենի պաշտոն: ²² Կրթության ոլորտում ուսուցիչների 80%-ը կանայք են, իսկ ամենաբարձր պաշտոններում տղամարդիկ: Նմանատիպ իրավիճակ է նաեւ բուհերում. չնայած համալսարանավարտ կանանց թիվը երկու անգամ գերազանցում է տղամարդ շրջանավարտներին, տղամարդիկ անհամամասնորեն ավելի հաճախ են զբաղեցնում համալսարանի պրոֆեսորի, դասախոսի եւ ռեկտորի պաշտոնները: ²³

Չնայած կանայք բնակչության մեծամասնությունն են կազմում, նրանք վատ են ներկայացված քաղաքականության մեջ եւ շատ հազվադեպ են նշանակվում բարձրաստիճան կառավարական պաշտոններում կամ դիվանագիտական կորպուսում: Ազգային ժողովի 2003-2007 կազմում 131 պատգամավորից յոթն էին կին. Նույն ժամանակաշրջանում կառավարության կազմի 16 նախարարներից միայն մեկն էր կին: Հայաստանի Ընտրական օրենսգիրքը, որը փոփոխվեց 2007-ի խորհրդարանական ընտրություններից առաջ, նախատեսում է, որ կանայք պետք է կազմեն կուսակցության կամ դաշինքի թեկնածուների համամասնական ցուցակի 15%-ը, եւ որ կինը պետք է զբաղեցնի ցուցակի յուրաքանչյուր տասներորդ տեղը: Այնուհանդերձ, կանանց ներկայությունը 2007 թվականի ընտրարշավում չափազանց ցածր էր, եւ արդյունքում խորհրդարանի պատգամավոր ընտրվեցին միայն 12 կին: ²⁴ Տեղական կառավարման մարմիններում իրավիճակը նույնիսկ ավելի վատ է. 2006 թվականին 926 գյուղապետերից կամ քաղաքապետերից միայն 15-ն էին կին (1,6%-ը): ²⁵

Այս վիճակագրության ետեւում սոցիալական վերաբերմունքն է, որն ընդդիմանում է կանանց առավել ակտիվության գաղափարին՝ իրենց «ավանդական» դերից դուրս: 2004 թվականին հրատարակված IFES-ի հետազոտությունը ցույց է տալիս, որ չնայած հայերի մեծամասնությունը համարում է, որ կանայք պետք է ընդգրկված լինեն ընտանեկան կյանքում, կրթության եւ առողջապահության մեջ, մեկ տասներորդից պակաս մասն է կարծում է, որ կինը պետք է ներգրավված լինի կառավարությունում, քիզնեսում կամ ռազմական ոլորտում: ²⁶ Այս վերաբերմունքն արտացոլված է կանանց հարցերով զբաղվող կառավարական գործակալությունների կառուցվածքում. կանանց վերաբերվող կառավարական քաղաքականությունը հիմնականում դիտում է խնդիրը *ընտանեկան* քաղաքականության տեսանկյունից: ²⁷ Այս մոտեցումը ընդգծում է, որ ընտանիքի պաշտպանությունը վեր է մարդու իրավունքներից եւ դրա առանձին անդամների բարօրությունից, իսկ ընտանիքում բռնության դեպքերում խոչընդոտում է արդարադատության իրականացմանը:

2.3 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՐՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ

«Կանանց նկատմամբ բռնության խնդիրը Հայաստանում լիովին արգելված թեմա է: Պորբլեմի հանրային քննարկումը դիտվում է որպես ընտանիքի քայքայման փորձ»: ²⁸

Տարբեր երկրներում կատարված հետազոտությունները հետեւողականորեն ցույց են տալիս, որ ավելի մեծ է հավանականությունը, որ կանանց վրա հարձակվեն, վնասեն, բռնաբարեն կամ սպանեն իրենց ներկա կամ նախկին զուգընկերները, քան մեկ այլ անձ: 48 հետազոտությունների հիման վրա Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (WHO) եկել է այն եզրակացության, որ կանանց 10-ից 69%-ը հայտնում են, որ առնվազն մեկ անգամ ֆիզիկական բռնության են ենթարկվել ինտիմ զուգընկերոջ կողմից: ²⁹ Հետազոտությունը ցույց է տալիս նաեւ, որ ֆիզիկական բռնությունը հաճախ ուղեկցվում է հոգեբանական ճնշումով, իսկ դեպքերի 1/3-ից 1/2-ում՝ սեռական բռնությամբ: ԱՀԿ-ն եզրակացնում է, որ «[այն] փաստը, որ կանայք հաճախ

հուզականորեն կապված են եւ տնտեսապես կախյալ իրենց ճնշողներից, մեծապես կապված է բռնության դիսամփկայի եւ դրա դեմ պայքարելու մոտեցումների հետ»:

Վերջին տարիներին կատարված մի շարք հետազոտություններ եւ վիճակագրական հարցումներ Չայաստանում ընտանեկան բռնության մասին հստակ ապացույցներ են ներկայացնում եւ որոշակի պատկերացում տալիս վերջինիս տարածվածության մասին: Վիճակագրական հարցումները թերի են, բայց այնուհանդերձ ցույց են տալիս, որ ընտանեկան բռնությունը Չայաստանում լայն տարածում ունի: 2000 թվականին «Միննեսոտայի մարդու իրավունքների փաստաբաններ» (The Minnesota Advocates for Human Rights) կազմակերպությունը՝ իրավաբանների, առողջապահության աշխատակիցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների եւ ընտանեկան բռնություն վերապրածների հետ հարցազրույցների հիման վրա Չայաստանում ընտանեկան բռնության բազմաթիվ որակական ապացույցներ ի հայտ բերեց:³⁰ 2001 թվականին «Սոցիոմետր» հետազոտական կենտրոնի կողմից «Կանանց իրավունքների կենտրոն» ՉԿ-ի հետ համատեղ՝ 1200 կանանց շրջանում անցկացված ուսումնասիրության արդյունքները որոշ քանակական ապացույցներ են ներկայացնում: Այս ուսումնասիրության համաձայն՝ հարցվածների 45,7%-ը ենթարկվել է հոգեբանական ճնշման, 28%-ը՝ ֆիզիկական, 20,2%-ը՝ սեռական ոտնձգության եւ 5.3%-ը՝ սեռական բռնության:³¹

Ընտանեկան բռնության հանդեպ որոշակի վերաբերունքի մասին տվյալները ներառվել են 2006 թվականին ՉԿ կառավարության Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակված ժողովրդագրական եւ առողջապահական հարցման մեջ:³² Չարցմանը մասնակցած ավելի քան 6500 կանանց 22%-ը ընդունել է ամուսնու կողմից կնոջ ծեծը արդարացնող մի քանի պատճառներից առնվազն մեկը. այս թիվը հարցմանը մասնակցած գյուղաբնակների շրջանում հասնում է մոտ 1/3-ի, իսկ քաղաքային կանանց շրջանում՝ իջնում 15%-ի:³³ Բարձրագույն կրթություն ունեցող կամ աշխատավարձ ստացող կանայք ցանկացած պարագայում ընտանեկան բռնությունն ավելի քիչ են արդարացնում : Չարցմանը մասնակցած տղամարդկանց 31%-ը համաձայնվել է կնոջ ծեծը արդարացնող մեկ պատճառի հետ: Այդպիսով, տղամարդիկ կնոջ ծեծը արդարացնող ավելի շատ հանգամանքներ են տեսնում: Նախորդ՝ 2000 թվականին անցկացված ժողովրդագրական եւ առողջապահական հարցման հետ համեմատ ընտանեկան բռնությունը արդարացնողների տոկոսը երկու սեռերի մոտ էլ նվազել է:

Ավելի մանրամասն քանակական տվյալներ են հրապարակվել «Կանանց իրավունքների կենտրոն» ՉԿ-ի պատվերով Չայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրփանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոնի կողմից 2007 թվականին կատարված ուսումնասիրության մեջ, որի հարցումներին մասնակցել են 1006 կին:³⁴ Չարցման արդյունքները ցույց են տվել, որ հարցվածների 66%-ը ենթարկվել է հոգեբանական ճնշման (46%-ը «հաճախ» կամ «երբեմն»): Գրեթե բոլոր հարցվածները (95%-ը) համարում են, որ հոգեբանական ճնշումը հավասարազոր է ֆիզիկական ճնշման: Չարցվածների 27%-ը հայտնել է, որ ենթարկվել է «միջին» (16 %-ը «հաճախ» կամ «երբեմն»), իսկ 12%-ը «դաժան» ֆիզիկական ճնշման (6%-ը «հաճախ» կամ «երբեմն»):³⁵ Ֆիզիկական բռնության դեպքերի 85%-ի մեղավորները ամուսիններն են, իսկ 10%-ինը՝ սկեսուրներ:

Չետազոտությունը ցույց է տվել նաեւ ընտանեկան բռնության հասարակական քննարկման հանդեպ դիմադրություն. հարցվածների 88%-ը համարում է, որ ընտանեկան բռնության դեպքերն ընտանիքի ներսում որպես անձնական խնդիր լուծելն առավել արդյունավետ է, քան այն՝ պետական մարմինների միջամտությամբ: Բռնության ենթարկվածների միայն 29%-ն է օգնության դիմել, մեծ մասամբ ընտանիքի անդամներից: Չարցվածները ընտանեկան բռնությունը վերագրեցին մի շարք պատճառների՝ ներառյալ թմրանյութերի եւ ալկոհոլի, աղքատության (չեշտելով աշխատանքի հանկարծակի կորուստը կամ ֆինանսական խնդիրները), կանանց եւ տղամարդկանց միջեւ անհավասարության, կրթության ցածր մակարդակի եւ ընտանեկան կյանքում բռնության նախկին դեպքերի առկայության: Չարցվածներից քաղաքայինների եւ գյուղաբնակների միջեւ հիմնական ցուցանիշների առումով վիճակագրական էական տարբերություն չի նկատվել:

Այս հարցումներն առաջին անգամ ի հայտ են բերում Չայաստանում ընտանեկան բռնության

տարածվածության հիմնավոր ապացույցներ, եթե ոչ խնդրի իրական մաշտաբի ամբողջական պատկեր: «Կանանց իրավունքների կենտրոնի» հարցումները, ինչպես նաև կանանց ՀԿ-ների ներկայացուցիչների հետ հարցազրույցներն ապացուցում են, որ Հայաստանի կանայք չեն տարբերակում ընտանեկան բռնությունը ֆիզիկական բռնությունից, որը եւ հանգեցնում է նրանց՝ մարդու իրավունքների ոտնահարմանը: Ավելի շուտ, հայ կանայք ընտանեկան բռնությունը «սովորական» ֆիզիկական բռնություն են համարում: Հարցման հեղինակները գրում են.

«Թե՛ հոգեբանական եւ թե՛ ֆիզիկական բռնության դեպքերը, որոնք հարցվածները ներկայացրել են բռնության եւ ճնշման տեսակները մատնանշող ցանկ ներառող ինքնուրույն լրացման համար նախատեսված բաժիններում, միանգամայն այլ պատկեր են ի հայտ բերում. [նախնական պատասխաններից, ըստ որոնց հարցվածները չեն ենթարկվել ընտանեկան բռնության], որի համաձայն գրեթե 30%-ն իրենց ֆիզիկական բռնության գոհ է համարում: Հավանաբար խնդիրն այն է, որ հայ կանայք չեն կարողանում ընտանեկան բռնությունը եւ ճնշումը որպես ընդհանուր հասկացություններ սահմանել».³⁶

Կանանց ՀԿ-ների ներկայացուցիչները նշում են նաև, որ չկա ընտանեկան բռնության հստակ հասկացություն: Ըստ «Կանանց իրավունքների կենտրոնի» ՀԿ-ի ղեկավար Սուսաննա Վարդանյանի՝ շատ կանայք, օրինակ, կարծում են, որ ընտանեկան բռնությունը դա միայն ֆիզիկական ծեծն է եւ չի ներառում հոգեբանական ու տնտեսական այլ դրսեւորումներ:³⁷ Այս պատկերացումները, ինչպես նաև այդպիսի ճնշման ենթարկված կնոջ կողմից ամոթը, նպաստում է այն բանին, որ ընտանեկան բռնության մասին չեն հայտնում կամ հազվեդեպ են հայտնում:

Շնորհիվ այս հետազոտությունների ու երկրորդ մեկ այս հարցերով զբաղվող ՀԿ-ների ի հայտ գալուն, կանանց դեմ բռնության նկատմամբ պետական պաշտոնյաների մեծողական վերաբերմունքը վերջին տասնամյակում վերափոխվել է առկա խնդրի գիտակցման:³⁸ Սա էական է ողջունելի փոփոխություն է, չնայած շատ պաշտոնյաներ դեռ փորձում են նվազեցնել խնդրի տարածվածության իրական ծավալները: Սուսաննա Վարդանյանի խոսքերով՝ «մենք պետք է հաղթահարենք անտեղյակությունն ու փաստի նկատմամբ մերժողական վերաբերմունքը»:

2.4 ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

«Բռնաբարության զոհերը հասարակության կողմից մեղավոր են դիտվում».³⁹

Բռնաբարությունը եւ սեռական բռնության այլ ձևերը հանդիսանում են կանանց իրավունքների ոտնահարում եւ առավել հաճախ կատարվում են ամուսինների կամ ինտիմ զուգընկերների կողմից: Ընտանեկան բռնությունը հաճախ ներառում է բռնաբարությունը եւ սեռական բռնության այլ ձևերը: Բռնաբարությունը հայ հասարակության կողմից խստորեն դատապարտվում է, բայց բռնաբարությունը եւ սեռական բռնությունը ինտիմ զուգընկերոջ կողմից մնում է խստորեն արգելված եւ շատ հակասական թեմա: Ամուսնական բռնաբարությունը Հայաստանի օրենքով հստակ սահմանված չէ որպես քրեական հանցագործություն, իսկ հասարակության վերաբերմունքն այն է, որ կինը պետք է հնազանդվի զուգընկերոջ սեռական պահանջներին: Կանանց ՀԿ-ների ներկայացուցիչները պատմեցին Amnesty International-ին, որ ինտիմ զուգընկերոջ կողմից բռնաբարված կամ սեռական բռնության ենթարկված կանայք շատ քիչ հավանական է, որ հայտնեն ոստիկանությանը այս հանցագործության մասին: Նույնիսկ եթե կինը հայտնի ոստիկանությանը բռնաբարության մասին, նա բախվում է արմատացած վերաբերմունքի, որ մեղավորն ինքն է:

Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակված ժողովրդագրական եւ առողջապահական վերոնշյալ հարցումը պարզեց նաև կարծիքները, թե ինչ պայմաններում կինը կարող է հրաժարվել ամուսնու հետ սեռական հարաբերությունից, ընդ որում կանանց եւ տղամարդկան կարծիքները հիմնականում համընկում են: Կանանց 44%-ը եւ տղամարդկանց 45%-ը համաձայն չեն, որ երեք տրված հանգամանքներում կինը կարող է արդարացված հրաժարվել հարաբերությունից:⁴⁰ Երիտասարդ կանանց մեծ մասը նշեց, որ ճնշում են զգում պարտադրաբար սեռական հարաբերություն ունենալ, քան այլ տարիքային խմբերը, իսկ 15-ից 19 տարեկանների

խմբի 28%-ը կնոջը չեն արդարացնում նշված ցանկացած հանգամանքներում սեռական հարաբերությունից հրաժարվելը:⁴¹

2.5 ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՃԳՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐՈՒՄ

Հայաստանում կանայք աշխատանքի վայրում հաճախ ենթարկվում են սեռական ոտնձգության, ընդ որում երիտասարդ կանայք եւ պետական համակարգում աշխատողներն ամենախոցելի են:⁴² «Սոցիոմետր» հետազոտական կենտրոնի կողմից 2004 թվականի դեկտեմբերին անկացված հարցումը ցույց տվեց, որ Երեւանում եւ Շիրակի, Լոռիի եւ Արագածոտնի մարզերում հարցվածների մոտ 64%-ը ենթարկվել է սեռական ոտնձգության աշխատանքի վայրում:⁴³ Հարցման արդյունքում պարզվեց նաեւ, որ հինգ կանացից մեկը սեռական ոտնձգության պատճառով ստիպված է եղել աշխատանքից հեռանալ, իսկ 5%-ը ստիպված է եղել ղեկավարող պաշտոն ունեցող տղամարդու հետ անցանկալի հարաբերություն ունենալ, որպեսզի պահպի իր աշխատանքը: Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ պետական կազմակերպություններում աշխատող կանայք առավելագույնս խոցելի են, ինչպես եւ կանայք, որոնք հետաձգել են ամուսնությունը իրենց կարիերան զարգացնելու նպատակով: ՀԿ-ների ներկայացուցիչները Amnesty International-ին պատմեցին որ սեռական ոտնձգությունը տարածված պրոբլեմ է իրենց աշխատողների եւ կամավորների, ինչպես նաեւ բուհերի ուսանողուհիների շրջանում:

2.6 ԹՐԱՖԻԿՆԳ

Մի շարք ուսումնասիրություններ եւ հետաքննական լրագրողական հաշվետվություններ ապացուցում են, որ Հայաստանը հիմնականում անկանոն միգրացիայի սկզբնաղբյուր հանդիսացող կարեւոր երկիր է, ներառյալ կանանց եւ աղջիկների թրաֆիկինգը, եւ շատ ավելի փոքր մաշտաբով՝ նաեւ տարանցիկ երկիր: Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) 2001 թվականի ուսումնասիրությունը եզրակացնում է, որ տնտեսական դժվարությունները եւ արմատացած գեղեցիկի դեմաքաջիումն ու անհավասարությունը Հայաստանից կանանց թրաֆիկինգի հիմնական շարժիչ ուժերն են:⁴⁴ Հայաստանից թրաֆիկինգի հիմնական ուղղությունները Միացյալ արաբական Եմիրություններն են եւ Թուրքիան:

2004 թվականից սկսած հետաքննող լրագրողների «Յետք» միությունը ուսումնասիրել է խնդիրը եւ հրապարակել մի շարք հոդվածներ, որոնք բացահայտել են Հայաստանից թրաֆիկինգի ցանցերը, եւ Միացյալ Արաբական Եմիրություններ փոխադրված հայ կանանց ճակատագրերը:⁴⁵ Չնայած 2005 թվականին թրաֆիկինգի վերաբերող մոտ 30 գործ է բացվել Հայաստանի Գլխավոր դատախազի գրասենյակի կողմից, ԱՄՆ պետդեպարտամենտը թրաֆիկինգի 2006 թվականի հաշվետվության մեջ քննադատել է հայկական իշխանություններին մեղմ պատժամիջոցների կիրառելու եւ թրաֆիկինգում պաշտոնական մեղսակցության շարունակ ստացվող մեղադրանքների համար:⁴⁶

Հայաստանի կառավարության, միջազգային եւ հասարակական կազմակերպությունների հովանավորությամբ այժմ իրականացվում են մի քանի ծրագրեր: Երկու ՀԿ-ների աջակցությամբ գործում են թրաֆիկինգի զոհերի համար նախատեսված երկու ապաստարաններ, որտեղ տրամադրվում է հոգեբանական աջակցություն, բուժում եւ, ըստ ցանկության, իրավաբանակ օգնություն:⁴⁷ 2003-2007 թվականներն ընկած ժամանակահատվածում այս երկու ծրագրերն աջակցել են ընդհանուր առմամբ 92 մարդու, իսկ 2004 թվականին թրաֆիկինգի զոհերի համար նախատեսված երկու «թեժ գծերով միջուկ» 2006 թվականի հունիս ամիսը ստացվել է 3,719 զանգ: Երկու «թեժ գծերն» էլ ֆինանսավորման պակասի պատճառով դադարեցին գործելուց:⁴⁸

Ընտանեկան բռնության ենթարկվելու եւ թրաֆիկինգի զոհ դառնալու վտանգի միջեւ կապը առայժմ մնում է ուսումնասիրման առարկա: Թրաֆիկինգի դեմ պայքարի եւ մարմնավաճառների ոլորտում աշխատող հայկական ՀԿ-ների ներկայացուցիչները համարում են, որ այս երեւույթները փոխկապակցված են: Մարմնավաճառների հետ աշխատող մի ՀԿ Amnesty International-ին պատմեց, որ իրենց ծրագրով աջակցություն ստացած բոլոր կանայք եղել են ընտանեկան կամ սեռական բռնության զոհ: Այս կազմակերպության փորձը նույնպես ցույց է տալիս, որ ընտանեկան բռնությանը ենթարկվելու եւ թրաֆիկինգի զոհ ու մարմնավաճառությամբ զբաղվելու միջեւ գոյություն ունի կապ:⁴⁹ Հետազոտությունը ցույց տվեց նաեւ, որ

ամուսնալուծվածներն ավելի հաճախ կարող են թրաֆիկինգի զոհ դառնալ՝ հիմնականում այն պատճառով, որ ավելի մեծ տարիքի միայնակ կանայք աշխատանքային շուկայում առավել մեծ դժվարությունների են հանդիպում:⁵⁰

3. ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՊՐԵԼԸ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱՆՑ ՓՈՐՁԸ

«Կինը բուրդ է. ինչքան ծեծես, էնքան կփափկի»:
Հայկական ժողովրդական ասացվածք

Ինտիմ զուգընկերների եւ ընտանիքի անդամների կողմից կանանց նկատմամբ բռնությունը ընդգրկում է մի շարք գործողություններ՝ վիրավորանքից մինչեւ հոգեբանական բռնություն, մեկուսացում ու տնտեսական միջոցներից զրկում, ֆիզիկական եւ սեռական բռնություն եւ որոշ դեպքերում նաեւ սպանություն:

Հայաստանում կանանց նկատմամբ բռնությունը հաճախ տեղի է ունենում մեծ ընտանիքներում: Մեծ, այլ ոչ «միջուկային» ընտանիքները տարածված են հատկապես գյուղական վայրերում, որտեղ մի քանի սերունդներ կարող են ապրել նույն հարկի տակ: Մասամբ սա ավանդույթ է. մեկ որդի ունեցող տանը տղան սովորաբար ապրում է ծնողների հետ մինչ իրենց մահը: Երբ կան մի քանի որդիներ, ծնողների տանը պետք է մնա ամենամեծը: Այս պարագայում տղամարդկանց վրա մեծ սոցիալական ճնշում կա, որպեսզի նրանք կանանց հետ մնան ծնողների տանը: Տնտեսական պատճառները հաճախ նույնպես դրդում են երիտասարդ նորապսակներին երկար ժամանակ ապրել ծնողների հետ, եւ այդպես, ըստ մի հայ սոցիոլոգի, «հիմնականում բոլոր հարսներն էլ որոշ ժամանակ ապրում են իրենց ամուսնու ծնողների հետ»:⁵¹

Հետագա բաժիններում ներկայացված են կանանց նկատմամբ բռնության ապացույցները, հիմնված ընտանեկան եւ սեռական բռնություն վերապրածների հետ Amnesty International-ի հարցազրույցների եւ այն դեպքերի պատմությունների վրա, որոնք հավաքագրել են ՀԿ-ներն ու լրագրողները (վերջինները նշված են ծանոթագրություններում): Հարցազրույց տված բոլոր կանայք դիմել էին կանանց ՀԿ-ներին՝ խնդրելով օգնել իրենց խուսափել գեղեցիկ բռնությունից: Չնայած մի քանի կանայք բարեհաջող լքեցին իրենց բռնության ենթարկող վաղեմի զուգընկերներին, այլոք դա չարեցին: Քանի որ պետությունը չապահովեց նրանց աժանդակ ծառայություններով եւ կառույցներով, ինչպես օրինակ այլընտրանքային բնակատեղիով կամ աշխատանք գտնելու աջակցությամբ, այս կանայք շարունակեցին վտանգավոր համակեցությունը իրենց իրավունքները ոտնահարողների հետ, երբեմն նույնիսկ ապահարզանից հետո: Բացառությամբ հատուկ նշված տեղերի, հարցազրույցին մասնակցած անձանց ինքնությունը գաղտնի պահվում:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Հոգեբանական բռնությունը Հայաստանի Զրեական օրենսգրքով հանցագործություն չի համարվում: Այն կարող է արտահայտվել բազմաթիվ ձևերով: Կանանց իրավունքների կենտրոնի հարցման մեջ հոգեբանական բռնության սահմանումը ներառում է ահաբեկումը, բռնությունը, ծղրտալը կամ անպատվելը, կնոջ տեղաշարժի սահմանափակումը, հեռախոսն օգտագործելու կամ ընկերների, ընտանիքի կամ տնից դուրս հասարակության հետ շփվելու արգելքը, համապատասխան ֆինանսական միջոցներից զրկելը, ուրիշների առջեւ քննադատելը/լռեցնելը, երեխաների վրա բռնություն կամ սպառնալը:⁵² Հարցվածների 66%-ը հայտնեց, որ ենթարկվել է հոգեբանական բռնության. 95%-ը կարծում է, որ հոգեբանական բռնությունը նույնքան վնաս է հասցնում, որքան ֆիզիկական բռնությունը:

Ես 18 տարեկան էի, երբ ամուսնացա եւ ամուսնուս ճանաչում էի միայն մի շաբաթ: Ես ծնվել եմ գյուղում, Երեւան տեղափոխվեցի ամուսնուս հետ ապրելու: Իմ սկեսրայրը արդեն ծանր հիվանդ էր, երբ ամուսնացա. ամուսնուս քույրը 30 տարեկան էր, բայց դեռ ամուսնացած չէր ու նույնպես ապրում էր մեզ հետ: Հենց սկզբից այս տանը ինձ օտար զգացի: Բոլորն առավոտյան աշխատանքի էին գնում, ես մնում էի ամբողջ օրը սկեսրոջս հետ: Խնամում էի նրան, օրը երկու անգամ ոտքերը լվանում, լվանում նրա շորերը: Տանը ամենինչ անում էի, սկեսրոջս կերակրում: Երբ ամուսինս գալիս էր տուն, հետս չէր խոսում, միայն քրոջ հետ էր զրուցում, երբ նա

վերադառնում էր: Ես առիամարիված էի: Երբեք որեւէ հարաբերություն չեմ ունեցել ամուսնուս հետ... Նա ինձ միշտ հիշեցնում էր, որ բարձրագույն կրթություն չունեմ, չնայած դրա մասին նա գիտեր ինձ հետ ամուսնանալուց առաջ: (Գ.Լ.)

Մի քանի կանայք պատմեցին, որ ամուսինները անընդհատ փորձում էին սահմանափակել իրենց տեղաշարժը կամ ընտանիքի ու ընկերների իրենց շփման չափը:

Շատ խանդոտ մարդ էր, շատ կրքոտ ու գուցե նույնիսկ հոգեբանական խնդիրներ ուներ: Ես իրավունք չունեի որեւէ բան ասելու, որեւէ որոշում ընդունելու: Տան մեջ ստիպված էի նրանից խուսափել, այլ սենյակում լինել: Երեխաների աչքի առաջ ինձ ծեծում էր ու երեխաներին էլ էր ծեծում: (Դ.Մ.)

Մեր մոտ ամենինչ լավ սկսվեց: Ժամանակի ընթացքում սկսեցի հասկանալ, որ ամուսինս սեփականատիրական շատ մեծ զգացում ունի, ոչ թե հայ տղամարդկանց սովորական խանդ, այլ աննորմալ, հիվանդագին: Նա չէր սիրում, երբ մենակ ինչ-որ տեղ էի գնում՝ փողոց, հիվանդանոց, խանութներ, պոլիկլինիկա: Ամուսնուս վարքի մասին խոսելու համար գնացի հոգեբույժի մոտ: Նա ասաց, որ ամուսինս հաստատ պրոբլեմ ունի, բայց դա բուժելի է: Երբ պատմեցի ամուսնուս, թե ինչ է ասել հոգեբույժը, ասաց որ հիվանդը ես եմ, ես էլ պիտի բուժվեմ: (Կ.Դ.)

Բռնության համատեքստից արդեն վաղուց դուրս եկած կանայք վկայում են այն երկարաժամկետ հոգեբանական ազդեցության մասին, որը թողնում է բռնության ենթարկված լինելը:

Ես ամաչում եմ, որ ինչ-որ մեկը կարող էր իմ դեմ ուժ կիրառել, ամաչում եմ դրանից: Ահա սա էի միշտ ասում խորհրդատուին, երբ ապաստարանում էի. ինձ մի բան է տանջում, ես ունեմ մեկ հիմնական հոգեբանական խնդիր: Ինչպե՞ս կարող էի թույլ տալ, որ ինչ-որ մեկն ինձ հետ այդպես վարվեր: Սա ինձ հետապնդելու է մինչեւ կյանքիս վերջը, ինչպե՞ս թույլ տվեցի, որ դա պատահի: Բանն այն է, որ ես ընտրություն չունեի: (Փ.Ն.)

ՄԵԿՈՒՄԱՑՈՒՄ ԵՒ ՎԵՐԱՅՍԿՈՒՄ

Մի քանի կանայք «Միջազգային Համաներմանը» պատմեցին, որ ամուսինները կամ զուգընկերները փորձում էին մեկուսացնել ու վերահսկել իրենց, զրկելով տնտեսական կարիքներից՝ փողից սկսած մինչեւ սնունդը:

Ամուսինս նաեւ կահույք է վերանորոգում տանը՝ ավելի շատ փող աշխատելու համար: Նա կիսեց բնակարանը ու երկու սենյակը հաճնեց տնվորի: Տնվորը նույնպես ուներ հեռախոսի գիծ, անպես որ ես չէի կարող օգտագործել հեռախոսն առանց նրա թույլտվության: Ամուսինս օգտագործում է բջջայինը, իսկ տնվորը՝ հիմնական հեռախոսագիծը: Եւ այդպես յոթ տարի շարունակ: Մերը երեք սենյականոց բնակարան է, եւ ես մի սենյակը կիսում եմ ամուսնուս, երկու որդիներին եւ նրա կահույքի արհեստանոցի հետ: Մեծ տղաս ութ տարեկան է: Ամուսինս երբեք ինձ փող չի տվել: Միայն իմ բարեկամները, ծնողներս, ընկերներն ու հարեւաններն են օգնել ինձ փողով: Բայց ամուսինս ակնկալում է, որ ամեն օր պետք է նրա համար ուտելիք պատրաստեմ: Ասում է, որ եթե ինձ դուր չի գալիս իր հետ ապրելը, պիտի իրերս հավաքեմ ու գնամ: Որդիների հետ չի շփվում, նրանց մասին չի հոգում, ոչ մի տեղ չի տանում: Երբ տղաս 2,5 տարեկան էր ու հիվանդացավ, բոլոր բժիշկները զարմացել էին, թե ինչքան ցածր է նրա կալցիումի մակարդակը: Նա թերսոված էր, որովհետեւ ամուսինս հրաժարվել էր մեզ աջակցել: (Գ.Լ.)

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

Ես ամուսնացա ու ընկա շատ մեծ ընտանիք, որտեղ ապրում էին մի քանի սերունդ, եւ բոլորս ապրում էինք միասին: Ամուսինս շատ էր խմում եւ տուն էր գալիս շատ ուշ ու սկսում կռվել բոլորի, ոչ միայն ինձ հետ՝ ծնողների, տատիկի, պապիկի եւ այլն: Ես նման բան երբեք չէի տեսել, բայց նրանց համար սովորական բան էր: Երեք ամիս ես ցանկացա բաժանվել: Վերադարձա իմ ընտանիք: Բայց նրա բարեկամները համոզեցին ինձ վերադառնալ: Ասեցին, որ նա կփոխվի: Վերադարձա, որովհետեւ չէի ուզում ամուսնուս ծնողների խաթորը կոտրել ու որովհետեւ երեխա էի ունեցել: Բայց ամուսինս շարունակում էր ինձ ծեծել, երբեմն միչեւ արյուն գալը, ձեռքերս էլ կապտուկներով էին ծածկվում: Իսկ հետո նա ծեծեց մեր աղջկան: Ես այլեւս չէի կարող դա տանել,

ես միշտ սպառնացել եմ, որ կգնամ ոստիկանություն, բայց ինձ համար երբեք չգնացի: Բայց երբ տեսա մեր դստեր կապտուկները՝ դա վերջին կաթիլն էր: Ոստիկանությունում ասեցին, որ հայտարարություն գրեմ, իսկ ամուսնուցս ստորագրություն վերցրեցին, որ այլևս այդպիսի բան չի անի: Դա տեւեց մի ամիս: Հետո մի երեկո հարբեց եւ ինձ դաժան ծեծեց: Փորձեց բռնոր մատներս ջարդել: Արգելեց ծնողներիս մոտ վերադառնալ, ես կալանավոր էի: Բայց ես որոշեցի դատարան գնալ: Նա չէր ուզում ապահարգան, բայց ես վերջապես հասա նպատակիս՝ ամուսնանալուց տաս տարի անց: (Կ.Ս.)

Ամուսնանալուց երեք տարի հետո սկսեց ինձ ծեծել: Ծեծում էր ամեն օր: Հիմա էլ է ծեծում: Երբ երեխաները փորձում էին ինձ պաշտանել, նրանց էլ էր ծեծում: Երբ ասացի, որ ոստիկանություն կգանգեմ, բնակարանի բռնոր հեռախոսալարարը պոկեց: (Կ.Դ.)

Ես խնդիր ունեի իմ սկեսրոջս հետ: Մենք ապրում էինք նույն տանը, եւ ամենինչ սկսվեց սկեսրոջս մահվանից հետո: Սկսեցինք վիճել, կռվում էինք սկեսրոջս, տալիս հետ: Նա ուզում էր, որ բնակարանը կիսենք, որ իր տղայի հետ ստանար սենյակներից մեկը: Բայց ես երկու որդի ունեի եւ ինձ պետք էր սենյակը: Սկսեցին ինձ հետ վեճի բռնվել, ու հասավ նրան, որ սկեսրայրս ապակե մոխրամանով խփեց գլխիս: (Ա.Դ.)

Ես ծնվել եմ Երեւանում, իսկ ապագա ամուսնուս առաջին անգամ հանդիպել 1986 թվականին: 1989 թվականին նա ինձ բռնաբարեց եւ ես հղացա: Չնայած նա ուզում էր, որ վիժեմ, ես ուզում էի երեխա ունենալ: Հիդուությունս թաքուն պահելու համար, նա ինձ տարավ Արագածոտնի մարզ՝ ծնողների տուն: Նրա ընտանիքը ինձ սկզբում ընդունեց, եւ 1990 թվականին մենք ամուսնացանք: Ծնողներս սկզբից հրաժարվեցին ինձնից, որովհետու երեխա էի ունեցել ամուսնանալուց առաջ, բայց հետո մենք հաշտվեցինք, եւ հայրս օգնեց մեզ ամուսնու ծնողներին պատականող հողատարածքի վրա նոր տուն կառուցել: Բայց ամուսինս սկսեց ինձ ծեծել, երբ կրկին հղացա: Ծեծում էր, որ վիժեմ, բայց երբ նրա ծնողներն իմ վրա զայրանում էին, ավելի վատ էր: Չայրանում էին ամենահիմար բաների համար՝ որովհետեւ ծնողներս օգնում էին ինձ, որովհետեւ քաղաքի աղջիկ եմ, որովհետեւ ծնողներս իրենց սխալ համարի հողաթափեր են նվիրել: Ամուսինս ստիպում էր ինձ հղի ժամանակ երկար ոտքով քայլել առանց ջրի, մի անգամ էլ կոպի նման ինձ ճիպոտով ծեծեց: Մի օր էլ իսկապես դաժան ծեծեց բահով, երբ վերադարձա Երեւանից: Կարծում եմ, նրա եղբայրն էր ինչ-որ բան ասել, որ ստիպի դա անել: Եղբայրը ուզում էր, որ ես գնամ, որ իր ծնողները ապրեն ամուսնուս հետ, իսկ ծնողների տունը իրեն մնա: Ամուսինս ջարդեց քիթս, ու ես ուղեղի ցնցում ստացա: Ամբողջ դեմքս արյան ու կապտուկների մեջ էր, իսկ նա վերցրեց հայելին, ստիպեց, որ նայեմ նրա մեջ ու ասաց. «Նայի՛ր քեզ: Ինչի՞ ես նման»: (Ն.Ս.)

Պատերազմի եւ խաղաղության ինստիտուտի նկարագրած դեպքում, 45-ամյա Գյուլնարա Մարտիրոսյանը (ոչ իսկական անունը) տեսողությունը կորցրեց իր ամուսնու ընտանիքի կողմից տարիներով բռնության ենթարկվելու հետեւանքով:

Ով ուզում էր, կարող էր ինձ ծեծել: Եթե մի բան այն չէր տանը, մեղավորը ես էի: Հարձակվում էին վրաս ու ծեծում՝ բռնորը միասին: Մի անգամ փորձեցի պաշտպանել ինձ, վերցրի աթոռը եւ խփեցի ամուսնուս գլխին. խփեցի ու տնից փախա, բայց վազելու տեղ չունեի. ծնողներս մահացել էին, բարեկամներ չունեի, եւ ապաստարան գտա հարեւանի տանը: Ամուսինս եկավ իմ ետեւից, ու երբ ինձ տեսավ, աչքերիս քիմիական թթու շփեց: Հիշում եմ, որ դեմքս այրվում էր, իսկ ցավն այնքան ուժեղ էր, որ ուշագնաց եղա: Ինձ տարան Երեւան ու վիրահատեցին, բայց տեսողությունս չվերականգնվեց: Ես չկարողացա իմ իրավունքերը պաշտպանել, որովհետեւ փող չունեի, բարեկամներ չունեի, որ ինձ համար դատարաններ գնային: Այսպես էլ կյանքս անցավ.⁵³

Որոշ կանայք, ՀԿ-ների ներկայացուցիչներ եւ պաշտոնյաներ, որոնց հետ հարցազրույց է վարել Amnesty International-ը, բռնությունը վերագրում են եկամուտների ցածր մակարդակին եւ Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակին: Խնդրի այսպիսի ընկալման դեպքում, սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման հետ ընտանեկան բռնությունը պետք է նվազի: Amnesty International-ի եւ այլ կազմակերպությունների հետազոտությունները չեն պաշտպանում այս տեսակետը. Ֆրանսիայում, օրինակ, 2003 թվականի հարցման տվյալները ցույց են տալիս, որ

տասը կանանցից մեկը ընտանիքում ենթարկվում է բռնության:⁵⁴ Ավելի շուտ, ընտանեկան բռնությունը հանդիպում է սոցիալ-տնտեսական զարգացվածության տարբեր մակարդակներում գտնվող երկրներում եւ յուրաքանչյուր երկրի բոլոր սոցիալ-տնտեսական համատեքստերում: Այս տեսակետը քննադատվել է նաեւ Հայաստանի մի շարք փորձագետների կողմից: «Կանանց իրավունքների կենտրոնի» ղեկավար Սուսաննա Վարդանյանը Amnesty International-ի աշխատակիցների հետ զրույցում նշեց, որ չնայած տնտեսական ծանր պայմանները կարող են նպաստել ընտանեկան բռնության խորացմանը, վերջիններս չեն կարող դրա միակ պատճառը հանդիսանալ:⁵⁵ Amnesty International-ը տեղեկացավ նաեւ Հայաստանում հարուստ ընտանիքներում առկա բռնության դեպքերի մասին: Ա.-ն ամուսնացել է 20 տարեկան հասակում:⁵⁶ Նրա ամուսինը նախկինում աշխատում էր Մոսկվայում՝ որպես բարձիչ բանվոր, եւ միայն հետագայում, երբ նրա նոր բիզնեսը հաջողակ դարձավ, նա կնոջ հանդեպ դարձավ դաժան:

Ինչքան զարգանում էր նրա բիզնեսը, այնքան ավելի շատ էր տանը գայրանում: Սկսեց ինձ ծեծել. կարող էր հարվածել ինձ, եթե դուրը չէր գալիս՝ ինչ եմ հագել կամ դուրը չէր գալիս՝ ինչպես եմ նայում իրեն, եթե շատ երկար էի խոսում հեռախոսով կամ համարձակվում էի տնից դուրս գալ առանց նրա թույլտվության: Նա իրեն համար բնակարան գնեց, որտեղ ժամանակ էր անցկացնում ուրիշ կանանց հետ: Փորձեցի պաշտպանել ինձ, բայց նա ինձ այնպես դաժան ծեծեց, որ մի քանի օր անց միայն կարող էի թույլ տալ, որ մեկը ինձ տեսներ: Չեմ կարող ասել, որ ինձ փող չի տալիս... ամառները գնում եմ Իսպանիա, Թուրքիա, Կիպրոս, բայց միշտ թիկնապահի հետ, որ հանկարծ մեկի չհանդիպեմ, որ հանկարծ, Աստված չանի, սկսեմ զրուցել անծանոթ մարդու հետ: (Ա.)

Այլ «մեղմացուցիչ» գործոններից, որոնք երբեմն ներկայացվում են որպես ընտանեկան բռնության արդարացում, մեղավորների՝ ավիոհոլի կամ թմրանյութերի ազդեցության տակ գտնվելն է: Ինչպես ցույց են տալիս այստեղ բերված վկայությունները, Amnesty International-ին տեղեկացրել են ընտանեկան մի քանի դեպքերի մասին, որոնք ուղեկցվել են հարեցողությամբ կամ թմրանյութերի օգտագործմամբ: Հարբած լինելը հաճախ է օգտագործվել հենց մեղավորի կամ ընտանիքի այլ անդամների կողմից՝ որպես նրա վարքի արդարացում, եւ հնչում է այն հիմնավորումը, որ նա իբրեւ թե ունակ չէր ինքն իրեն կառավարել, սակայն այդ տղամարդիկ սովորաբար ընտանիքից դուրս մարդկանց նկատմամբ բռնություն չեն կիրառում: Բացի այդ, բռնություն կիրառողները կարող են հարվածել իրենց զուգընկերոջ մարմնի այն մասերին, որտեղ կապտուկները չեն երեւա, ինչը խոսում է դիտավորյալ, մտածված վարքի մասին: Ավիոհոլի կամ այլ թմրանյութի օգտագործումը բացարձակապես ընդունելի չէ որպես ընտանեկան բռնության բացատրություն կամ արդարացում:

ՍԵՆԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

Բռնաբարության ու սեռական բռնության բազմաթիվ զոհեր չեն խոսում իրենց հետ պատահածի մասին՝ մասամբ ամոթի սուր զգացումից, մասամբ հասարակության գերակշռող վերաբերմունքից, որ կինը պետք է համաձայնվի ամուսնու հետ սեռական հարաբերությանը՝ վերջինիս պահանջով: Այն գաղափարը, որ ամուսնական զույգի սեռական հարաբերությունը կարող է հակառակ կնոջ կամքի լինել, եւ որ ամուսինը կարող է բռնաբարել կնոջը, լայնորեն ընդունված չէ, եւ ոչ էլ ամուսնական բռնաբարությունը օրենքով սահմանված է որպես հանցագործություն:

Ես ապրում էի Արարատի մարզում: Մի օր մի կին եկավ մեր գյուղ ու խոսեց մորս հետ: Երբ նա գանց, մայրս ասաց, որ մի շաբաթից ամուսնանալու եմ: Հարսանիքի օրը խնամախոսները եկան մեր... [տուն] ու ես առաջին անգամ տեսա ապագա ամուսնուս: Հարսանիքից հետո իմացա, որ որ նա հանցագործության համար մի քանի անգամ դատապարտվել է ու բանտարկվել: Ամեն օր հրավիրում էր ընկերներին եւ ստիպում, որ [ուտելիք պատրաստեմ] նրանց համար: Ամեն օր խմում էր: Տալոջս [sic] ամուսինը նույնպես [նրա] ընկերներից էր: Մի անգամ, երբ սկեսուրս աշխատանքի էր, իսկ ես երեխաներիս հետ տանը մենակ էի, տալոջս ամուսինը եկավ ու ստիպեց, որ իր սեռական պահանջները բավարարեմ: Դրանից հետո գալիս էր ամեն անգամ, երբ ես մենակ էի տանը, եւ ապառնում, որ ամեն ինչ կպատմի ամուսնուս, եթե չենթարկվեմ իրեն: Հետո բանտից ազատվեց սկեսրայրս: Ամեն օր որդու հետ հարբում էին: Մի օր նա [առաջարկեց] ինձ հետ սեքսով զբաղվել, առանց ամոթի: Երբ ես հրաժարվեցի, նա ինձ բռնաբարեց ու այդ օրվանից սկսած

[Մշտապես] ստիպում էր ինձ բավարարել իրեն... Ապրեցի [այդպես] 15 տարի. ամուսինս ու սկեսրայրս մահացան, բայց ո՛չ նրանց մահը եւ ո՛չ էլ ... ժամանակը չեն կարող մեղմել իմ ցավը.⁵⁷

Երբ ես հրաժարվեցի ամուսնուս հետ սեռական հարաբերություն ունենալ, նա ինձ անկողնուց դուրս շարտեց ու ասաց, որ պիտի հատակին քնեմ: Ամեն դեպքում նա ինձ ստիպեց իր հետ սեքսով զբաղվել: (Գ.Լ.)

Չնայած այս երեւոյթը տարածված չէ, Amnesty International-ը տեղեկացավ, որ «աղջիկ փախցնելը» շարունակվում է կիրառվել:⁵⁸ «Աղջիկ փախցնելը» ներառում է կնոջն ամուսնացելը եւ երբեմն բռնաբարելը, եւ նա, ըստ ավանդույթի, այնուհետեւ ստիպված է ամուսնանալ իրեն փախցնողի (եւ հնարավոր է բռնաբարողի) հետ՝ հանրային ամոթից խոսափելու համար: Ավանդույթն ասում է, որ ամուսնացված կինը այլեւ կույս չի դիտվի հասարակության աչքերում՝ անկախ նրանից, բռնաբարել են նրան, թե ոչ: Այս ենթադրությունը թույլ չի տալիս նրան այլ ամուսին գտնել, քանի որ հայ տղամարդիկ շարունակում են ակնկալել (եւ պահանջել), որ իրենց հարսնացուները կույս լինեն: Երեւանի մի մանկաբարձ Amnesty International-ին հայտնեց, այս պահանջին համապատասխանելու համար բազմաթիվ կանայք դիմում են կուսաթաղանթի վերականգնմանը.⁵⁹

Մեր հարեւանը՝ մի երիտասարդ տղա, անընդհատ հետապնդում էր ինձ, սեր խոստովանում: Նրա ոտնձգություններից գերծ մնալու համար ես ծնողներիս խորհրդով թողեցի աշխատանքս: Հայրս փորձեց խոսել տղայի եւ նրա ծնողների հետ. մի որոշ ժամանակ նա ինձ հանգիստ թողեց, բայց հենց ես երկրպագու ունեցա, նա կրկին հայտնվեց, սպառնաց, որ ես նրան եմ [պատկանում]: Մի անգամ տուն գնալիս ճանապարհու կտրեց մի մեքենա, նա դուրս եկավ եւ ընկերների օգնությամբ ստիպեց մեքենա նստել: Ես փորձեցի համոզել նրան ինձ տուն տանել, բայց ապարդյուն: Ինձ տարան ընկերներից մեկի առանձնատուն: Փորձեցի փախչել, բայց ինձ չհաջողվեց: Դա նրան ավելի նյարդայնացրեց, ու նա ինձ բռնաբարեց: Երբ ծնողներս [իմացան] կատարվածի մասին, խնդրեցին նրան ինձ տուն բերել: Մի քանի օր անց նա ինձ տուն բերեց եւ ձեռքս խնդրեց, բայց ծնողներ[ս] մեժեցին [նրան] ու դիմեցին դատախազություն: Այս միջադեպը խորտակեց կյանքս. չգիտեմ, ինչպես [կարող] եմ շարունակել ապրել...⁶⁰

Ապագա ամուսնուս հանդիպեցի, երբ քաղաքից դուրս խնջույքի էինք գանցել: Նա ինձ ընդհանրապես դուր չեկավ, եւ ես շարունակում էի խուսափել... նրանից: Նա ինձ հետապնդում էր գրեթե 6 ամիս: Մի օր ասաց, որ գնում ենք մի աղջա ամառանոց՝ երեկոյթի: Երբ մի փոքր ուշ իմացա, որ խաբել է ինձ ու բերել իր սեփական ամառանոցը, աղաչեցի, խնդրեցի ինձ տուն տանել, բայց ապարդյուն: Նա ինձ բռնաբարեց ու, տեսնելով, որ կույս եմ, տարավ ինձ ծնողներիս մոտ ու ձեռքս խնդրեց: Ես ամուսնացա [այս տղամարդու հետ, ում չէի սիրում] ամոթից, ու ամեն պահ նրա մեջ տեսնում եմ անասունի...⁶¹

ՍԵՌԱԿԱՆ ՈՏԵՂՈՒԹՅՈՒՆ

Ես սկսեցի աշխատել Արմավիրի պահածոների գործարանում դպրոցն ավարտելուց անմիջապես հետո: Աշխատում էի հերթափոխով: Հերթափոխի դեկավարը ակնարկում էր. «Ես քո մասին հոգ կտանեմ, եթե դու ... հոգ [տանես] իմ մասին»: [Սկզբում] չէի հասկանում, ինչ է նկատի ունի: Մի օր ասացին, որ ինձ տեսնել է ուզում: Ասաց, որ ինձ նոր հերթափոխի է նշանակել, ու ես կարող եմ ցերեկը դասընթացների հաճախել: Ես այնքան երջանիկ էի, որ մշտական աշխատանք ունեմ, բայց ուրախությունս կարճ տևեց: Մի շաբաթ անց գիշերային հերթափոխի ժամանակ նորից ինձ կանչեց: Հարցրեց, ինչպես եմ հատուցելու լավության համար: Ես քարացա: Նա վեր կացավ, դուռը ծածկեց ու ճանկեց ինձ՝ այրոջից բարձրացնելով: Ես ասես ոչինչ չէի գգում, միայն զգացի սուր հարված դեմքիս ու ընկա բազկաթոռին: Անասունի նման հարձակվեց վրաս ու, երբ վերջացրեց՝ գնաց: Հիմա ես մարմնավաճառությամբ եմ զբաղվում: Տգեղ բառեր եմ օգտագործում, եւ ինձ մեկ է, ինչ են ուրիշները մտածում իմ մասին: Բայց որ ոք չգիտի, որ վիրավորանքի անբուժելի զգացումը միջեւ հիմա ապրում է իմ հոգում՝ հանգիստ չտալով ինձ:⁶²

ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԱՐԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԸ

Amnesty International-ին հարցազրույց տված կանայք միշտ խոսել են բռնությունը արդարացնող

վարքի մասին: Այսպիսի վարքին կատարված հղումները հզոր ապացույց են այն ձեռքի, որոնց միջոցով գեներալային սիստեմը Հայաստանում ստեղծում է խտրականության կանոններ, որոնք անմիջականորեն ազդում են բռնությամբ ուղեկցվող հարաբերություններում ապրող կանանց վրա:

Նույնիսկ ծնողները, նույնիսկ հայրը այն կնոջ, ում ծեծում են, չի կարող գալ ու ասել իր փեսային, «լսի՛ր, այս ի՞նչ ես անում արջկանաչ հետ»: Նա իրավունք չունի դա անելու, ամուսինը կասի. կինս է, ինչպես ուզում՝ այնպես էլ վարվում եմ: Հայաստանում տղամարդիկ կանանց համարում են իրենց սեփականություն: (Դ.Մ.)

Այսպես են մեզ դաստիարակում. եթե կին ես, պիտի ամեն ինչի հետ հաշտվես: Եթե տղամարդ ես, ամեն ինչ կարելի է: Տղամարդը կարող է այլ կանանց հետ լինել, կարող է գիշերը ուշ տուն գալ կամ ընդհանապես չգալ, կարող է խմել, կարող է Նույնիսկ ծեծել մեզ, այդ ամենը նորմալ է: Իսկ որպես կին՝ դու պետք է միայն հաշտվես դրա հետ: (Պ.Ն.)

ԲՈՒՌԹՅԱՄԲ ՈՒՂԵԿՑՎՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԼԸ ՉԿԱ

Չապահովելով ընտանիքում բռնությունից պաշտպանվելու առաջնային գործող համակարգ, օրինակ ապաստարաններ, արդյունավետ պաշտպանության հրահանգներ եւ ոստիկանության արդյունավետ արձագանք կամ երկարաժամկետ աջակցություն՝ բնակատեղի կամ աշխատանք գտնելու միջոցով, պետությունը կնոջը չի տալիս բռնությամբ ուղեկցվող հարաբերությունը լքելու այլընտրանք չի տալիս: Հայրական տուն վերադառնալը գործնականում միակ ելքն է ընտանիքում բռնության ենթարկված զոհերի ճնշող մեծամասնության համար, բայց սա ամենեւին հեշտ չէ: Ըստ սոցիալական նորմերի, եթե հարսը լքում է ծնողական տունը ու գնում ամուսնու տուն, նա անցնում է ամուսնու ընտանիքի պատասխանատվության տակ: Այդ պատճառով կնոջ բարեկամների համար դժվար է միջամտել՝ նրան օգնելու նպատակով, նույնիսկ եթե ցանկանան: Սոցիալական նորմերը խստորեն պատժում են ամուսնու տունը լքած կնոջը: ՀԿ-ի մի ակտիվիստ Amnesty International-ին հարցազրույց տալու ժամանակ մեջբերեց իր տատի ասացվածքը՝ «Եթե կնոջը դնից դուրս են շարտում, նա պիտի պատուհանից ներս մտնի», նկատի ունենալով, որ կնոջ պարտքն է ամեն գնով վերադառնալ ամուսնու ընտանիք՝ նույնիսկ եթե նա բռնության զոհ է:⁶³ Սեփական ընտանիքը կարող է չկամենալ ընտանեկան բռնության զոհին ետ ընդունել կամ կարող է համոզել նրան վերադառնալ, թողնելով նրան միայն մեկ ընտրություն՝ «հաշտվել» իրավազանցի հետ ու ապրել բռնության մեկ այլ ցիկլի ենթարկվելու վտանգի մեջ: Մի հայ սոցիոլոգի բառերով, «սա պարբերական բնույթ ունի, բաժանումներ, ապա հաշտեցումներ: [Ընտանեկան բռնության զոհը] չի վերդառնում տուն, նրան վերադարձնում են»:⁶⁴

Ամուսինս ծեծում էր ինձ, եւ ես երբեմն ստիպված հավաքում էի իրերս ու վերադառնում Երեւան՝ իմ ընտանիք: Մի անգամ քեռիս եկավ գյուղ ու պահանջեց ամուսնուս ծնողներից, որ ինձ պատճառ ձեռով վերաբերվեն: Երբ վերադարձա, դրությունը որոշ ժամանակով լավացավ, նույնիսկ ծեծը դադարեց: Բայց շուտով նորից սկսվեց: Մի անգամ ամուսինս ինձ այնպես ուժեղ հարվածեց, որ ուղեղի ցնցում ստացա, ջարդեց քթիս: Ուզում էի ոստիկանություն գնայի, բայց բոլորն ինձ ասում էին, որ չգնամ՝ հարեւաններս, բարեկամներս: Ասում էին, եթե գնաս ոստիկանություն, երեխաներդ կնախատեն, երբ մեծանան, կասեն, ինչու՞ մեր հոր հետ այսպես վարվեցիր: (Ն.Ս.)

Մի քանի անգամ ուզում էի հեռանալ, բայց տեղ չունեի գնալու: Երկու փոքր երեխա ունեի, իսկ եթե գնայի, նա ինձ հետ էր թողնի: Ես ուզում եմ բաժանվել, բայց նա չի ուզում: (Գ.Լ.)

Ես երկու փոքր երեխա ունեի, իսկ Հայաստանում գործ գտնելը շատ դժվար է, նամանավանդ երկու փոքր երեխաներով. աշխատանք չես կարող գտնել, չես կարող դայակ վարձել, ամբողջ ժամանակ պիտի լինես երեխաներիդ հետ: Ոչ ոք քեզ չի օգնում, պետությունը ոչինչ չի անում; Ուրեմն ամուսնուց բաժանվելու ճանապարհ չկա, դու այս անձից ֆինանսապես կախյալ վիճակում ես: Դե, ամուսինս ինձ այլեւս չէր աջակցում: Նա դադարեց աշխատել, դարձավ խաղամուլ ու թմրամուլ... Երբ ասացի, որ ապահարզան եմ ուզում, ծեծեց ինձ ու ասաց «դու իրավունք չունես ինձնից բաժանվելու», եւ այդ ժամանակ ես գանգեցի այստեղ [ճգնաժամային կենտրոն]: Հինգ տարի ես ապահարզան էի ուզում, իսկ գնալու տեղ չկար: (Պ.Ն.)

ԿՆՈՋ ԿՈՂՄԻՑ ԿՆՈՋ ԴԵՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ

Amnesty International-ին բազմիցս տեղեկացրել են, որ Հայաստանում մի քանի սերունդ մի հարկի տակ ապրելու դեպքերում հաճախ ընտանեկան բռնության հեղինակները սկեսուրներն են, հատկապես, բայց ոչ բացառապես՝ գյուղական շրջաններում: Սա հաստատում է «Կանանց իրավունքների կենտրոնի» համար անցկացված հարցման վիճակագրությունը, ըստ որի ֆիզիկական բռնության ենթարկված կանանց 10%-ը մեղավոր է համարում սկեսուրներին: Սկեսուրները նաեւ սադրում են իրենց որդիներին բռնություն գործադրել հարսների նկատմամբ, որոնց նրանք չեն հավանում:

Ես այն ժամանակ հղի էի: Հաց էի թխում: Չգիտեմ, ինչ սկեսուրս ասաց ամուսնուս, բայց նա կատաղությունից գժված վազեց հացատուն: Հափշտակեց ձեռքիս գրտնակը ու հարվածեց դրանով մեջքիս ու գլխիս: Ուշքի եկա հիվանդանոցում՝ արդեն ծննդաբերությունից հետո.⁶⁵

ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԵԼԸ

Amnesty International-ին հարցազրույց տված կանայք ասացին, որ բարեկամներից կամ հարեւաններից օգնություն խնդրելու փորձերը հաճախ մերժվում էին. ոմանց բարեկամները կամ ընկերները հետ են կանգնեցնում ոստիկանություն զանգելուց, որպեսզի ընտաքում բռնությունը մնա անձնական հարց: Կանանց, որոնք զանգելով «թեժ գիծ» կամ կապվելով կանանց կազմակերպության հետ օգնության ակնկալիքով, երբեմն սպասում է սոցիալական պատիժ, ու սովորաբար նրանք այս քայլի են դիմում որպես վերջին միջոցի: Amnesty International-ի հետ զրուցած կանանցից մի քանիսը «թեժ գծի» հեռախոսահամարներն իմացել են պատահաբար կամ մեկ ուրիշից: Շատ կանայք ապաստարանում որոշ ժամանակ մնալուց հետո տուն են վերադառնում: Այնուամենայնիվ, Նույնիսկ այն փաստը, որ կինը մեկ անգամ եկել է ապաստարան, կարող է կարեւոր զսպող ազդեցություն ունենալ բռնություն կիրառող զուգընկերոջ վրա:

Հայ կինը փորձում է ամեն ինչի դիմանալ: Եթե կինը զանգ է տալիս «թեժ գիծ», ուրեմն դա իր վերջին հույսն է, նշանակում է նա արդեն հասել է վերջնագծին... Ապաստարանը տղամարդու իշխանությանն ուղղված մարտահրավեր է: Նույնիսկ եթե կինը վերադառնում է տուն ապաստարանում մնալուց հետո, սա իր ամուսնու համար մարտահրավեր է, որովհետեւ նա այժմ ունի հեռանալու ուժ: Նա կարող է ասել, եթե ինձ վատ վերաբերվես, ես հետ կգնամ: Դու ամենակարող չես, ես քեզանից ուժեղ եմ, քեզ այլընտրանք կա, ու ես գիտեմ իմ իրավունքները: (Պ.Ն.)

4. ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՒ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ

«Հայաստանում կանանց իրավունքների ներկա վիճակը ունի երկու տեսանկյուն: պաշտոնական ու իրավական, եւ իրական ու կյանքի».⁶⁶

4.1 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը նշել է.

Կանանց նկատմամբ բռնության ճանաչումը՝ որպես մարդու իրավունքների ոտնահարում, հստակեցնում է պետությունների վրա դրված պարտավորությունները՝ կանխել, վերացնել եւ պատժել այդպիսի բռնությունը, ու նաեւ պետությունների պատասխանատվությունը, եթե այս պարտավորությունները չեն կատարվում: Այս պարտավորությունների հիմքում պետությունների պարտքն է քայլեր ձեռնարկել մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու, խրախուսելու եւ կիրառելու առումով: Կանանց դեմ բռնությանն արձագանքելու համար պատշաճ միջոցների ձեռնարկման պահանջը հայեցակարգից դառնում է իրավական փաստաթուղթ:⁶⁷

Հայաստանի կողմից վավերացված միջազգային կոնվենցիաները երկրի օրենսդրության բաղկացուցիչ մաս են կազմում եւ գերակայում են ազգային օրենքների նկատմամբ: Այսպիսով, մարդու իրավունքների միջազգային օրենքի դրույթները, որոնք սահմանում են արգելում են կանանց նկատմամբ խտրականությունը, վերաբերում են Հայաստանին:

Հայաստանը մարդու իրավունքների բոլոր խոշոր միջազգային կոնվենցիաների եւ մարդու իրավունքների տարածաշրջանային փաստաթղթերի անդամ երկիր է, այդ թվում.

- Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային կոնվենցիա (ICCPR),
- Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների միջազգային համաձայնագիր (ICESCR),
- Կանանց նկատմամբ ցանկացած տիպի խտրականության վերացման կոնվենցիա (Կանանց կոնվենցիա),
- Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիա,
- Խոշտանգման եւ այլ դաժան, անմարդկային եւ նսեմացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա,
- Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիա (ECHR):

Հայաստանն ընդունել է նաեւ Կանանց կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, որը ճանաչում է Կանանց դեմ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիայի ՄԱԿ-ի կոմիտեի (CEDAW)՝ անհատներից եւ անհատ խմբերից հայտեր ստանալու եւ քննարկելու իրավասությունը:

Համաձայն Կանանց կոնվենցիայի, Հայաստանը պարտավոր է ընդունել համապատասխան օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք արգելում են կանանց նկատմամբ ցանկացած ձեւի խտրականությունը: Կանանց կոնվենցիան հստակ չի նշում կանանց դեմ բռնությունը, սակայն CEDAW-ն ճանաչել է հաստատել է, որ կանանց նկատմամբ ցանկացած ձեւի բռնությունը ընկնում է Կոնվենցիայում սահմանված կանանց նկատմամբ խտրականության տակ:⁶⁸

Վերջին տարիներին ավելի շատ է ընգծվում պետությունների պարտավորությունը միջամտել, երբ ոչ պետական մարմինները խախտում են մարդու իրավունքները՝ ներառյալ այն դեպքերը, երբ անհատները խախտում են մարդու իրավունքները իրենց առօրյա կյանքում, եւ համոզվել, որ

պետական մարմինները չեն ոտնահարում մարդու իրավունքները: Սա նշված է CEDAW-ի Ընդհանուր հանձնարարկան 19-ում, ըստ որի.

«Համաձայն ընդհանուր միջազգային օրենքի եւ մարդու իրավունքների որոշակի համաձայնագրերի, պետությունները կարող են նաեւ պատասխանատվություն կրել անձանց գործողությունների համար, եթե չեն կարողանում պատշաճ ջանքեր գործադրել կանխելու մարդու իրավունքների խախտումները կամ հետաքննելու եւ պատժելու բռնությունն ու փոխհատուցում տրամադրելու»:

Պատշաճ եռանդին վերաբերող չափանիշը նույնպես ամրագրված է Կանանց նկատմամբ բռնության վերացման հայտարարագրի (DEVAW) Յոթված 4(գ)-ում, որը կոչ է անում պետություններին. «[պ]ատշաճ ջանքեր գործադրել կանխելու, հետաքննելու եւ ազգային օրենսդրության համաձայն պատժելու կանանց նկատմամբ բռնության գործողությունները՝ անկախ նրանից, թե դրանք կատարվել են պետության, թե անձանց կողմից»:⁶⁹ Պատշաճ եռանդի չափանիշը բավարարելու համար Հայաստանը պարտավոր է մարդու իրավունքների միջազգային օրենքով կանանց պաշտպանել ամուսինների եւ զուգընկերների, կամ նույնիսկ նախկին ամուսինների եւ զուգընկերների կողմից գործադրվող բռնությունից: Այս պարտավորության չկատարումը Հայաստանի պետությանը կարող է պատասխանատվության ենթարկել կանանց իրավունքների ոտնահարման համար:

Կանանց կոնվենցիան վավերացրած պետությունները պետք է իրենց հաշվետվությունները չորս տարին մեկ ներկայացնեն CEDAW՝ կոնվենցիայի իրագործման մանրամասներով: Չնայած CEDAW ներկայացվելիք երրորդ ու չորրորդ պարբերական զեկույցները պետք է ներկայցված լինեին 2002 թվականի հոկտեմբերի 13-ին, մինչ այժմ դա արված չէ: Հայաստանը վերջին անգամ CEDAW-ն ներկայացրել է իր երկրորդ պարբերական զեկույցը 1999 թվականի սեպտեմբերի 9-ին:⁷⁰ CEDAW-ն այս զեկույցի եզրափակիչ դիտողությունները տվել է 2002 թվականի օգոստոսին:⁷¹ Այս դիտողություններում Հայաստանի իշխանություններին խորհուրդ է տրվել առաջնություն տալ «ընտանիքում եւ հասարակությունում կանանց եւ աղջիկների նկատմամբ բռնության վերաբերյալ բազմակողմանի եւ միասնական միջոցների ձեռնարկմանը»: CEDAW-ն անհանգստություն է հայտնել, որ բռնությանը վերաբերող ներկա օրենսդրությունը ընտանեկան բռնության մասին որեւէ հատուկ դրույթ չի պարունակում, իսկ բռնաբարության համար պատիժը չափազանց մեղմ է: CEDAW-ն պահանջել է Հայաստանից ընտանեկան բռնության մասին օրենք ընդունել եւ ընտանեկան բռնության զոհերին անհապաղ փոխհատուցմամբ եւ պաշտպանության միջոցներով ապահովել:

CEDAW-ն խորհուրդ է տվել միջոցներ ձեռնարկել գենդերային բռնության զոհերին ապաստարաններ տրամադրելու նպատակով, իսկ իրավապաշտպան մարմիններին, դատական ատյանի անդամներին, առողջապահության աշխատակիցներին եւ սոցիալական աշխատողներին առավել նրբանկատ դարձնել կանանց եւ աղջիկների նկատմամբ բռնության բոլոր ձեւերի նկատմամբ:

CEDAW-ն խորհուրդ է տվել նաեւ իրականացնել «անհապաղ եւ լայնձավալ միջոցառումներ, ինչպես օրինակ՝ դասացուցակների եւ դասագրքերի վերանայում, իրազեկության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում՝ ներառյալ տղաների ու տղամարդկանց համար հատուկ ծրագրեր, որոնք ընտանիքում ու հասարակության մեջ կանանց ու աղջիկների, տղաների ու տղամարդկանց դերերի եւ պատասխանատվությունների մասին կարծրատիպային եւ խտրական վերաբերմունքն ու պատկերացումները կփոխեն»: Նմանապես խորհուրդ է տրվել բարձրացնել իրազեկությունը խնդրի վերաբերյալ, որպեսզի կանանց ու աղջիկների նկատմամբ ցանկացած տիպի բռնությունը՝ ներառյալ ընտանեկան բռնությունը, համարվեն բարոյապես ու սոցիալապես անհանդուրժելի:

Կոմիտեի կողմից նշված այլ առաջնային խնդիրներից է թրաֆիկինգի դեմ պայքարի ու գյուղացի կանանց վիճակի բարելավմանը վերաբերող բազմակողմանի ռազմավարության (ու համապատասխան օրենսդրության) մշակումը:

4.2 ԵՐԿՐԻ ՕՐԵՆՔԸ

Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ հատուկ օրենք առայժմ չկա: Սակայն ընտանեկան բռնությանը եւ թրաֆիկինգին վերաբերող օրինագծերը մշակման փուլում են (ընտանեկան բռնությանը վերաբերող օրինագծի մասին տես 6.3 կետում):

Հայաստանի Քրեական օրենսգիրքը չի սահմանում ընտանեկան բռնությունը որպես առանձին հանցագործություն եւ քրեորեն չի հետապնդում: Ընտանեկան բռնության հանցագործությունները հետապնդվում են Հայաստանի Քրեական օրենսգրքի ընդհանուր դրույթներով, որոնք վերբերում են հայիոյանքին, ծեծին, մարմնական վնասվածք հասցնելուն ու սպանությանը, իսկ բռնության դեպքում տարբերություն չի դրվում անծանոթների եւ ընտանիքի անդամների միջեւ: Քրեական օրենքին այսպիսի գենդերային առումով չեզոք մոտեցումը կարող է աշխատել, եթե օրենքը կիրառվում է խիստ հավասար, անկախ հայցվորի եւ ենթադրելի մեղավորի միջեւ հարաբերությունից կամ սեռից. իրականում, սակայն, ենթադրվում է որ տղամարդիկ իրավունք ունեն կանանց նկատմամբ բռնություն կիրառել, այդ պատճառով տղամարդու կողմից բռնությունը իրականում բռնություն չէ: Հանցանքի սահմանման այս գենդերային առումով չեզոք մոտեցումն անտեսում է եական այն տարբերությունը, երբ բռնություն կատարողը մի անծանոթ է եւ երբ դա ամուսինն ու ապրուստի փող վաստակողն է, երեխաների հայրը կամ այլ ազգական, որից կինը տնտեսական կամ այլ կախվածություն ունի: Հայաստանի Քրեական օրենսգրքում ընտանեկան բռնությունը հետապնդող հոդվածները հետեւյալն են.

- Հոդված 112. Ծանր մարմնական վնասվածք. պատժվում է 3-ից 7 տարի ազատազրկմամբ, ավելի երկար՝ ծանրացուցիչ հանգամանքների դեպքում.
- Հոդված 113. Միջին մարմնական վնասվածք. պատժվում է մինչեւ 3 տարի ազատազրկմամբ, ավելի երկար՝ ծանրացուցիչ հանգամանքների դեպքում.
- Հոդված 118. Ծեծ. պատժվում է տույժով, մինչեւ մեկ տարի ուղղիչ աշխատանքներով կամ մինչեւ 2 ամիս կալանավորմամբ.
- Հոդված 119. Խոշտանգում. պատժվում է մինչեւ 3 տարի ազատազրկմամբ, կամ մինչեւ 7 տարի՝ ծանրացուցիչ հանգամանքների դեպքում (ներառյալ այն դեպքում, երբ զոհը հղի կին է).
- Հոդված 120. Ծանր մարմնական վնասվածք անփութության պատճառով. պատժվում է տույժով, մինչեւ մեկ տարի ուղղիչ աշխատանքներով կամ մինչեւ 2 ամիս կալանավորմամբ, կամ մինչեւ երկու տարի՝ ծանրացուցիչ հանգամանքների դեպքում.
- Հոդված 121. Միջին մարմնական վնասվածք անփութության պատճառով. պատժվում է տույժով, մինչեւ մեկ տարի ուղղիչ աշխատանքներով կամ մինչեւ 2 ամիս կալանավորմամբ, կամ մինչեւ 2 տարի աշխատանքներով եւ մեկ տարի ազատազրկմամբ՝ ծանրացուցիչ հանգամանքների դեպքում.
- Հոդված 131. Առեւանգում. պատժվում է մինչեւ 5 տարի ազատազրկմամբ, կամ 10 տարի՝ ծանրացուցիչ հանգամանքների դեպքում.
- Հոդված 132. Մարդկանց թրաֆիկինգ. պատժվում է տույժով, մինչեւ մեկ տարի ուղղիչ աշխատանքներով կամ մինչեւ չորս տարի ազատազրկմամբ. ծանրացուցիչ հանգամանքների դեպքում, օրինակ եթե հանցագործները կազմակերպված խումբ են կազմում, ազատազրկումը կարող է երկարել մինչեւ 8 տարի.
- Հոդված 133. Անօրինական գերեվարելը. պատժվում է մինչեւ երկու տարի ուղղիչ աշխատանքներով, մինչեւ 3 ամիս կալանավորմամբ կամ մինչեւ 2 տարի ազատազրկմամբ՝ ծանրացուցիչ հանգամանքների դեպքում.
- Հոդված 138. Բռնաբարություն. պատժվում է 3-ից 6 տարի ազատազրկմամբ. ծանրացուցիչ հանգամանքների դեպքում կարող է երկարել մինչեւ 10 տարի եւ մինչեւ 15 տարի, եթե զոհը մինչեւ 14 տարեկան անչափահաս է.
- Հոդված 139. Սեռական բռնություն.⁷² պատժվում է 3-ից 6 տարի ազատազրկմամբ. ծանրացուցիչ հանգամանքների դեպքում կարող է երկարել մինչեւ 10 տարի եւ մինչեւ 15 տարի, եթե զոհը մինչեւ 14 տարեկան անչափահաս է.
- Հոդված 140. Սեռական բնույթի գործողություններ կատարելու հարկադրում. պատժվում է տույժով, մինչեւ 2 տարի ուղղիչ աշխատանքներով կամ 1-ից 3 տարի ազատազրկմամբ.
- Հոդված 141. Սեռական գործողություններ մինչեւ 16 տարեկան անչափահասի հետ. պատժվում է մինչեւ 2 տարի ուղղիչ աշխատանքներով կամ ազատազրկմամբ.
- Հոդված 142. Անպարկեշտ վարք. պատժվում է տույժով, մինչեւ մեկ տարի ուղղիչ աշխատանքներով կամ մինչեւ 2 տարի ազատազրկմամբ, ծանրացուցիչ հանգամանքների դեպքում՝ 3 տարի:

Ընտանեկան բռնության մասին օրենքի կամ ընտանեկան բռնության հստակ արգելքի

բացակայության պարագայում վերոհիշյալ հոդվածները սովորաբար օգտագործվում են ընտանեկան բռնությունը հետապնդելու համար: Հոդվածներից ոչ մեկը, բացառությամբ հոդվածներ 138-ում եւ 139-ում հետերոսեքսուալ եւ հոմոսեքսուալ բռնաբարության միջեւ ակնհայտ տարբերության, սեռի առումով տարբերություն չեն դնում: Հոդվածներից ոչ մեկը անձանրթերին եւ զուգընկերներին՝, որպես բռնության մեղավորների չի տարբերակում: Չնայած ամուսնական բռնաբարության հստակ արգելք չկա, ամուսինը կամ ինտիմ զուգընկերը կարող են վերոնշյալ հոդվածներով քրեորեն հետապնդվել:

Սեռական ոտնձգությունը հետապնդվում է հայկական օրենսդրության մեջ՝ Հայաստանի Քրեական օրենսգրքում սեռական բռնությանը անդրադարձող առավել ընդհանուր հոդվածներով (տես վերը) եւ Աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածով, ըստ որի «տղամարդկանց եւ կանանց հավասար իրավունքների ոտնահարումը կամ աշխատակիցների, ենթակաների կամ հաճախորդների նկատմամբ սեռական ոտնձգությունը, հանդիսանում է աշխատանքային նորմերի կոպիտ խախտում»: Հոդված 222-ը նախատեսում է աշխատանքային նորմերի խախտման դեպքում կարգապահական պատժամիջոցների՝ ներառյալ նկատողության, խիստ նկատողության եւ աշխատանքից հեռացման կիրառում: Այնուամենայնիվ, Աշխատանքային օրենսգրքի դրույթները չեն սահմանում, թե ինչ է սեռական ոտնձգությունը՝ դիտելով այն միայն որպես աշխատանքային նորմերի խախտում:

4.3 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Չնայած հայկական կառավարությունը ստեղծել է պետական գործակալությունների եւ պաշտոնների ֆորմալ ապարատ, որը զբաղվում է կանանց հարցերով՝ «ընտանեկան գործեր» լայն խորագրի տակ, այս ապարատը չի դարձել իր նպատակին ծառայող գործիքների արդյունավետ շղթա. չկան նաեւ իրագործման, վերահսկման կամ գնահատման մեխանիզմներ:

Գույություն չունի հատուկ պետական մարմին կամ համակարգող հաստատություն, որը կզբաղվի Հայաստանում ընտանեկան կամ սեռական բռնությանը հակազդելուն ուղղված միջոցառումների իրագործմամբ: Ընդգրկուն գեղեցիկ քաղաքականություններով զբաղվում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության Ընտանիքի, կանանց եւ երեխաների բաժանմունքի Կանանց հարցերով բաժինը եւ վարչապետին առընթեր Գեղեցիկ քաղաքային հարցերով միջգործակալական կոմիտեն եւ Կանանց խորհուրդը:⁷³

2004 թվականին Հայաստանի կառավարությունը ընդունեց 6-ամյա *Կանանց կարգավիճակը բարելավող եւ հասարակությունում նրանց դերը ուժեղացնող Գործողությունների ազգային ծրագիրը* (այսուհետեւ ԳԱԾ), որը ներառում է կանանց նկատմամբ բռնության եւ թրաֆիկինգի դեմ պայքարի միջոցառումները որոշող երկու բաժին: ԳԱԾ-ի այլ բաժիններ զբաղվում են կառավարությունում որոշում ընդունելու մեջ կանանց դերի բարձրացմամբ, կանանց սոցիալ-տնտեսական եւ առողջապահական պայմանների բարելավմամբ եւ մամուլում կանանց ու կանանց խնդիրների լուսաբանմամբ:⁷⁴ Կանանց նկատմամբ բռնությանը վերաբերող բաժինը նախատեսում է հարցի ուսումնասիրում եւ բռնությունը սահմանող ցուցիչների ստեղծում, այլ պետությունների լավագույն փորձի ուսումնասիրում, սոցիալական, առողջապահական եւ կրթության ոլորտների աշխատողների ու իրավապահների «բազմակողմանի» վերապատրաստում, կանանց նկատմամբ բռնության գեկուցման, կանխման եւ հետեւանքների դեմ պայքարի պրոֆեսիոնալ ծառայությունների ներմուծում (ներառյալ «թեժ գծերը», ոստիկանության բաժինները եւ սոցիալական ծառայության կենտրոնները):⁷⁵ Իրագործման համար պատասխանատու մարմիններն են Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը, Մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը եւ Առողջապահության նախարարությունը: Այս մարմինները, սակայն, ոլորտում իրենց պարտականությունները իրագործելու բավարար միջոցներ չունեն:⁷⁶

2005 թվականի հոկտեմբերին ՄԱԿ-ի կանանց նկատմամբ բռնության գծով Հատուկ գեկուցող Ցակին Էրթուրքին ի պատասխան՝ ՄԱԿ-ում Հայաստանի հանրապետության մշտական պատվիրակությունը մանրամասներ ներկայացրեց կանանց հանդեպ բռնության վերաբերյալ Հայաստանի տարբեր պետական գործակալությունների քայլերի մասին:⁷⁷ Չնայած նշվում է, որ

բռնության վերաբերյալ ուսուցիչների ու իրավապահների հետ դասընթացներ են անցակացվել, այս միջոցառումները, սակայն, չեն վերաբերվել մասնավորապես կանանց նկատմամբ բռնությանը: Այն պնդումը, որ «բռնության մասին բողոքների դեպքում... բոլոր դեպքերը գրանցվում են հետաքննվում են ոստիկանության կողմից», չի հաստատվում Amnesty International-ին վկայություն տված այն կանանց կողմից, որոնք այդպիսի բողոքներ են ներկայացրել ոստիկանություն: Եւ իսկապես, եթե կնոջ վստահությունը ոստիկանության նկատմամբ ցածր է, շատ դեպքեր կարող են չհաղորդվել ոստիկանությանը: Չնայած նշվում է, որ ոստիկանությունը «քայլեր է ձեռնարկում հայտնաբերելու կանանց նկատմամբ բռնության չգրանցված դեպքերը», սակայն պարզ չէ՝ ինչ են ենթադրում այս քայլերը: Փաստաթղթում չի հստակեցվում նաեւ, որ չնայած, իսկապես, «[ծ]եծված կանայք նույնպես կարող են զանգել «թեժ գիծ», գոյություն ունեցող «թեժ գծերը» մինչ այժմ կառավարվում են ՀՀ-ների կողմից՝ առանց պետության աջակցության:

ԳԱԾ-ի հովանու ներքո իրականացվող միջոցառումները մինչ այժմ սահմանափակվել են գենդերային բռնության հետազոտությամբ, այլ երկրների փորձի ուսումնասիրությամբ, իրավապահների համար վերապատրաստման որոշ դասընթացներով եւ 2008 թվականի մայիսին անցկացված ազգային իրազեկության բարձրացման արշավով: Վերջինս ներառում էր երեւանում եւ մարզերում ընտանեկան բռնությանը վերաբերող մի քանի կլոր սեղանների կազմակերպում:⁷⁸ Չնայած կառավարության պաշտոնյաները հայտնեցին Amnesty International-ին, որ ծրագիրը բարձրացրեց կանանց խնդիրների վերաբերյալ իրազեկությունը հատկապես այս հարցի քննարկմանը մինչ այժմ դիմադրող տեղական կառավարման պաշտոնյաների շրջանում, սակայն վերջինիս իրագործումը խոչընդոտվեց ֆինանսավորման պակասի պատճառով:⁷⁹ Amnesty International-ին հայտնեցին, որ միայն 2009 թվականին ֆինանսավորում կհատկացվի միայն մեկ անկախ ՀՀ-ին՝ երեւան քաղաքում ապաստարան բացելու համար: Կանանց նկատմամբ բռնության հարցերով լիազորված է զբաղվել Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը եւ Հայաստանի հանրապետության ոստիկանությունը՝ սակայն առավել ընդհանրական «կանանց հարցեր» կամ անչափահասների հանցագործություն դասակարգմամբ: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության Կանանց հարցերով բաժինը հանդիսանում է կանանց եւ երեխաների բաժնի ենթամաս: Հայաստանի հանրապետության ոստիկանությունը զբաղվում է կանանց նկատմամբ բռնության հարցերով միայն անչափահասների բաժնի միջոցով: 2006 թվականին կանանց հարցերով բաժիններ բացվել են Հայաստանի բոլոր քաղաքապետարաններում:

Ինչ վերաբերում է հայկական իշխանությունների՝ թրաֆիկինգի դեմ պայքարելու ջանքերին, ըստ ԱՄՆ Պետդեպարտամենտի Մարդկանց թրաֆիկինգի 2007 թվականի զեկույցի, չնայած հայկական իշխանությունները ավելի շատ սկսեցին օգտագործել հակաթրաֆիկինգի օրենքը, զոհերի հայտնաբերման եւ ուղղորդման հարցում կամ պաշտոնյաների՝ թրաֆիկինգին մեղսակցելու առումով առաջընթաց չի գրանցվել:⁸⁰ 2007 թվականի զեկույցից հետո իրատարակված միջանկյալ զեկույցում կրկին նշվեց, որ հայկական կառավարությունը շարունակում է «չհետապնդել պաշտոնյաների թրաֆիկին մեղսակցությունը եւ պետք եղած ջանք չի գործադրում հետաքննելու կամ հետապնդելու թրաֆիկինգին վերաբերող պաշտոնական կաշառակերությունը»:⁸¹

Կանանց ՀՀ-ների ակտիվիստները կարծում են, որ նույնիսկ ըստ ծրագրվածի իրականացվելու դեպքում ԳԱԾ-ը չունի վերհսկման եւ զննհատման արդյունավետ մեխանիզմներ:⁸² Նրանք անհանգստացած են, որ խնդրի մասին հանրային իրազեկությունը բարձրացնելով՝ ԳԱԾ-ը կարող է վնասակար ազդեցություն ունենալ՝ առանց խնդրի լուծմանն ուղղված միջոցառումների կիրառման եւ հաշվետվության մեխանիզմների: Այդ պատճառով առայժմ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտում պետության միջոցառումները սահմանափակվում են ընդհատվող հանրային իրազեկության բարձրացման քարոզարշավներով, ընտանիքում բռնության արձանագրված դեպքերի տվյալների համադրմամբ (Գլխավոր դատախազի գրասենյակից ստացված տվյալների քննարկումը տես Մաս 5.5-ում) եւ օրինագծի քննարկմամբ: Իսկապես, օրինագծի ընդունումը, նախքան ենթակառուցվածքներ ստեղծելը, մեկ պաշտոնյայի կողմից նշվել է որպես ԳԱԾ-ի իրականացման եւս մի խոչընդոտ:⁸³ Այնուամենայնիվ, Amnesty International-ը համարում է, որ անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծումը չպետք է կախված

Լռությունը պատվաբեր չէ.
Չայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքար

Լինի օրենքի ընդունումից: Այս ենթակառուցվածքի գոյությունը կարող է, օրինակ, հեշտացնել ընտանիքում բռնության դեպքերում հայկական Քրեական օրենսգրքի բռնությանը վերաբերող ընդհանուր հոդվածների կիրառումը:

5. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԾԱՌԱՅԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

«Չոհերը խոցելի են. երբ կինը տեսնում է, որ հասարակությունում բոլորն իրեն են մեղադրում, նա ասում է՝ լավ, ուղղակի կհամակերպվեմ սրա հետ, արդարություն չեմ փնտրի»».⁸⁴

Հայաստանում ընտանեկան և սեռական բռնության ենթարկված կանայք բռնությունից իրենց պաշտպանելիս մի շարք խոչընդոտների հանդիպում են: Կանանց համար դժվար է հայտնել ընտանիքում բռնության մասին որպես հանցագործության՝ հասարակության մեջ ընտանեկան բռնությունը դատապարտող հստակ մոտեցման և այն՝ որպես հանցագործության սահմանման բացակայության, ինչպես նաև բռնությունը հանրային դարձնելու դեպքում գոհին սպառնացող խարազանման պատճառով: Հայաստանում ընտանեկան բռնության մասին հայտնելը հավասարվում է «ընտանիքը քանդելուն» և խստորեն խարանվում: Amnesty International-ին հարցազրույց տված կանայք պատմեցին, որ բռնության մասին ոստիկանություն հայտնելու դեպքում վախենում են առավել ուժգին բռնության ենթարկվելուց, սոցիալական մեկուսացումից, իրենց բողոքները հետ վերցնելու ճնշումից և իրենց համար տնտեսապես անկախ պայմաններով ապահարզանից: Այլ խոչընդոտներից են. ակնհայտորեն արմատացած մշակույթը, որը խրախուսում է կանանց ետ վերցնել զուգընկերներ դեմ դեմ մերկայացված բողոքները, ինչպես նաև առողջապահության, ոստիկանության, դատախազության աշխատակիցների և իրենց մասնագիտական կյանքում ընտանեկան բռնության հետ գործ ունեցողների արդյունավետ վերապատրաստման բացակայությունը:

5.1 ՉՃԱՆԱԳԵԼԸ

CEDAW ներկայացված Հայաստանի 1999 թվականի գեկույցի և այս ոլորտում աշխատող ՀԿ-ների ակտիվիստների համոզմամբ՝ կանանց նկատմամբ բռնությունը՝ որպես հանցագործություն կամ մարդու իրավունքի ոտնահարում չճանաչելը արդարության հասնելու հիմնական խոչընդոտներից է:⁸⁵ «Կանանց իրավունքների կենտրոնի» 2007 թվականի հարցման համար հարցազրույց վարողները հայտնեցին Amnesty International-ին հայտնեցին, որ իրենց պորբլեմներից մեկն այն էր, որ հարցվողները իրենց նկատմամբ վերաբերմունքը որպես ընտանեկան բռնություն չէին դիտում:⁸⁶ Սա նշանակում է, որ անհապաղ պետք է հասարակական կրթական միջոցառումներ ձեռնարկել, որոնք կիրառվեն թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց, որ ընտանեկան բռնությունը հանցագործություն է, իսկ կանանց կծանոթացնեն իրենց իրավունքների և փոխհատուցման ձևերի հետ:

Ինչ վերաբերում է սեռական բռնությանը, շատ կանանց համար ամուսնու կամ ինտիմ զուգընկերոջ կողմից բռնաբարությունը կամ սեռական բռնությունը որպես հանցագործություն կամ մարդու իրավունքների խախտում ճանաչելն է՛լ ավելի բարդ է: «Կանանց իրավունքների կենտրոնի» տնօրեն Լառա Ահարոնյանը նշեց. «Այս իրականության [սեռական բռնության ենթարկվելու] մեջ ապրող կանանց մեծ մասը կարծում էր, որ սա նորմալ է, երբ ամուսնանում ես, պիտի անես այն, ինչ ամուսինը ուզում է»: «Կանանց իրավունքների կենտրոնի» սեմինարների ժամանակ ծանոթանալով ամուսնական բռնաբարության գաղափարի հետ, մասնակիցները հարցում էին «մի՞թե սա բռնաբարություն է», «ես կարո՞ղ եմ ամուսնուս ոչ ասել»:⁸⁷

5.2 «ԸՆՏԱՆԻՔԻ ՆԵՐՍՈՒՄ ՊԱՅԵԼԸ»

Ընտանեկան բռնություն վերապրածներն այն «հանրային քննարկման առարկա չդարձնելու» համար հզոր խոչընդոտների են հանդիպում: Հայաստանում կանայք իրենց հարկադրված են զգում «այն ընտանիքի ներսում պահել», քանի որ հասարակության կողմից անպատվությունն ավելի վատ է բաժանման կամ ապահարզանի, քան ընտանեկան բռնության դեպքում: Այս սոցիալական վերաբերմունքն ընդգծում է այն տեսակետը, որ ընտանեկան բռնությունն

անհրաժեշտ է լուծել ընտանիքի ներսում՝ առանց դրսից միջամտության. այն, որ «Կանանց իրավունքների կենտրոնի» հարցման մասնակիցների 88%-ը համարում են, որ ընտանեկան բռնության խնդիրը լավագույնս լուծվում է ընտանիքի ներսում եւ չպետք է հայտնվի ոստիկանությանը, վերահաստատում է այս փաստը:⁸⁸

*Աղջիկս մեկ-մեկ հարցնում է ինձ, ինչու ինձ մատնեցի այս ճակատագրին: Չգիտեմ, ինչպես բացատրեմ նրան, որ իմ ընտանիքում երբեք ապահարգան չի եղել, որ տատս ու պապս ապրել են միասին 60 տարի, որ ծնողներս ինձ չեն հասականա, եթե լքեմ ամուսնուս: Եւ ու՞ր գնայի: Բնակարանը գրանցված է իր անունով, չնայած ես եմ վճարել դրա համար վերջին 10 տարիների ընթացքում: Բայց միայն դա չէ խնդիրը. ես չեմ կարող ինձ թույլ տալ լինել «բաժանված»:
Ամուսինը, ինչ էլ լինի, միեւնույն է տան տղամարդն է, ու նրա ներկայությունը քեզ ճանաչող մարդկանց աչքերում քեզ ինչ-որ կարգավիճակ է տալիս՝ հարեւանների, ազգականների ... Այս կարծրատիպերը դեռեւս ուժեղ են մեր հասարակության մեջ, ու ես դեռ ինքս դրանք չեմ հաղթահարել: (Մ.)⁸⁹*

Մի քանի ՀԿ-ներ հայտնել են Amnesty International-ին, որ կնոջ իրավունքների պարտադիր ստորադասվելը ընտանիքի արժեքներին, մեծապես ազդել է նրանց ռազմավարության վրա՝ հատկապես մայրաքաղաքից դուրս: Մեկի խոսքերով, «ընտանեկան բռնության մասին հասարակական քննարկման մեջ երեխաների հարցն առանցքային է»:⁹⁰ Միայն երեխաների կյանքի վրա ընտանեկան բռնության ազդեցության մասին իրազեկման մակարդակը բարձարացնելով են այս ոլորտի ՀԿ-ները կարողացել խուսափել հայ ընտանիքի վրա «հարձակվելու» խարանհից: Ընտանեկան բռնության ենթարկված հայ կանանց մեծ մասի համար, սակայն, հանուն ընտանիքի լռությունն պահելու հրահանգը մնում է չափազանց խիստ:

Ես 14 տարի համակերպվում էի ծեծի հետ, որովհետեւ այստեղ Հայաստանում քեզանից դա են ակնկալում: Հայ ընտանիքում կինը պիտի ամեն ինչի հետ համակերպվի, պիտի լռի: Քանի որ ես ինչ-որ բան եմ արել այդ առումով՝ գնացել եմ ոստիկանություն ու ամուսնուցս բաժանվել, իմ գյուղում մարդիկ ինձ մատով են ցույց տալիս ու ասում՝ գիժ է, տեսա՞ք, ինչ արեց ամուսնու գլխին, նա պիտի սուս մնար: Սա կարծրատիպ է, երեւի ազգային կարծրատիպ, չգիտեմ, որ եթե կինը դիմում ոստիկանություն կամ դատարան, ուրեմն ընտանիքը քանդում է: (Դ.Մ.)

Եթե ընտանեկան բռնության մասին հայտնելու համար սոցիալական պատիժները խիստ են, դրանք առավել զգալի են այն կանանց հանդեպ, որոնք հայտնում են իրենց ամուսինների կամ ինտիմ զուգընկերների կողմից սեռական բռնության մասին: Հայկական մի ՀԿ-ի ակտիվիստի խոսքերով՝ «Իրեն հարգող ոչ մի հայ կին երբեւէ չի բողոքի ոստիկանությանը ամուսնու կողմից սեռական բռնության մասին»:⁹¹ Ասվածը հաստատվում է Հայաստանի երկրորդ քաղաք Գյումրիի «Հայկական Կարիտաս» կազմակերպության փորձով: 2002-2004 թվականներին ընտանեկան եւ սեռական բռնություն վերապրածներին աջակցություն ցուցաբերող «Հայկական Կարիտաս» կազմակերպության երկամյա ծրագրի ընթացքում սեռական բռնության հարցերով խորհրդատուին սեռական բռնության եւ ոչ մի դեպքի մասին չի հայտնվել:⁹²

Բռնաբարության գոհերի խարանումը այս դեպքերի մասին չհայտնելու հիմնական գործոնն է: «Կանանց իրավունքների կենտրոնի» վերոհիշյալ հարցումը պարզեց, որ կրկնվող կամ պարբերական դաժան ֆիզիկական բռնության մասին հայտնած հարցվածների 6%-ի կեսը (2.9%-ը) պատասխանեց, որ իրենց ստիպել են սեռական հարաբերության մեջ մտնել: Համաձայն ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալի՝ Amnesty International-ին տված տվյալների 2006-2007 թվականներին Քրեական օրենսգրքի բռնության եւ սեռական բռնության հոդվածներով դատապարտվել է չորս ամուսին կամ ինտիմ զուգընկեր:⁹³ Այդ թվերը ցույց են տալիս, որ հարցման մեջ (որն արդեն իսկ թերի է) ինտիմ զուգընկերոջ կողմից սեռական բռնության նույնիսկ գրանցված դեպքերի թվի եւ հանցագործությունների քրեական հետապնդման թվի միջեւ կա շատ մեծ տարածայնություն:

«Կանանց իրավունքների կենտրոնից» Լառա Ահարոնյանը շեշտեց, որ արդարության խոչընդոտ է նաեւ սեռական բռնության դեպքում գոհին մեղադրելու սովորույթը. «Առաջին հարցը, որ

ուստիկաններն ու դատախազները կտան՝ «ի՞նչ ես արել սրան դրդելու համար»: «Կանանց իրավունքների կենտրոնի» կամավորի նկատմամբ սեռական բռնության վերջերս պատահած դեպքում, բռնաբարության փորձի մասին հայտնող աղջկան (այս դեպքում՝ անծանոթի կողմից) հարցրեցին. «Գուցե մոռացե՞լ էիր դուռը փակել»: Բռնաբարության կամ այլ սեռական բռնության մասին դիմումների առհամարման այսպիսի փորձերը իրավապահ կամ դատական պաշտոնյաների կողմից չպետք է հանդուրժվեն եւ պիտի համարվեն սխալ վարք՝ համապատասխան կարգապահական պատժի կիրառմամբ: Այսպիսի վերաբերմունքը խոսում է հասարակական իրազեկման լայնածավալ արշավի անհրաժեշտության մասին, որը կապացուցի սեռական բռնության քրեական բնույթը՝ այդ թվում եւ ամուսնական զույգի հարաբերություններում: Այն նաեւ խոսում է քրեական արդարադատության համակարգի մասնագետների հատուկ վերապատրաստման անհրաժեշտության մասին, որպեսզի նրանք կարողանան պատշաճ կերպով բավարարել սեռական բռնությունից տուժած եւ արդարություն փնտրող կանանց պահանջները:

Ընտանեկան բռնության դեպքերում հաշտեցման վրա շեշտադրումը պահպանում է ընտանիքը՝ ըստ այս գաղափարի ջատագովների: Իսկապես, պետությունը պարտավոր է պաշտպանել ընտանեկան կյանքը. Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների միջազգային համաձայնագրի 10(1) հոդվածը Հայաստանի հանրապետությունից պահանջում է «հնարավոր ամենալայն պաշտպանությամբ եւ աջակցությամբ ապահովել ընտանիքը, որը հասարակության բնական եւ առանցքային խմբային միավորն է»: Սակայն ընտանիքի պաշտպանությունը չի կարող առաջնային համարվել կանանց ու աղջիկների՝ առանց բռնության կյանքի իրավունքի հաշվին: Եթե քրեական արդարադատության համակարգը եւ սոցիալական վերբերմունքը ճնշում են գործադրում դաժան հարաբերություններից խուսափել ցանկացող կանանց վրա, տուժում են կանայք, որոնք ենթարկվում են շարունակական բռնության: Ըստ Amnesty International-ին հարցազրույց տված ՀԿ-ի ակտիվիստի, այս մոտեցումը խրախուսում է Հայաստանում տարածված այն վերաբերմունքը, որ բաժանված ընտանիքը ավելի վատ է, քան բռնության մեջ ապրող ընտանիքը: Ընտանիքում բռնության նկատմամբ հանդուրժողականությունը ազատում է պետությանը՝ անձանց այսպիսի բռնությունից պաշտպանելու իր պարտականություններից եւ բեռը զցում կանանց, իսկ շատ դեպքերում նաեւ երեխաների վրա՝ բռնության ֆիզիկական, հոգեբանական ու տնտեսական ազդեցության միջոցով:

Այս մոտեցումը անտրամաբանական չէ այն դեպքում, երբ բռնությունից խուսափող կանանց եւ երեխաներին տրամադրվող աջակցությունը շատ փոքր է կամ չկա: ՀԿ-ների մի քանի ակտիվիստներ շեշտեցին բաժանված կանանց ու միայնակ մայրերի դժվարություններն՝ անկախ ապրուստի միջոց, բնակավայր եւ այլ տիպի սոցիալական աջակցություն ստանալու հարցում: Amnesty International-ը համարում է, այնուհանդերձ, որ հաշտեցման վրա չափից ավելի շեշտադրումը չի կարող դիտվել որպես ընտանեկան բռնության գոհերի համար մատչելի արդարադատության ընդունելի այլընտրանք: Պետությունից պահանջվում է ամբողջական մոտեցում ցուցաբերել այս հարցին, որը պարտավոր է բռնությունից խուսափող կանանց աջակցության մի շարք մեխանիզմներ եւ ռեսուրսներ տրամադրի՝ ներառյալ աշխատանք գտնելու աջակցություն եւ երկարաժամկետ բնակատեղի:

Պետք է հաշվի առնել նաեւ ընտանիքում բռնությունը հանդուրժող հասարակության անուղղակի ծախսերը: ՀԿ-ների մի քանի ակտիվիստներ, պաշտոնյաներ եւ կանայք պատմեցին Amnesty International-ին որ Հայաստանը, որպես սոցիալ-տնտեսական լարված իրավիճակում գտնվող անցումային փուլի երկիր, չունի բավարար ռեսուրսներ կանանց նկատմամբ բռնության դեմ արդյունավետորեն պայքարելու համար: Ռեսուրսների բացակայությունը նշվել է նաեւ պաշտոնյաների կողմից՝ որպես նախատեսված միջոցառումների սահմանափակ լինելու հիմնական պատճառ: Չնայած ընտանեկան եւ սեռական բռնության դեմ միջոցառումների իրականացումը հայկական պետության առաջնային իրավական պարտավորությունն է (իսկ ռեսուրսների բացակայության դեպքում, տեխնիկական աջակցություն ստանալու համար հայկական իշխանությունները պետք է դիմեն ՄԱԿ-ի կազմակերպություններին), այն չիրականացնելը հանգեցնում է նաեւ զգալի անուղղակի սոցիալական ծախսերի: Ընտանեկան ու սեռական բռնության հետ կապված պետության ծախսերը դրանք ընտանեկան բռնության գոհերի

Ֆիզիկական եւ հոգեկան առողջության աջակցման ծառայությունների ծախսերն են՝ ներառյալ բռնության զոհերի բուժման եւ ապաստարանների եւ քրեական արդարադատության համակարգում բռնության քրեական հետապնդման ծախսերը: Այդ ծախսերը պետք է ընդունվեն եւ ընդունվեն հասարակության համար ընտանեկան բռնության անուղղակի ծախսերի համաքստում: Այն ներառում է աշխատավայրում կնոջ արդյունավետության վրա ընտենական բռնության ունեցած ազդեցությունը՝ աշխատանքից բացակայելու, պակաս արդյունավետության եւ աշխատավարձի ու հարկային մուծումների կորստի ձեւով, ինչպես նաեւ ընդգրկում այն ծախսերը, որոնք կրում են իրենց երեխաները՝ որպես վկա կամ որպես ընտանեկան բռնության հավելյալ զոհեր, եւ վերջապես մարդկային ցավի ու տառապանքի արժեքը:

Իսպանիայի Անդալուսիա ռեգիոնում վերջերս անցկացված ուսումնասիրությունը, որում համեմատվում էին անուղղակի եւ ուղղակի ծախսերը, հայտնաբերեց, որ կանխարգելիչ, օժանդակող ծառայությունները եւ դատական գործընթացները կազմում են ընտանեկան բռնության սոցիալական եւ տնտեսական ընդհանուր ծախսի միայն մեկ երրորդը (35%):⁹⁴ Այս ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտանեկան եւ սեռական բռնությունը կանխելուն ուղղված ծրագրերը, բռնության զոհերին ցուցաբերվող աջակցությունը եւ արդարության գործընթացը զգալիորեն պակաս ծախսատար են, քան բռնության սոցիալական եւ տնտեսական ազդեցությունը: Վերոհիշյալ ուսումնասիրությունը եզրակացնում է.

«Ազդեցությունն անցնում է տան եւ ընտանիքի սահամանը եւ տարածվում, ինչպես սովոր, ամբողջ հասարակության վրա: Այս երեւույթը էականորեն նվազեցնում է հասարակական եւ անձնական ռեսուրսները, որը կարող էր այլ ձեւով օգտագործվել, նյութական վնաս պատճառում զոհերին, նրանց ամենամոտ շրջապատին, ընկերություններին ու հասարակական սեկտորին, ու բացասականորեն ազդում անձնական եւ սոցիալական բարեկեցության վրա»:⁹⁵

Բացի այդ, կանանց եւ աղջիկների իրավունքները պաշտպանելու՝ Հայաստանի կողմից միջազգային օրենքով ստանձնած պարտավորությունների չկատարումը, ընտանեկան բռնության առումով անգործունությունը հանգեցնում է հասարակության եւ նրա ռեսուրսների համար էական անուղղակի ծախսերի:

5.3 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Շատ կանայք, որոնք ընտանական բռնության հետեւանքով բուժվելու կարիք ունեն, չեն դիմում բժշկի. ըստ Amnesty International-ին հարցազրույց տված առողջապահության աշխատակիցների՝ Լույսիսկ նրանք, ովքեր դիմում են, չեն բացահայտում իրենց վնասվածքի պատճառը: Սա արվում է ամոթից կամ այն համոզմունքից, որ բժիշկները չեն կարողանա օգնել իրենց: Այդ պատճառով առողջապահության աշխատակիցները հատուկ պատասխանատվություն են կրում ընտանեկան բռնությունը ճշգրիտ բացահայտելու գործում եւ պետք է վերապատրաստված լինեն դրան համապատասխանորեն արձագանքելու համար: Բժիշկներից օրենքը պահանջվում է հայտնել ընտանեկան բռնության դեպքի մասին եւ այս առիթով նրանք չպետք է հայցեն տուժողի համաձայնությունը: Սակայն իրականում բժիշկները հայտնում են ընտանեկան բռնության շատ քիչ դեպքերի մասին: Սոնոգրաֆիայի բաժնի ղեկավարի խոսքերով՝

Մենք տեսնում ենք ընտանեկան բռնության ապացույցներ. հոյի կանանց վրա կապտուկներ՝ ոչ դեմքի վրա, որ ոչ ոք չիմանա: Բայց կանայք ամուսինների մոտ չեն պատմի բռնության մասին, իսկ շատ հաճախ ամուսինները ավելի ուշ զանգ են տալիս մեզ ու բացատրում, որ կինը վայր է ընկել փողոցում ... Երբեմն կանչում ենք ոստիկանությանը, բայց նրանք սրան նորմալ են վերաբերվում: Մի ոստիկան ինձ ասաց. «սա նորմալ է, սա հայկական ընտանիք է»: Տարին ընդամենը 2-3 դեպքի մասին ենք հայտնում»:⁹⁶

Ինչպես պարզվում է, առանց բռնության զոհի՝ ոստիկանությունն դիմելու հստակ ինդիկատորների առողջապահության աշխատակիցներն անհարմար են զգում միջամտել:

Բժշկական անձնակազմն ընտանեկան բռնությունը հայտնաբերելու եւ արձագանքելու

Նպատակով պարբերական վերապատրաստվում չի անցնում, իսկ ընտանեկան բռնության հանդիպած բժիշկների եւ համապատասխան իրավապահների միջեւ երկկողմ ուղղորդման համար որեւէ արդյունավետ գործող ընթացակարգ գոյություն չունի: Նմանատիպ երկկողմ ուղղորդումները տեղի են ունենում միմիայն անձնական կապերի շնորհիվ այլ ոչ ուղղորդման ֆորմալ համակարգի միջոցով: Երեւանի առողջապահության աշխատակիցները տեղեկացրին, որ կապ չունեն օժանդակ ծառայությունների կամ ընտանեկան բռնության հարցով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ: ՀԿ-ների ակտիվիստները հայտնեցին նաեւ ընտանեկան բռնության արդյունքում բժշկական օգնության դիմած կանանց նկատմամբ գերիշխող թշնամական վերաբերմունքի մասին: Ընտանեկան բռնություն վերապարծներին հոգեբանական օգնություն ցուցաբերող մի ՀԿ-ի տնօրեն հայտնեց, որ «մենք մի հոգեբան չգտանք, որը կնստյաց, «մաչո» կամ հոմոֆոբ չլինի»:⁹⁷

5.4 ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՂԵԿԿԱՏ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Վերջին խոսքի իրավունքը միշտ հայ տղամարդունն է: (Գեղարքունիքի ոստիկան)

Եթե հասարակական ընդհանուր վերաբերմունքը պատժում է կնոջը, որը բռնություն կիրառող ամուսնուց փոխհատուցում է ցանկանում ստանալ, ապա իրավապահների պատասխանները կարող են առավել եւս ետ կանգնեցնել կնոջն արդարություն ակնկալելուց եւ նույնիսկ որոշ դեպքերում ճնշել նրան՝ ետ վերցնել բողոքը: 2008 թվականի փետրվար եւ հուլիս ամիսներին Հայաստանում անցկացված հետազոտության ժամանակ Amnesty International-ը տեղեկացավ մի քանի եղանակների մասին, որոնց օգնությամբ ոստիկանությունը կանխում է ընտանեկան բռնության բողոքների հետպնդումը քրեական արդարադատության համակարգի միջոցով: Մի եղանակը դա պարզապես ներգրավված լինելու դժկամությունն է. ոստիկանության վերապատրաստմամբ զբաղվող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից ստացված Amnesty International-ի հաշվետվությունների համաձայն՝ 20 տարվա աշխատանքային փորձ ունեցող ոստիկանության ավագ աշխատակիցները հայտնել են, որ իրենց աշխատանքի ընթացքում գործ չեն ունեցել ընտանեկան բռնության եւ ոչ մի դեպքի հետ:⁹⁸

Այլ դեպքերում ոստիկանությունը ընդունում եւ պնդում է այն տեսակետը, որ ընտանեկան բռնությունը դա ներքին «ընտանեկան գործ է», որը պետք չէ հասարակայնորեն հետապնդել: Մի քանի կանայք հայտնել են Amnesty International-ին, որ իրենց վրա ուժեղ ճնշումներ են կիրառվել՝ բողոքները ետ վերցնելու համար.

Երբ գնացի ոստիկանություն, գիշերվա կեսն էր ու ոստիկաններին դուր չեկավ, որ մենք այդքան ուշ եկանք: Նրանք մտածեցին մեղավորը ես եմ, որովհետեւ այստեղ ընդունված չէ, որ կինը ոստիկանությանը հայտ ներկայացնի իր սկեսրոջ դեմ: Ընդունված չէ, որ ոստիկանությունը, պետությունը մեզ պաշտպանեն: Ոստիկանները... փորձեցին համոզել ինձ գործը չբարդացնել, որ սկեսրայրս ծեր մարդ է, եւ այլն, եւ այլն ... Բայց դա չազդեց: Հետո դատախազը ինձ ասաց, որ սա ընտանեկան վեճ է, որն ինքներս պիտի լուծենք: Հետո նա փորձեց ինձ շանտաժի ենթարկել: Ասաց, որ եթե գործն առաջ տանեն, դա կազդի իմ երեխաների վրա: Ենթատեքստը նա էր, որ եթե երեխաներիցս մեկը ցանկանա իրավաբան դառնալ կամ նման մի բան, այս բեռով հեռու չի գնա: Այդ պատճառով հայտս ետ վերցրեցի: (Ա.Դ.)

Amnesty International-ի հարցազրույցները կանանց, ՀԿ-ների ակտիվիստների ու ոստիկանների հետ ցույց են տալիս, որ անհատ ոստիկանները հաճախ իրենք են փորձում «հաշտեցնել» կնոջն ու ամուսնուն՝ առանց ֆորմալ ընթացակարգերի կամ ուղեցույցերի: Տեղի ոստիկանությունը կարող է տարբեր միջոցներ փորձել՝ ընտանեկան բռնությանը վերջ դնելու համար: Դրանցից են մեղավորին ոչ պաշտոնական նախազգուշացումը, ոչ պաշտոնական հազուստով այցը տուն՝ մեղավորին «հանգստացնելու» համար, եւ կոնֆլիկտը մեղմելու համար ավագանուն դիմելը. «Մենք փնտրում ենք տան ազդեցիկ մեծահասակին ու խնդրում կոնֆլիկտը լուծել»:⁹⁹ Այս ոչ ֆորմալ ընտանեկան կառույցների օգտագործման արդյունքում ընտանեկան բռնության շատ քիչ դեպքեր են գրանցվում՝ որպես պաշտոնական հանցագործություն: Արդյո՞ք այդ մարտավարությունը

կիռավում է վերելների կարգադրությամբ հարցին ի պատասխան մի ոստիկան ասաց. «Կա կարգադրություն, կա քո խիղճը»՝ ակնարկելով, որ համայնքի ոստիկանը իր պարտականության մասն է համարում ընտանեկան բռնության պաշտոնական գրանցումից խուսափելը: Ըստ Մարտունիում (Գեղարքունիքի մարզ) ոստիկանի հետ Amnesty International-ի հարցազրույցի, դատական համակարգի միջոցով արդարություն հետապնդող կինը համարվում է «վատ կին» եւ միայն ապահարգան ու հասարակական պարսավանք կարող է ակնկալել: Ոստկանությունը այս դեպքում իր պարտքն է համարում նման արդյունքից խուսափել. «Մենք ամեն հնարավորն անում ենք, որ այս դեպքերը [ընտանեկան բռնության] չհասնեն դատարան: Երեխաները չեն կարող առանց հոր մեծանալ, կինը չի կարող ապրել առանց ամուսնու: Կանայք նույնպես խուսափում են բաժանվելուց»:¹⁰⁰

Համաձայն ֆորմալ ընթացակարգի, ոստիկանն առաջին անգամ հանցագործություն կատարողից կարող է ստորագրություն վերցնել առ այն, որ նրանք այլեւս բռնություն չեն կիրառի. ստորագրված հայտարարությունը չունի պաշտոնական իրավական ուժ, բայց իրավազանցների վերցնում են խիստ հսկողության տակ: Կանանց մեծ մասը հայտնել է Amnesty International-ին, որ այս ընթացակարգը , այնուամենայնիվ, արդյունավետ չէ: Չնայած ընթացակարգը տեխնիկապես սահմանափակվում է առաջին անգամ հանցագործություն կատարողներով, որոշ կանայք տեղեկացնում են, որ այն շարունակվում է կիրառվել բռնությունն իրենց հարաբերություններում «նորմալ» երեւոյթ դառնալուց հետո եւս: Այլ կանայք հայտնում են, որ ստորագրված հայտարարությունն արդյունավետ կանխարգելիչ հանգամանք չի ծառայում, հատկապես եթե չկա ոստիկանության կողմից ակտիվ վերահսկում եւ հետագա գործողություն:

Ես 15 տարի ամուսնացած էի, երբ 1994 թվականին սկսվեցին խնդիրները: Ես վեց երեխա ունեմ: Երեխաներ սիրում եմ եւ, երբ առաջին անգամ հղացա, ինձ ասացին, որ կարող է երեխա ունենալու հետ խնդիրներ ունենամ: Այդ պատճառով միշտ երջանիկ էի, երբ հղի էի: Բայց ամուսինս այսքան երեխաներ չէր ուզում, նա ուրախ կլիներ երկու-երեք երեխայով: Ծեծից խուսափելու համար մի քանի անգամ փախել եմ: Շաբաթներով, նույնիսկ ամիսներով ապրում էի ծնողներիս, ազգականներիս հետ: Մի անգամ գնացի ոստիկանություն եւ նրանից գրություն վերցրեցին: Բայց այդպես շարունակվեց մի քանի տարի, մինչեւ որ մի օր նա ինձ շատ դաժան ծեծեց, կոտրեց մատս ու տևից դուրս շարտեց: (Դ.Մ.)

Երեւանում ՀՀ ոստիկանության համապատասխան ներկայացուցիչների հետ հանդիպելու Amnesty International-ի շարունակական փորձերը 2007 թվականի փետրավարին եւ հուլիսին ցավոք անհաջող անցան: 2008 թվականի մայիսի 19-ին Amnesty International-ը գրավոր դիմում ներկայացրեց Հայաստանի հանրապետության ոստիկանությանը՝ ընտանեկան բռնության ոլորտում ոստիկանների վերապատրաստման հարցի վերաբերյալ, սակայն այն անպատասխան մնաց: *Կանանց կարգավիճակը բարելավելու ու նրանց դերը հասարակության մեջ բարձրացնելու գործողությունների ազգային ծրագիրը* նախատեսում է «բազմակողմանի կրթություն եւ վերապատրաստման դասընթացներ ...բռնության զոհ դարձած կանանց հետ զբաղվող իրավապահ մարմինների աշխատակիցների համար»: Amnesty International-ի ունեցած տեղեկությունների համաձայն՝ վերապատրաստման այսպիսի դասընթացը ՀՀ ոստիկանության ակադեմիայում պարբերական վերապատրաստման ծրագրի մաս դեռ պետի է կազմի: Չնայած այն արդեն ներառում է մարդու իրավունքների հարցերով ավելի ընդհանուր առարկաներ, ընտանեկան բռնությանը վերաբերող դասընթաց չկա:¹⁰¹ Վերապատրաստումից բացի՝ Amnesty International-ն անհրաժեշտ է համարում ոստիկանության պրակտիկայի վերանայումը, որը կհստակեցնի կասկածելի թվացող ընտանեկան բռնության դեպքում արձագանքելու ստանդարտ ընթացակարգը: Եթե ոստիկանները չեն կարողացել իրականացնել իրենց պարտականությունը այդ կասկածների հետաքննման հարցում, նրանք պետք է պատժի ենթարկվեն՝ իրենց պարտականությունը առհամարիելու համար: Չնայած վերը նշվածին՝ Amnesty International-ը գովելի է համարում այս հարցով զբաղվելու ոստիկանության պատրաստակամությունը: Հանրապետության ողջ տարածքում Կանանց հարցերով զբաղվող ՀԿ-ների ակտիվիստները հայտնել են տեղի ոստիկանության հետ ունեցած լավ հարաբերությունների եւ ընտանեկան բռնության դեմ պայքարի վերապատրաստման ծրագրերի վերաբերյալ խանդավառ արձագանքների մասին:

Գոյություն չունեն կանանց նկատմամբ բռնության հարցերով զբաղվող հատուկ բաժիններ, նույնիսկ չկան այս ոլորտում պաշտոնապես պատասխանատու անձինք: Դրա փոխարեն կանանց նկատմամբ բռնության հարցերով ոչ ուղղակիորեն զբաղվում են դեռահասների եւ երեխաների վրա ընտանեկան բռնության գործադրման դեպքերի քննությունն ապահովող մարմինները: Ոստիկանության ընդհանուր վերապատրաստմամբ զբաղվող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները Amnesty International-ին հայտնեցին կին ոստիկաններին «առաջին գծում» տեսնելու դժվարության մասին. կանայք դեր են ստանձնում այն կառույցներում, որոնք զբաղվում են դեռահասների հանցագործությամբ:¹⁰² Անհրաժեշտ է այս ոլորտում եզակի կամ հազվադեպ վերապատրաստումներից անցնել ընտանեկան բռնության գործերի վարումը համայնքի բոլոր ոստիկանների վերապատրաստման անբաժան մաս դարձնելուն եւ աստիճանաբար ավելացնել կին ոստիկանների թիվն այս ոլորտում:

5.5 ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՒ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ապաստարան գնալն առաջին քայլն էր: Ապաստարանն ինձ թույլ տվեց անել այդ առաջին քայլը, ասել՝ բավական է, այլեւս այսպես չեմ կարող ապրել: (Պ.Ն.)

Ընտանեկան բռնության գոհերի համար ժամանակավոր ապաստարանները կարելու գործիք են կանանց իրավունքների պաշտպանության եւ բարձր ռիսկային իրավիճակում անհապաղ անվտանգություն ապահովելու գործում: Հայաստանում այժմ չկան պետական ապաստարաններ, չնայած Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից Amnesty International-ին հայտնել են, որ 2009 թվականի բյուջեով նախատեսված են հատկացումներ՝ պետական ապաստարան բացելու համար:

Մի քանի ՀԿ-ների ապաստարաններ ընդմիջումներով աշխատել են 2002 թվականից, երբ ԱՄՆ ՄՉԳ-ի (USAID) ֆինանսավորմամբ բացվեց չորս ապաստարան՝ «դառնալով սուր քննադատության թիրախ՝ ընտանիքում պահպանելու փոխարեն այս հարցը հանրային քննարկման առարկա դարձնելու համար»:¹⁰³ Հայաստանի մայրության ֆոնդի եւ Կանանց իրավունքների կենտրոնի կողմից երկու ապաստարան էր բացվել Երեւանում: Երրորդը՝ «Աջակից» կազմակերպության կողմից Գյումրիում, իսկ չորրորդը՝ Մարտունիում՝ Մարտունու կանանց համայնքային խորհրդի կողմից (մանրամասների համար տե՛ս Հասարակական կազմակերպություններ, Մաս 6.1):

Մայրության ֆոնդի «Սոր եւ մանկան տունը» ընտանեկան բռնության գոհերին տրամադրում էր 12 տեղ երեք ամիս ժամկետով: Մեկ տարվա ընթացքում ավելի քան 28 կին ու 42 երեխա են ապաստանել այստեղ:¹⁰⁴ Մայրության ֆոնդի «Հույս» կենտրոնը տրամադրում էր պրոֆեսիոնալ իրավաբանի, հոգեբանի, թերապեւտի եւ սոցիալական աշխատողի ծառայություններ: Կանանց իրավունքների կենտրոնի կացարանն ուներ մինչեւ հինգ ընտանիք ընդունելու եւ մեկ գիշերից մինչեւ մի քանի շաբաթ ժամկետով բնակվելու հնարավորություն: 2006 թվականի մայիսի 1-ից մինչեւ 2007 թվականի հունվարի 25-ը այստեղ ապաստան են գտել 43 հոգի (19 կին եւ 24 երեխա): Կացարանը նաեւ հոգեբանական խորհրդատվության ծառայություն էր տրամադրում՝ բռնության գոհերին օգնելով հաղթահարել վերապրածը, ինչպես նաեւ նրանց տրամադրում իրավաբանական խորհրդատվություն եւ օգնում վերապատրաստման եւ աշխատանք գտնելու հարցում: Մյուս կացարանները եւս նմանատիպ ծառայություններ էին տրամադրում, սակայն ավելի փոքր մաշտաբով:

Գիտեք, երբ առաջին անգամ պատկերացրի կացարանը, կարծում էի կլինի ուսանողական հանրակացարանի նման մի բան, ինչ-որ ահավոր սենյակներ ինչ-որ տեղ: Գիտեք, որովհետեւ արդեն սոսկալի հոգեկան վիճակում ես գտնվում, մտահոգվում ես երեխաների մասին եւ ինչ կլինի սա նրանց համար: Մենք պիտի միասին տեղավորվենք մի փոքր սենյակում: Գժվում էի: Իսկ երբ եկա ապաստարան, տեսա այս գեղեցիկ տունը՝ բակով, ծառերով, ննջարաններով ու հյուրասենյակով, ոնց որ տուն լիներ, ոչ թե հյուրանոց: Հարմարավետ էր ու ջերմ, ինչպես ընտանիքի տունը: Սա այնքան կարեւոր էր: (Պ.Ն.)

Պետության կողմից ֆինանսական կամ այլ աջակցության բացակայության պայմաններում դոնորային պարբերաբար ստացվող ֆինանսավորման ցիկլերն ապաստարանների արդյունավետ շահագործման էական խոչընդոտ են: 2008 թվականի փետրվարի դրությամբ բոլոր վերոհիշյալ ապաստարանները փակվել են, չնայած ՀԿ-ների շրջանում վստահ չէին, թե որ կացարաններն են դեռ գործում: Հավելյալ ֆինանսավորում ապահովելու շնորհիվ «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի ապաստարանը միակն էր, որ վերաբացվել է 2008 թվականի հուլիսին:

Ապաստարանների ցանցի ստեղծումը պետք է դառնա կանանց բռնությունից պաշտանելու կառավարական ռազմավարության առանցքային տարրը: Կացարանները պետք է բշկական, հոգեբանական ու իրավական օգնության կարիք ունեցող կանանց ուղղորդեն՝ բռնությունից գերծ ընտանիք ապահովելու համար: Ապաստարանը, սակայն, ունիվերսալ լուծում չէ: Բացառապես ապաստարաններին ապավինելը գյուղական վայրերում բարդություններ կարող է առաջացնել, քանի որ ապաստարան այցը գաղտնի պահելը շատ անհավանական է. «[ա]վանդական բնակավայրերում ոչ ոք չի գնում [ապաստարան], որովհետեւ երբ վեռադառնաս, էլ ավելի վատ կլինի: Երեւանում կարող ես պատսպարվել , բայց մարզերում բոլորն իրար ճանաչում են, այդ պատճառով կացարանների գաղափարը սխալ է: Այստեղ պետք է աշխատել տարբեր հաստատությունների հետ, օրինակ ոստիկանության, ֆորմալ հաստատությունների հետ, որոնք կարող են միջամտել»:¹⁰⁵

5.6 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՊԱՏԺԼԻՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նկատել է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը.

Պատշաճ քրեական արդարադատության համակարգի գործարկման հարցում պետության անգործությունը հատկապես քայքայիչ ազդեցություն կարող է ունենալ, քանի որ կանանց նկատմամբ բռնության անպատժելիությունը խրախուսում է հետագա բռնություն եւ ամրագրում կանանց ենթակայությունը: Պետության անգործությունը կանանց նկատմամբ բռնության պատճառների դեմ պայքարում հանդիսանում է մարդու իրավունքների մասով պարտավորությունների չկատարում...¹⁰⁶

Միջազգային Համաներման տվյալների համաձայն ընտանեկան բռնության քիչ դեպքեր են դատարան հասնում համեմատած այլ ործադրված բռնի հանցագործությունների: ՀԿ-ների ակտիվիստներն ու կանայք հայտնեցին, որ շատ դեպքեր չեն հասնում քրեական հետաքննության փուլին այն պատճառով, որ տուժողի վրա ճնշում է գործադրվում՝ բողոքը ետ վերցնելու համար: Amnesty International-ն անհանգստացած է այն փաստով, որ ընտանեկան բռնության մեղավորների դեմ դատական գործ կարող է հարուցվել միայն տուժածի ցուցմունքի հիման վրա: Ոստիկաններն առանց տուժածի գրավոր դիմումի չեն կարող միջամտել. եթե հարեւանները կամ ազգականները դիմեն ոստիկանություն, սրանց չի թույլատրվում դատ հարուցել: Բողոք ներկայացնելու ծանրությունն ընկնում է տուժողի ուսերին, ինչը, այս զեկույցում քննարկված բազում պատճառներով, շատ անհավանական է: Ավելին, դատական գործերը կարճվում են, եթե համարվում է, որ դիմողը «հաշտվել է» մեղադրյալի հետ, ինչը, համաձայն վերը նշվածի, նա անում է ճնշման տակ:

Հետապնդվող քրեական գործերն առավել հաճախ վերաբերում են հատկապես լուրջ ֆիզիկական վնասվածքի կամ մահվան դեպքերին: Գլխավոր դատախազի գրասենյակից Amnesty International-ին տրված տեղեկության համաձայն՝ 2006 եւ 2007 թվականներին ընդհանուր առմամբ 63 տղամարդ դատապարտվել են իրենց կանանց կամ զուգընկերուհիների դեմ կատարած տարբեր հանցանքների համար կամ ընտանեկան ու սեռական բռնությանը վերաբերող ՀՀ Քրեական օրենսգրքի հոդվածներով: Այդ թվում գրանցվել է իրենց ամուսինների կամ ինտիմ զուգընկերների կողմից կանանց սպանության 8 դեպք եւ 112, 113, 118 եւ 119 հոդվածներին առնչվող 47 դեպք (ծանր մարմնական վնասվածք, միջին չափի մարմնական վնասվածք, ծեծ եւ խոշտանգում):¹⁰⁷ Այն 2006-2007 թվականների ՀՀ դատավճիռների ընդհանուր թվի 1,3%-ն է կազմում:

Amnesty International-ին ուղղված 2008 թվականի հունիսի 20-ի նամակում Գլխավոր դատախազի գրասենյակը հայտնում է, որ «[2]006-2007 թվականների ընթացքում իրենց կանանց կամ ինտիմ զուգընկերներին սպանած տղամարդկանց թիվը փոքր է, համապատասխանաբար փոքր է նաև իրավական դեպքերի թիվը»: Սա արդարացի է, եթե խոսքը սպանության մասին է, սակայն Amnesty International-ն անհանգստացած է, որ բռնության ավելի թեթև բնույթի հանցանգործությունների զգալի մասը չի հայտնվում, իսկ եթե նույնիսկ դրանք հայտնվում են, ապա բողոքները չեն հասնում դատարան՝ բռնության զոհերի հանդեպ ոչ կարեկից վերաբերմունքի եւ զոհերի՝ արդարության հասնելու հավատի պակասի պատճառով:

Այս զեկույցի համար անցկացված հետազոտության ժամանակ Amnesty International-ը բախվեց կանանց նկատմամբ բռնության մասին հայտնել չցանկանալու խորը արմատավորված մշակույթին, նույնիսկ կանանց շրջանում: Սա արտացոլում է այն վերաբերմունքը, որ ընտանեկան բռնության մասին հայտնող կինը «լավ կին չէ»: Հայաստանի մարզերից մեկում իրավապահները տեղեկացրին, որ եթե ընտանեկան բռնության մասին կնոջ բողոքը հանգեցնի քրեական հետապնդման, նա որպես կանոն ստպված կլինի ամուսնուց բաժանվել:¹⁰⁸ Կանանց նկատմամբ բռնությունը քրեական արդարադատության համակարգով հետապնդելու դեմ ճնշումները նշանակում են, որ դատավճիռների պաշտոնական վիճակագրությունը չի կարող խնդրի սահմանափակ լինելու ապացույցը համարվել: Ինչպես նկատեց մի կառավարական պաշտոնյա, սա նշանակում է նաև, որ դատավճիռների տոկոսները ընտանեկան բռնության դեմ պայքարի միջոցների հաջողության կամ անհաջողության քանակական ցուցանիշ չեն կարող համարվել:¹⁰⁹

Վերը նշվածի համաձայն 2006-2007 թվականներին արձանագրվել է սեռական բռնության չորս դատավճիռ, երկուսը՝ 138 հոդվածով (բռնաբարություն) եւ երկուսը՝ 139 հոդվածով (սեռական բռնություն): Հոդվածներ 140-142-ով (սեռական բռնության գործողությունների հարկադրում, սեռական գործողություն անչափահասի հետ եւ անպարկեշտ վարք) դատավճիռներ չեն եղել, Amnesty International-ի տվյալներով չեն եղել նաև դատավճիռներ Աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածով (սեռական ոտնձգություն): Այս վիճակագրությունից ելնելով՝ կարելի է լրջորեն անհանգստանալ կանանց կամ ինտիմ զուգընկերուհիների նկատմամբ սեռական բռնության եւ աշխատանքի վայրում սեռական ոտնձգության համատարած անպատժելիության մասին:

Amnesty International-ի տեղեկություններով, ընտանեկան եւ սեռական բռնության զոհերին դատական գործը հետ վերցնելու ճնշումից պաշտպանելու դրույթներ չկան: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ եթե քրեական գործի հարուցումը եւ դրա հետապնդումը կախված է ընտանեկան կամ սեռական բռնության ենթարկված կնոջից, նրան ճնշում է երբեմն էլ վախեցնում են գործընթացը դադարեցնելու համար: Այս հանգամանքներում միջազգային հանրությունը շեշտում է, որ դատական գործի հարուցման առաջնային պատասխանատվությունն ընկնում է մեղադրող կողմի, այլ ոչ բռնությանը ենթարկված կանանց վրա»:¹¹⁰ Կանայք, իհարկե, պահպանում են դատական գործ հարուցելու իրավունքը, բայց պետությունը պարտավոր է հանցագործության կասկածի դեպքում քրեական հետաքննություն սկսել եւ հատապնդել մեղավորին, եթե կա հանցագործության ապացույց: Այսպիսի հանցագործությունների զոհերը կարող են որպես վկա կանչվել, եթե գործը հարուցում է դատախազը՝ նպաստելով զոհի անվտանգությանը: Կանայք պետք է, այնուամենայնիվ, պահպանեն վկա հանդես չգալու իրավունքը, ինչի պատճառները (ներառյալ հետագա եւ ավելի դաժան բռնությունը, տան կորուստը, տնտեսական մեկուսացումը եւ այլն) պետք է անկողմնակալ քննվի՝ դրանց հնարավորինս ճիշտ լուծում տալու նպատակով:

Ընտանեկան եւ սեռական բռնության մեղավորների անպատժելիությունը շարունակական է դարձնում այս հանցագործությունները: Իշխանությունները պետք է հասարակությանն անհապաղ հստակ ներկայացնեն, որ սրանք հանցագործություններ են եւ մարդու իրավունքների խախտումներ: Անհրաժեշտ է ակտիվ քայլեր ձեռնարկել ուժեղացնելու իրավապահ մարմինների եւ դատախազության ներուժը եւ իրագործելու՝ կանանց կողմից իրենց նկատմամբ կիրառված բռնության մասին դիմումներին պատշաճ արձագանք տալու պարտքը:

5.7 ԸԱՂԱՔԱՑԻՎՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴԵՊՔԵՐ

Շատ դեպքերում բռնությամբ ուղեկցվող հարաբերությունից խուսափելու համար կանայք ընտրում են ապահարզանի: Այս գործընթացը կարող երկար տեւել, իսկ անորոշ վիճակում նոր բռնության վտանգը հատկապես մեծ է: Amnesty International-ին հարցազրույց տված կանայք պատմեցին ապահարզանի դիմումի երկարատեւ, ձգձգվող բնույթի մասին, եւ որ դատարանները չեն գիտակցում այն ռիսկը, որին ենթարկվում են ապահարզանի դիմած կանայք:

Իմ միակ ցանկությունը վերջին հինգ-վեց տարիների ընթացքում այս մարդուց բաժանվելն էր եւ այլեւս երբեք չտեսնելը: Բայց ես մինչեւ հիմա չեմ կարող դա անել, չեմ կարող նրանից ազատվել: Երբ ասացի, որ ապահարզան եմ ուզում, նա ինձ ծեծեց ու ասաց «դու ինձնից բաժանվելու իրավունք չունես»: [...] Հինգ տարի ես բաժանվել էի ուզում, ու տեղ չկար գնալու: Երբ ես ապահարզանի հայտ ներկայացրի, նշանակվեց լսումը, ես գնացի, բայց ամուսինս չեկավ: Դատավորը նշանակեց երկրորդ լսումը, բայց նա կրկին չեկավ, եւ երրորդը, ու այսպես շարունակ: Դատարանները չեն ուզում, որ բաժանվես: Դա նրանց դիրքորոշումն է, նրանք չեն ուզում, որ ընտանիքը կիսվի: Այդ պատճառով միշտ ժամանակ են տալիս մտածելու, չեն ուզում քեզ բաժանված տեսնել: (Պ.Ն.)

Amnesty International-ը համարում է, որ հետագա բռնության ռիսկի տակ գտնվող կանանց գործերը պետք է առաջնային համարվեն դատախազների եւ դատարանների կողմից: Դատախազներն ու դատավորները պետք է վերապատրաստվեն՝ ճանաչելու համար, թե որ դեպքում է քաղաքացիական իրավունքով հարուցված գործի պատճառը ընտանեկան բռնությունը կամ դրա կրկնվելու վտանգը: Կնոջ եւ նրա խնամքի տակ գտնվողների անվտանգության ապահովումն այս դեպքերում պետք է առաջնային լինի:

5.8 ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Մի շարք պատճառներով շատ կանայք չեն կարող առիավետ լքել իրենց դաժան զուգընկերներին եւ մնում են նրանցից տնտեսական կախվածության մեջ շղթայված: Շատերի համար դա այլընտրանքային բնակվայրի եւ ապրուստի միջոցի բացակայության խնդիրն է:¹¹¹ Շատ կանայք չունեն անկախ ֆինանսական միջոցներ՝ այլ բնակվելու վայր վարձելու կամ գնելու համար, իսկ ազգականները երբեմն չեն կարող կամ չեն ցանկանում բռնության ենթարկված կանանց ու նրանց երեխաներին մշտական խնամքի տակ առնել:

Այլոց համար խնդիրը նախկին ամուսինների հետ ընդհանուր սեփականության իրենց մասնաբաժնի պահպանելն է: Նույնիսկ այն դեպքերում, երբ կանայք բարեհաջող բաժանվում են ամուսիններից, նրանք կարող են շարունակել ապրել նույն հարկի տակ նախկինում իրենց նկատմամբ բռնություն կիրառած անձի հետ, որպեսզի պահպանեն ընդհանուր սեփականության իրենց մասը: Շատ դեպքերում բնակարանը պատկանում է ամուսուն եւ նրա ընտանիքին: Չնայած սեփականության ու ժառանգության իրավունքների առումով կանայք եւ տղամարդիկ հավասար են օրենքի առաջ, սեփականությունը Հայաստանում ավանդաբար փոխանցվում է արու ժառանգներին: Միայն ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքն է համարվում ընդհանուր սեփականություն, որին կինը հավասար հավակնություն ունի: Այնուամենայնիվ, նույնիսկ այդ դեպքերում Amnesty International-ին հայտնի դարձան դեպքեր, երբ նախկին ամուսինները չեն համաձայնվում ապահարզանից հետո ընդհանուր սեփականությունը կիսել՝ ստիպելով իրենց նախկին կանանց շարունակել համատեղ կյանքը:

Կացարանի օգնությամբ ես ապահարզանի հայտ ներկայացրի ու բաժանվեցի, բայց ամուսնուս հետ դեռ ապրում եմ նույն հարկի տակ, որովհետեւ տունը մեծ է, եւ ես այն կառուցելու համար մեծ ջանքեր եմ գարծադրել ու չեմ ուզում այն կորցնել: Եթե գնայի, ես ու երեխաներս կկորցնեինք տունը: (Պ.Մ.)

Թեժ գծի մասին իմացա պատահաբար: Ես եկա այստեղ ու համաձայնվեցի իրավաբանի հետ, որ ապահարզանը լավագույն տարբերակն է: Ուզում էի, որ ամուսինս բուժում անցնի: Հիմա մենք ապրում ենք նույն բնակարանում, որովհետեւ իմ զրանցման հետ՝ որպես համասեփականատեր, խնդիր կա: Նրանից բաժանվելը ոչինչ չփոխեց, քանի որ ես անկախ չեմ կարող ապրել: Չեմ կարող

զնալ ոստիկանություն, որովհետև երբ ասում եմ, որ կզանգեմ ոստիկանություն, իրավիճակն ավելի է վատանում, նա շրիկացնում է դռները, իրերը դես ու դեն շարտում: (Կ.Դ.)

Ամուսնությունից հետո իրենց ամուսինների հետ գյուղական վայրեր տեղափոխված հարսներն իրենց համատեղ սեփականության իրավունքների ոտնահարման հատկապես մեծ վտանգի տակ են, որը հնարավոր է իրականացվի տեղի կլանների ազդեցության տակ գտնվող տեղական կառավարման մարմինների եւ դատական ատյանների կողմից: Amnesty International-ը մի դեպքի մասին տեղեկացավ, երբ ամուսնությունից հետո ստեղծված սեփականության իր բաժնի նկատմամբ կնոջ պահանջն արգելվել է նախկին ամուսնու ազգականների՝ Արագածոտնի մարզի ամուսնու գյուղի տեղական դատարանի պաշտոնյաների կողմից: Կինն ու նրա երկու որդիները կամայականորեն հանվել են տեղի գրանցամատյանից, այդպիսով կորցնելով այդ վայրում բնակության թույլտվությունը. կինը գրկվել է իր իրավունքից՝ որպես նախկին կին, իսկ որդիները՝ որպես ամուսնու կողմից բնակեցված սեփականության ժառանգներ:

Երբ որոշեցի բաժանվել, հանդիպեցի մի քանի իրավաբանների: Բայց տունը, որ կիսում էի ամուսնուս հետ նրա գյուղում էր, իսկ տեղի գյուղապետն ինձ դեմ էր: Նա ամեն տեսակի խոչընդոտներ էր ստեղծում ու ետ վերցնեմ տան մի մասի սեփականության իրավունքն ապացուցող փաստաթղթերը: Ապահարզանից հետո ամուսինս ստիպեց գյուղապետին չեղյալ ճանաչել գյուղում տղայիս բնակության թույլտվությունը: Իմ մեծ որդին հիմա 16 տարեկան է եւ դեռ չի կարողացել վերագրանցվել, այդ պատճառով չի կարողացել նաեւ անձնագիր ստանալ: Առանց անձնագրի նա չի կարող ճանապարհորդել, վիզա ստանալ կամ բաժրագույն կրթության դիմել: (Ն.Ս.)

Կնոջ իրավունքի խոցելիությունն այսպիսի հանգամանքներում հզոր խոչընդոտ է բռնությամբ ուղեկցվող հարաբերությանը վերջ դնելու ճանապարհին:

Հայկական իշխանությունները պետք է երկարաժամկետ լուծումներ գտնեն ընտանեկան եւ սեռական բռնության զոհերի համար, որպեսզի իրականացնեն կանանց հանդեպ խտրականությունը կանխելու իրենց պարտավորությունը: Այս լուծումներից են սեփականության արդար ու ժամանակին բաժանման դատական կենսունակ մեխանիզմների ստեղծումը, ապահարզանից հետո բնակության գրանցման խտրականության բացառումը, ընտանեկան եւ սեռական բռնություն վերապրածների համար մասնագիտական վերապատրաստման հնարավորությունը, (նախկին) ամուսիններից կամ զուգընկերներից ֆինանսական անկախություն ապահովող աշխատանք գտնելու աջակցությունը եւ պատշաճ ու ապահով բնակատեղիով ապահովումը:

6. ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐԸ

Երբ կինը գալիս է ապաստարան, նա գոհ է: Երբ նա դուրս է գալիս, նա այլևս գոհ չէ, նա հասարակության լիիրավ անդամ է՝ նույն իրավունքներով, ինչպես եւ բոլորը:¹¹²

ՀԿ-ների ակտիվիստների մեծ մասը, որոնց հետ հանդիպել է Amnesty International-ը, համաձայնվել են, որ Հայաստանում վերջին տարիներին ընտանեկան բռնության նկատմամբ պետական պաշտոնյաների վերաբերմունքի որոշ բարելավում կա: Եթե նախկինում պաշտոնական մոտեցումը ժխտումն էր, այժմ կա ընտանեկան բռնության փաստի ընդունում: ՀԿ-ների որոշ ակտիվիստների կարծիքով, սակայն, ընտանեկան բռնության գոյության ընդունումը պաշտոնյաների կողմից չի վերափոխվում դրա որպես պրոբլեմ ընդունմանը: Ակտիվիստներից մեկը վերհիշեց 2001 թվականին Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կազմակերպության կողմից կազմակերպված ընտանեկան բռնությանը վերաբերող դասընթացի ժամանակ ՀՀ Ոստիկանության մի պաշտոնյայի մեկնաբանությունը. «Եթե կինը գնա ապաստարան կամ թեժ գիծ գանգ տա, ավելի լավ է՝ տուն չգա»: Այս հայտարարությամբ նա ընդունում է, որ գոյություն ունի ընտանեկան բռնություն, բայց վերադառնում է ավանդական գենդերային կոդերին՝ բարդելով մեղքը գոհի վրա: Վերջերս կառավարության պաշտոնյաները ակտիվորեն փորձել են ներառել կանանց կազմակերպությունները ընտանեկան բռնությանը վերաբերող օրինագծի քննարկման մեջ: Այս զարգացող կապը ողջունելի է, բայց Amnesty International-ը մտահոգված է, որ հայկական իշխանությունները շարունակում են պատվիրակել կանանց իրավունքները պաշտպանելու եւ իրականացնելու իրենց իրավական պարտավորությունները ՀԿ-ներին եւ միջազգային կազմակերպություններին:

1997 թվականից ի վեր կանանց կազմակերպությունների փոքր, բայց եռանդուն խումբ պայքարել է կանանց նկատմամբ բռնության դեմ՝ հանրային իրազեկության բարձրացման, ճգնաժամային եւ այցելության կենտրոնների ստեղծման, ընտանեկան ու սեռական բռնություն վերապրած կանանց աջակցության ու ուղղորդման ծառայությունների տրամադրման, օրենսդրական փոփոխություն մտցնելու ուղղությամբ կառավարությանը համոզելու եւ Հայաստանի կանանց նկատմամբ բռնության դեպքերի ու ձեւերի փաստագրման ճանապարհով: Այս միջոցառումները, հատկապես ապաստարանների թանկ արժեքը, «թեժ գծերն» ու խորհրդատվական ծառայությունները, գրեթե ամբողջապես կախված են ընդահումներով ստացվող արտաքին ֆինանսավորումից: Վերջին տարիներին Հայաստանում բացված չորս ապաստարաններից ոչ մեկին կայուն ֆինանսավորում չի հաջողվել ապահովել, ինչի արդյունքում եւ դրանցից ոչ մեկը չի կարողացել շարունակական գործունեություն ծավալել: 2008 թվականի օգոստոսին Amnesty International-ին տեղեկացրեցին, որ մոտ ժամանակներս մեկ ապաստարան կվերաբացվի, իսկ եւս երկուսը, նոր ֆինանսավորման բացակայության պատճառով, կբացվեն միայն խիստ օգնության անհրաժեշտության դեպքում:

Կանանց իրավունքները պաշտպանելու եւ իրականացնելու պետությունների պարտավորությունը պահանջում է հատուկ ռազմավարություն ու գործողություն իրականացնել թե՛ օրենսդրական ոլորտում, որպեսզի կանանց դեմ բռնության մեղավորները անպատիժ չմնան, եւ թե՛ ապաստարաններ, բնակարան եւ մի շարք օժանդակ ծառայություններ տրամադրելու հարցում, ինչը թույլ կտա կանանց հաղթահարել բռնությամբ ուղեկցվող հարաբերությունների պատճառած ֆիզիկական, տնտեսական ու հոգեբանական վնասները:

6.1 ՀԱՍԱՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետության կողմից կանանց նկատմամբ բռնության դեմ միահամուռ գործողությունների բացակայության պարագայում կանանց ՀԿ-ները ստանձնել են բազմաթիվ դերեր՝ իրազեկման

բարձրացում, փաստագրում, տուժածների համար աջակցող ծառայություններ եւ «թեժ գծեր», ճգնաժամային կենտրոններ ու ապաստարաններ, ի լրումն օրենսդրական փոփոխությունների համար կառավարության վրա ճշումներ գործադրելու փորձերին եւ իրավապահներին պատասխանատու դարձնելուն: Բացառապես կանանց իրավունքներով զբաղվող մի քանի ՀԿ-ներ ահռելի ներդրում են ունեցել հարցը «հասարակայնացնելու», այլ ոչ թե անձնական թողնելու գործում՝ հաճախ դրա համար հայտվելով թշնամական մթնոլորտում եւ ենթարկվելով հասարակության սուր քննադատությանը: Կանանց նկատմամբ բռնության արգելված թեման հրապարակային դարձնելու անգամ ՀԿ-ների շրջանում առկա դատապարտումն, այնուամենայնիվ, աստիճանաբար փոխվեց այս ոլորտի կազմակերպությունների համար գործելու առավել բարենպաստ միջավայրի:¹¹³

Մի քանի ՀԿ-ներ ճգնաժամային կենտրոններ եւ ուղղորդման ծառայություններ ունեն, որոնք անվճար խորհրդատվական օգնություն, իրավաբանական աջակցություն, վերապատրաստման կամ աշխատանք գտնելու օգնություն են առաջարկվում կամ առնվազն ուղղորդում կանանց դիմել նմանատիպ ծառայություններ մատուցող օղակների: Կենտրոնների կողմից ընդունված մոտեցումները հիմնականում պայմանավորված են տեղական համատեքստով եւ ՀԿ-ի ներուժով, սակայն նրանցից յուրաքանչյուրը հեռախոսով կամ երես առ երես խորհրդատվություն է տրամադրում եւ անհրաժեշտության դեպքում ուղղորդում դիմել համապատասխան մասնագետի: Ապաստարաններ ունեցող կենտրոնները բաց եղած ժամանակ հատուկ տաքսի ծառայություն են ունեցել՝ ծայրահեղ վտանգի մեջ գտնվող կանանց անմիջապես կացարան տեղափոխելու համար:

Հայաստանում գործում են մի քանի «թեժ գծեր»: 2007 թվականի հունվարի 1-ից օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում «Կանանց իրավունքի կենտրոն» ՀԿ-ի «թեժ գիծն» ընդունել է 380 զանգ (219 առաջին անգամ ու 161 լրացուցիչ զանգեր):¹¹⁴ Չանգահարողների 50%-ից ավելին (193 զանգ) հայտնել է ընտանեկան բռնության մասին, որից 41%-ը՝ ֆիզիկական (79 զանգ) եւ 4%-ը՝ սեռական բռնության մասին (8 զանգ): Սակայն ոչ բոլոր հայաստանցի կանայք կարող են «թեժ գիծ» զանգահարել, որովհետեւ առավել հեռու բակավայրերը ազգային ընդհանուր հեռախոսացանցին միացված չեն: «Թեժ գծի» գովազդի արժեքը թույլ չի տալիս, որ դրա գոյության մասին բնակչության առավել լայն զանգված տեղեկանա: Կանանց ՀԿ-ները Amnesty International-ին պատմեցին, որ առայժմ հանրային առողջապահության գովազդի «հասկացություն չկա», իսկ այդ ուղղությամբ պետության եւ ՀԿ-ների միջեւ համագործակցության ջանքերը փոքրաթիվ են:¹¹⁵ Սոցիալական գովազդի պատրաստման եւ հեռարձակման արժեքը գերազանցում է ՀԿ-ների սեղմ բյուջեները եւ այդ պատճառով կախված է արտաքին դոնորային ֆինանսավորումից:

Առանց ՀԿ-ների տրամադրած ծառայությունների, ընտանիքում բռնության զոհերին օժանդակող ծառայությունների վիճակը շատ ավելի ծանր կլիներ: ՀԿ-ներն արժանի են գովասանքի՝ ոլորտում իրենց արժեքավոր աշխատանքի համար, բայց սա չի կարող շեղել այն փաստից, որ պետության պարտավորությունն է օժանդակ ենթակառույցներ ապահովել՝ կանանց նկատմամբ բռնությունը կանխելու ու դրանց հետեւանքներին արձագանքելու համար: Ավելին, ապաստարաններ ունեցող ՀԿ-ների վրա հույս դնելը անտեսում է այն, որ չնայած ապաստարանների կարելորագույն դերին՝ փոքր հասարակության մեջ անհրաժեշտ են ֆորմալ հաստատություններ, օրինակ ոստիկանություն, որն արդյունավետ միջամտելու իրավասություն ունի՝ առանց տեղական համայնքներում բարդություններ առաջացնելու վտանգի:

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

«Կանանց իրավունքների կենտրոն»-ը (ԿԻԿ) առաջին կազմակերպությունն էր Հայաստանում, երբ 1997 թվականին իր գործունեությունը սկսեց կանանց դեմ բռնության բնագավառում՝ բացելով հանրապետությունում առաջին «թեժ գիծը» եւ տարածելով կանանց դեմ բռնությանը վերաբերող առաջին բրոշյուրներն ու հանրային հայտարարությունները: «Թեժ գիծը» 1997 թվականից շարունակում է գործել: 1998 թվականից առ այսօր ԿԻԿ-ը գործարկում է իր ստեղծած Կանանց այցելության ու օգնության կենտրոնը (տես ստորել)՝ իրավաբանական (ներառյալ փաստաբանի տրամադրումը), հոգեբանական, բժշկական եւ սոցիալական ծառայություններ տրամադրելով կանանց եւ նրանց երեխաներին: ԿԻԿ-ի պատվերով ընտանեկան եւ սեռական բռնությունը փաստագրող հետազոտություն է անցկացվել, այն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել նաեւ

նստիկանների վերապատրաստման աշխատանքներում եւ հանդես եկել ընտանեկան բռնության մասին օրենք ընդունելու նախաձեռնությամբ: Կազմակերպությունն օրենքի նախագծի մշակման համար աշխատանքային խումբ է ստեղծել եւ նաեւ մեծ քարոզարշավ ծավալել օրենքի ընդունման ի նպաստ: Արտաքին ֆինանսավորմամբ պայմանավորված՝ ԿԻԿ-ի երեւանյան ապաստարանն ընմիջումներով է աշխատել: Ֆինանսական միջոցների պակասի պատճառով իր գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած այս կենտրոնը 2008 թվականի սեպտեմբերին վերաբացվեց՝ այդ ընթացքում գործող միակ հաստատությունը, որն օգնում էր ընտանեկան բռնության զոհերին: 2007 թվականի հունվարի 1-ից մինչեւ օգոստոսի 31-ը ԿԻԿ-ի Կանանց այցելության ու օգնության կենտրոնում կանանց 264 այց է գրանցվել (124-ը առաջին եւ 140 լրացուցիչ այցեր): Այս այցերից 199-ը ընտանեկան բռնության, իսկ 16-ը՝ սեռական բռնության հետեւանքով: Կենտրոնն անվճար հոգեբանական, իրավաբանական խորհրդատվություն է տրամադրում կանանց, ինչպես նաեւ օգնում նրանց զբաղվածության հարցում:

ԿԱՆԱՆՑ ՌԵՍՈՒՐՍ-ԿԵՆՏՐՈՆ

Կանանց ռեսուրս-կենտրոնը հիմնադրվել է 2003 թվականին սփյուռքի եւ Հայաստանի կանանց կողմից: Սկզբում տեղակայված լինելով Երեւանի պետական համալսարանում, կենտրոնը ստիպված էր այնուհետեւ թողնել համալսարանի տարածքը սեռական կրթության մասին դասընթացներ վարելու պատճառով եւ քաղաքի այլ վայրերում գրասենյակներ զբաղեցնել: Կենտրոնն աջակցում եւ ուղղորդում է ծայրահեղ ծանր հրավիճակում հայտնված կանանց Երեւան քաղաքում, ինչպես նաեւ Կանանց կենտրոն է բացել չճանաչված Լեռնային Ղարաբաղի հանրապետության Շուշի քաղաքում: Կենտրոնը մի շարք կրթական եւ վերապատրաստման ծրագրեր է իրականացնում, ինչպես նաեւ գեղարվեստի եւ սեռական հարցերի շուրջ կլոր սեղաններ ու քննարկումներ վարում, մի քանի կանանց ակումբ ու գրադարան պահում: Կազմակերպությունը սեռական բռնության ոլորտում աշխատելու փորձ եւ Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն ունի Հայաստան (SACCA)՝ երկրում միակ այս տիպի ծառայությունը: SACCA-ն այցեր է ընդունում, այցելած կանանց ապահովելով խորհրդատվությամբ եւ համապատասխան բժիշկներին ուղղորդելով, ինչպես նաեւ տրամադրում սեռական բռնության հատուկ «թեժ գիծ»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ

Հայաստանի մայրության ֆոնդն ընտանեկան բռնության ոլորտում իր գործունեությունը սկսեց 2001 թվականին եւ 2002-2004 թվականներին իրականացնում էր ԱՄՆ ՀԶԳ-ի (USAID) կողմից ֆինանսավորվող «Հույս» ճգնաժամային կենտրոնի վերահսկողությունը եւ դրան առընթեր «թեժ գիծ» ու ապաստարանի գործունեությունը (տես ստորեւ): Մեկ տարուց ավել «թեժ գիծը» տրամադրեց ընդհանուր թվով 820 խորհրդատվություն՝ պատասխանելով կանանց կողմից հոգեբանական, սոցիալական եւ իրավական տարբեր հարցերի:¹¹⁶ Խորհրդատվությունը ընտանեկան բռնության դեմ պայքարում Մայրության հիմնադրամի կողմից որդեգրված լուծումն է. ընտանեկան բռնության զոհերին աջակցություն տրամադրելու հետ մեկտեղ, ընտանեկան խորհրդատվության միջոցով Մայրության հիմնադրամը նաեւ սերտորեն աշխատում է հանցանք կատարածների եւ ընտանիքի այլ անդամների հետ՝ ընտանիքում կոնֆլիկտը լուծելու եւ ապահարգանից խուսափելու համար:¹¹⁷ Կազմակերպությունն օգտագործում է ընտանեկան խորհրդատվությունը խուսափելու ընտանիքների տարրալուծումից՝ առանձնակիորեն շեշտելով հոգեբանական եւ տնտեսական գործոնները՝ որպես ընտանեկան բռնության պատճառներ:¹¹⁸ 2008 թվականի մայիսից Մայրության ֆոնդը պետական միջոցներ է ստացել վերսկսելու ընտանեկան բռնության զոհերին տրամադրվող օգնության ծառայությունները:

ԱԶԱԿԻՑ

«Աջակից» կազմակերպությունը գործում է Հայաստանի երկրորդ քաղաք Գյումրիում (Շիրակի մարզ), եւ ընտանեկան բռնության հարցերով զբաղվում է 1997 թվականից: 1999 թվականից սկսած կազմակերպությունը ճգնաժամային կենտրոնն է 24-ժամյա «թեժ գիծ» է ապահովում, ինչպես նաեւ կանանց իրավունքների քարոզչության բազմաբնույթ դասընթացներ իրականացնում: Վերջինիս իրավասության տակ էր նաեւ հանգուցյալ Բեվերլի Ռամսեի կողմից հիմնադրված եւ ԱՄՆ-ի մասնավոր հիմնադրամի աջակցությամբ գործող ապաստարանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ

«Հայկական Կարիտաս» կազմակերպությունը ընտանեկան և սեռական բռնության ոլորտում իր գործունեությունը սկսեց 2002 թվականին՝ ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում, որը վեց տեղական ՀԿ-ների դրամաշնորհներ տրամադրեց: Հայկական Կարիտասի գլխամասային գրասենյակը Գյումրիում է. այն ունի «թեժ գիծ», ճգնաժամային կենտրոն և ապաստարան, իրականացրել է հանրային իրազեկման միջոցառումներ, այդ թվում՝ սոցիալական գովազդ մարզային ՉԼՄ-ներում, և մասնագիտական վերապատրաստում անցկացրել ընտանեկան բռնություն վերապրածների համար: 2007 թվականին Հայկական Կարիտասը ընդհանուր ազգաբնակչության համար կատարել է հանրային իրազեկման աշխատանք՝ սեմինարների, թատերական ներկայացումների և դրամայի օգնությամբ կրթելով մարդու իրավունքների մասին: Համագործակցելով հեռուստատեսային պրոդյուսերական ընկերության հետ, կազմակերպությունը ստեղծել է ընտանեկան բռնության թեմայով քառամաս սերիալ և հեռարձակել այն մարզային հեռուստատեսությամբ: Հայկական Կարիտասի ներկայացուցիչը շեշտեց հանրությանը շարունակական և առավել ընդգրկուն իրազեկման միջոցով կրթելու կարևորությունը, որպես Շիրակի մարզում «թեժ գծի» և օգնության ծառայությունից օգտվելու մշակույթի ձեռավորման առանցքային գործոն:¹¹⁹

ՄԱՐՏՈՒՆԻ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մարտունու կանանց համայնքային խորհուրդը հինգերկուսյան է 2000 թվականին Գեղարքունիքի մարզի փոքր Մարտունի քաղաքում: Համայնքի զարգացման և քարոզչական աշխատանքների առավել լայն շրջանակներում խորհուրդը զբաղվում է նաև ընտանեկան բռնության հարցերով և մասնակցել է ԱՄՆ ՄԶԳ-ի ընտանեկան բռնության ծրագրին: Խորհուրդն ունի ապաստարան՝ մինչև ինը կնոջ և երեխայի համար պատրաստ անկողիններով: Չնայած 2008 թվականի հուլիսին խորհրդի ներկայացուցիչները Amnesty International-ին հայտնեցին, որ ապաստարանը, ֆինանսավորման դադարեցման պատճառով, գործում է միայն բացարձակ անհրաժեշտության դեպքում; Խորհուրդն աշխատանքներ է ծավալել ընտանեկան բռնության և մասնավորապես երեխաների վրա դրա ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ տեղական ՉԼՄ-ներով իրականացվող սոցիալական գովազդի միջոցով:

ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՆԱԽԱԶՆԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես 2004-2007 թվականները «Հարավային Կովկասում գենդերային և քաղաքական ծրագիր» անունը կրող եռամյա ծրագրի մաս՝ ԱՄՆ ՄԶԳ-ի հայաստանյան գրասենյակը 2005 թվականին հանրային իրազեկման քարոզարշավ իրականացրեց, որը ներառում էր ընտանեկան բռնության մասին հրապարակող լրագրողների համար կազմակերպված դասընթաց: ՄԿԿ-ի Ազգաբնակչության ֆոնդը (UNFPA) 2008 թվականին մեկնարկեց «Գենդերային բռնության դեմ պայքար Հարավային Կովկասում» խորագրով եռամյա տարածաշրջանային ծրագիր: Այս ծրագրի շրջանակներում 2008 թվականի օգոստոսից նախատեսվում է Ազգային պետական վիճակագրության կոմիտեի հետ համատեղ ընտանեկան բռնության վերաբերյալ մի նոր՝ 15,000 հարցվող ընդգրկող լայն հարցում անցակացնել:

6.2 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԻՆԱԳԻԾԸ

«Ընտանեկան բռնությանը վերաբերող օրենքը պետք է լինի գործող օրենք: Այն լուրջ աջակցության կարիք ունի՝ ընտանեկան բռնությունը որպես հանցագործություն ամրագրելու համար թե՛ հասարակության մեջ և թե՛ թղթի վրա»:¹²⁰

ԿԻԿ-ի նախաձեռնությամբ 2007 թվականին սկսվեց ընտանեկան բռնության մասին օրենքի նախագծի մշակումը: Վերջինիս կողմից ստեղծված աշխատանքային խումբը, որը կազմված էր Աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարության ներկայացուցիչներից, ՀՀ ոստիկանության պաշտոնյաներից, իրավաբան-փորձագետներից և կանանց ՀԿ-ների աշխատակիցներից, նպատակ ուներ մշակել օրենք, որը միանշանակորեն քրեականացում է ընտանեկան բռնությունը և նաև արդյունավետ մեխանիզմներ ապահովում վերջինիս զոհերին պաշտպանելու և աջակցելու համար: Հայաստանում անցկացված հարցման արդյունքների, այս ոլորտին վերաբերող այլ երկրների օրենսդրությունների ուսումնասիրության, Հայաստանի

դատական համակարգի եւ ոստիկանության տվյալների համադրությամբ մշակված առաջին նախագիծը հանրային քննարկման դրվեց 2008 թվականի հուլիսին Երեւանում կազմակերպված կլոր սեղանին: Օրենքը նախատեսում է միասնական արձագանքի եւ աջակցության համակարգ ստեղծել, ըստ որի նոր ուժեր ոստիկանությանը պաշտպանության հրահանգներ կարող են տալ, ինչպես նաեւ առաջադրում աջակցության համակարգ, որը ներառում է ընտանեկան բռնության զոհերի համար խորհրդատվական կենտրոններ եւ ապաստարաններ: Amnesty International-ը հատկապես ողջունում է ընտանեկան բռնության դեմ միջոցառումների իրագործման եւ համակարգման համար իրավասու կառավարական մարմնի մասին դրույթը, չնայած օրինագիծն առայժմ չի մանրամասնում այս մարմնի կազմը որոշող գործընթացը եւ չի սահմանում դրա պատասխանատվության կառուցվածքը:

Amnesty International-ը ողջունում է օրինագծում ընտանիքի ներառական սահմանումը, չնայած կազմակերպությունը խորհուրդ կտար, որ սահմանումը ներառեր նաեւ իրար հետ չապրող ինտիմ զուգընկերներին: Օրինագծի մեջ «ընտանիքի» սահմանումը ընդգրկում է պաշտոնապես գրանցված եւ չգրանցված ամուսնությունները, ինչպես նաեւ ինտիմ զուգընկերներին, «որոնք մշտապես կամ մեծ մասամբ ապրում են միասին» (Հոդված 2.1): Amnesty International-ը կողջուններ այս հոդվածում միասին չապրող ինտիմ զուգընկերների ներառումը, որպեսզի օրենքի պաշտպանությունը տարածվեր կնոջ վրա այդպիսի համարաբերությունում եւս:

Amnesty International-ը ողջունում է օրինագիծը մշակողներին այն բանի համար, որ բացառել են օրինագծում ընտանեկան բռնության զոհերի վարքի՝ որպես ընտանեկան բռնության քրեական հետապնդումը մեղմող գործոնների մասին որեւէ սահմանում: Amnesty International-ը ողջունում է նաեւ ընտանեկան բռնության մասին դիմում ստանալու դեպքում ոստիկանության կողմից գործողության դիմելու պարտադիր պահանջը (Հոդված 6.1), ոստիկանության կողմից այդպիսի դիմումը գրանցելու պահանջը (Հոդված 6.2.3) եւ ընտանեկան բռնության կամ նման վտանգի դեպքում ոստիկանության կողմից ընտանիքի անդամներին իրենց իրավունքների եւ գոյություն ունեցող միջոցառումների ու ծառայությունների մասին տեղեկացնելը (Հոդված 6.2.8):

Ինչ վերբերում է Հոդված 6.2.4-ին («[Հայաստանի հանրապետության ոստիկանությունը իրավասու է] կատարել ընտանեկան բռնությանը հակված անձանց նկատմամբ կանխարգելիչ գրանցում եւ նրանց հետ կանխարգելիչ-նախազգուշական աշխատանքներ վարել») Amnesty International-ը խորհուրդ է տալիս հստակ մշակել այդպիսի անձանց գնահատելու գործընթացը եւ սահմանել կանխարգելիչ-նախազգուշական գործողությունները: Amnesty International-ը խորհուրդ է տալիս նաեւ հստակ ձեւակերպել Հոդված 8-ում սահմանված խորհրդատվական կենտրոնների հարաբերությունը ոստիկանության հետ: Եւ վերջապես, նախազգուշացումը մտահոգության ամիթ է տալիս, քանզի այն կարող է հանգեցնել մինչեւ 18 տարեկան երեխաների նկատմամբ 11-րդ Հոդվածով նախատեսված սանկցիաների կիրառմանը: Այս դրույթը պետք է հավասարակշռված լինի՝ պաշտպանելով մինչեւ 18 տարեկան մարդկանց (տղաների)՝ արդար դատի իրավունքը, օրինակ, իրավաբան տրամադրելու միջոցով:

7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանանց նկատմամբ բռնության հատուկ զեկուցողն առաջարկում է.

Պետությունները պետք է խրախուսեն եւ պաշտպանեն կանանց մարդու իրավունքները եւ պատշաճ եռանդով.

(ա) Կանխեն, հետաքննեն եւ պատժեն կանանց դեմ բռնության բոլոր ձեւերը թե՛ տանը, թե՛ աշխատանքի վայրում, թե՛ համայնքում կամ հասարակության մեջ, թե՛ կալանավայրում կամ զինված հակամարտության ժամանակ,

(բ) Բոլոր տեսակի միջոցներ ձեռնարկեն՝ հզորացնելու կանանց եւ ամրապնդելու նրանց տնտեսական անկախությունը, պաշտանեն ու խրախուսեն նրանց բոլոր իրավունքների ու հիմնարար ազատությունների կիրառումը,

(գ) Դատապարտեն կանանց նկատմամբ բռնությունը եւ զերծ մնան սովորույթը, ավանդույթը կամ պրակտիկան՝ կրոնի կամ մշակութային անվան տակ, մեջբերելուց՝ խուսափելու համար այսպիսի բռնությունը վերացնելու իրենց պարտավորության կատարումից

(դ) Ուժեղացնեն բռնությունը կանխելու նպատակով օրենսդրական, կրթական, սոցիալական եւ այլ միջոցների մշակումը եւ/կամ իրագործումը՝ ներառյալ տեղեկատվության տարածումը, իրավական գրագիտության քարոզարշավները եւ իրավաբանների, դատական եւ առողջապահության ոլորտի աշխատակազմի անդամների վերապատրաստումը:¹²¹

Սոցիոլոգիական հարցումները, ՀԿ-ների կողմից ներկայացված դեպքերի քանակը եւ տուժածների հետ հարցազրույցներից ստացված որակական վկայություններն ապացուցում են այն, որ Հայաստանում շատ կանանց մարդու իրավունքները ոտնահարվում են, որովհետեւ պետությունը չի կարողանում կանխել, հետաքննել եւ պատժել գենդերային բռնությունը: Այդ աղբյուրները վկայում են նաեւ սեռական բռնության եւ սեռական ոտնձգության դեպքերի մասին, չնայած այս երեւույթները հիմնականում չեն արձանագրվում եւ մնում են անպատիժ: Այս խնդրին հակազդելու համար գործողությունների ծրագրեր եւ հաստատություններ ստեղծելու ուղղությամբ որոշ փորձնական քայլեր են ձեռնարկվում Հայաստանի կառավարության կողմից, սակայն ներկայիս օրենսդրությունը, մեխանիզմներն ու ընթացակարգերը ընտանեկան եւ սեռական բռնության զոհերին ընտանիքում բռնության վերացման համար անհրաժեշտ արդարադատության կամ առողջապահության, իրավաբանական եւ սոցիալական ծառայություններով չեն ապահովում: Զրեական արդարադատության համակարգն անտեսում է գենդերային բռնության զոհերին, ինչը ստիպում է նրանց հաշտվել իրենց իրավունքները ոտնահարողների հետ եւ ընտանեկան եւ սեռական բռնության անպատժելիությունը դարձնում թույլատրելի:

Amnesty International-ը գտնում է, որ անհրաժեշտ են ավելի բազմակողմանի եւ լավ ֆինանսավորվող նախաձեռնություններ իրականացնել, որոնք կպաշտպանեն Հայաստանի կանանց ու աղջիկների՝ առանց բռնության ապրելու իրավունքը: Պետության պարտավորության մեջ է մտնում նաեւ գենդերային բռնության, այդ թվում եւ ընտանեկան բռնության, դեպքերի հետաքննության ու քրեական հետապնդման մեջ պետական պաշտոնյաներին հստակ դերակատարում տալու միջոցով վերջիններիս պատասխանատվության բարձրացումը: Հայաստանի կառավարությանը առաջարկություններ ներկայացնելիս Amnesty International-ը գիտակցում է այն բազում սոցիալական, տնտեսական եւ մշակութային գործոնների առկայության մասին, որոնց պատճառով Հայաստանի կանայք բռնության վտանգի տակ են եւ արդարադատությունից զրկված. այս բազմաբնույթ գործոնները ցույց են տալիս, որ զուտ օրենսդրական մոտեցումը բավարար չի լինի: Amnesty International-ը ողջունում է Հայաստանում

ընտանեկան բռնության մասին օրենք ընդունելու նախաձեռնությունը, սակայն նոր օրենսդրությունը եւ դրա կիրառումը իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումներից միայն մեկն է կանանց բռնությունից պաշտպանելու եւ նրանց արդարության ու փոխհատուցման իրավունքն ապահովելու Հայաստանի ստանձնած պատականությունների կատարման ճանապարհին: Միեւնույն ժամանակ, հատուկ օրենքի բացակայությունը չի արդարացնում գործող օրենքների կիրառմամբ հնարավոր համապատասխան դատական գործողությունների չկատարումը:

Ինչպես նշված է այս զեկույցում, հարցման տվյալների համաձայն Հայաստանի կանանց մեկ քարորդից ավելին ֆիզիկական բռնության կարող է ենթարկվել տանը, մինչդեռ հոգեբանական բռնությ կրող ընտանեկան բռնության դեպքերը շատ ավել շատ են: Բռնության այսպիսի ծավալի նվազեցումը եւ այն արդարացնելու փորձերի, ներառյալ «մշակույթի», վերացումը երկարատեւ գործընթացներ են: Այնուամենայնիվ, ինդիքի ծավալը, անբավարար միջոցներն ու երկրի ընդհանուր քաղաքական համատեքստի «անցումային» բնույթը չեն կարող որպես պետության անգործունեության պատճառներ բերվել կամ խոստանալ, որ սոցիալ-տնտեսական պայմանների բարելավված հետքում կանանց դեմ բռնությունը կնվազի առանց պետության միջամտության: Միայն պետության միահամուռ, տարբեր ռազմավարություններ կիրառող գործունեությամբ կարելի է վերացնել ընտանեկան եւ սեռական բռնության անմիջական եւ արմատական դրդապատճառները եւ ապահովել դրանց զոհերի արդյունավետ պաշտպանությունը եւ փոխհատուցումը:

Amnesty International-ը հայկական իշխանություններին խորհուրդ է տալիս մի շարք անհապաղ, կարճաժամկետ միջոցառումների ծրագիր մշակել, որոնք կապահովեն համապատասխան ազգային ծրագրի դրույթների իրագործումը մինչեւ 2010 թվականի վերջնաժամկետը: Զննարկման փուլում գտնվող ընտանեկան բռնության մասին օրինագծի դրույթների եւ այլ միջոցառումների օգնությամբ, այդ թվում օրինակ, կանանց դեմ բռնությունը վերացնելու գործողությունների հատուկ ազգային ծրագրի իրականացումը, հայկական իշխանություններին կհաջողվի այս զեկույցում նշված առավել տարաբնույթ եւ արմատական հիմնախնդիրներին լուծում տալ:

Amnesty International-ը ողջունում է կանանց նկատմամբ բռնության ընդունումը այն պետական պաշտոնյաների կողմից, որոնց հետ կազմակերպությունը հանդիպել է Հայաստանում: Նախկինում ինդիքի առկայության մասին մեթոդական վերաբերմունքի հետ համեմատ սա կարելու փոփոխություն է, սակայն պետությունը պետք է անհապաղ զբաղվի ընտանեկան եւ սեռական բռնության նկատմամբ լայն հասարակության վերաբերմունքի արմատական փոփոխությամբ: ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի խոսքերով՝

«Մարդու իրավունքների առումով իրենց պարտավորությունները կատարելու համար պետությունները պետք է իրենց վրա վերցնեն կանանց եւ տղամարդկանց միջեւ իշխանության բաժանման եւ դրան առընչվող ենթակայության այլ համակարգերը կարգավորող սոցիալական եւ մշակութային նորմերը վերափոխելու պարտականությունը: Պետությունները պատասխանատու են գործել որպես հասարակության մեջ փոփոխության կատալիզատոր եւ չեն կարող պատվիրակել այս պատասխանատվությունը քաղաքացիական հասարակության խմբերին»:¹²²

Այսօր սահմանափակ քանակով պետական պաշտոնյաներ են ընդունում ընտանեկան բռնության առկայությունը. վերջինս, սակայն, պետք է հիմք ծառայի պետական մարմինների կողմից կանանց դեմ բռնության առավել ընդհանրական եւ աներկբա դատապարտման համար՝ հանրային ուսուցման միջոցառումների, ինչպես նաեւ կանանց իրենց իրավունքների մասին տեղեկացնելու միջոցով արմատավորելով այն գաղափարը, որ ընտանեկան եւ սեռական բռնությունը հանցագործություն է եւ մարդու իրավունքների ոտնահարում:

7.1 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ի նկատի ունենալով բոլոր համապատասխան միջազգային չափանիշների Հայաստանի

Կողմից ստորագրումն ու վավերացումը, Amnesty International-ը Հայաստանի կառավարությանից պահանջում է կատարել իր պարտավորությունները.

- Ապահովելով Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի (CEDAW) 2002 թվականի Եզրափակիչ առաջարկությունների լիակատար եւ անհապաղ իրագործումը,¹²³
- Կատարելով ՄԱԿ-ի կոմիտեների հաշվետվության ընթացակարգերն ու պահանջները, որպեսզի դրանք ներառեն տվյալներ ըստ սեռի.
- Բաց հրավեր ուղարկելով Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողին ու հեշտացնել նրա մուտքը բոլոր կառավարական հիմնարկներ, հաստատություններ եւ պաշտոնյաների գրասենյակներ:

Օրենսդրական դաշտում Amnesty International-ը Հայաստանի կառավարությունից պահանջում է.

- Ընտանեկան բռնության վերացումը եւ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության ցանկացած դրսեւորման վերացման կոնվենցիային անդամակցելով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը դարձնել մարդու իրավունքների դաշտում պետության առաջնահերթություններից՝ քրեականացնելով ընտանիքում կանանց նկատմամբ բռնությունը, ներառյալ հոգեբանական բռնությունը, ծեծը, բռնաբարությունը, այդ թվում՝ ամուսնական, սեռական եւ գենդերային հողի վրա իրականացվող այլ տեսակի բռնությունները: Սրան պետք է հասնել ընտանեկան բռնության մասին օրենք ընդունելու, բռնությունը կանխարգելելու եւ զոհերին աջակցություն տրամադրելու դրույթի միջոցով.
- Անհապաղ կիրառել Հայաստանի Քրեական օրենսգրքի բռնությանն ընդհանրապես վերաբերող օրենսդրությունը՝ ընտանիքում բռնության դեպքերը քրեորեն հետապնդելու համար,
- Օրենքում հստակ ձեւակերպել աշխատավայրում սեռական ոտնձգությունը եւ կիրառել այն քրեականացնող օրենսդրությունը,
- Օրենսդրական փոփոխություններ կատարել, որպեսզի ընտանեկան բռնության դեպքում քրեական գործ հարուցելու բեռը չընկնի զոհի վրա:

Ընտանեկան բռնության մասին օրինագծի վերաբերյալ Amnesty International-ը առաջարկում է Հայաստանի կառավարությանը.

- Ապահովել, որ օրինագիծը սահմանի ընտանեկան բռնության դեմ միջոցառումներ իրականացնելու եւ համակարգելու իրավասություն ունեցող մարմնի կազմի ընտրության ընթացակարգը, եւ օրենքում ձեւակերպել այս մարմնի հաշվետվության կառուցվածքը,
- Ընդլայնել ընտանիքի սահմանումը, որպեսզի այն ներառի իրար հետ չապրող զույգերին եւ նման հարաբերություններում գտնվող կանանց եւս օրենքով պաշտպանի,
- Ապահովել, որ օրենքում հստակ նշվի այն ընթացակարգը, որով անձինք որակվում են որպես ընտանեկան բռնության մեղավորներ, եւ որ հստակ ձեւակերպվեն նրանց նկատմամբ կիրառվելիք կանխարգելիչ-նախազգուշական գործողությունները,
- Ապահովել, որ հստակ սահմանվի Յոթնամյա 8-ում նշված խորհրդատվական կենտրոնների ու ոստիկանության միջեւ փոխհարաբերությունը.
- Ապահովել 11 հոդվածով նախատեսված մինչեւ 18 տարեկան երեխաների նկատմամբ պաշտոնական նախազգուշացումների կիրառման մասին դրույթի անկողմնակալությունը՝ պաշտպանելով մինչեւ 18 տարեկան մարդկանց (տղաների)՝ արդար դատի իրավունքը, օրինակ նրանց ընձեռնելով իրավաբանի ծառայությունից օգտվելու հնարավորություն,
- Ապահովել ոստիկանության, կառավարական պաշտոնյաների, իրավաբանների ու դատավորների վերապատրաստումը պաշտպանության հրահանգների արձակման, վերահսկման եւ հետագա գործողությունների վերաբերյալ, ինչպես նախատեսված է ընտանեկան բռնության մասին օրինագծի 12-րդ հոդվածում.
- Ապահովել, որ օրենքի ընդունմանը զուգահեռ անցկացվեն լայնամաշտաբ եւ բազմակողմանի

հանրակրթական նախաձեռնություններ՝ հանրությանը նոր օրենքի եւ դրա բովանդակության մասին տեղեկացնելու նպատակով:

Գեղեթերային բռնության դեմ պայքարելու միջոցների առումով Amnesty International-ը պահանջում է Հայաստանի կառավարությանը.

- Ապահովել ընտանեկան եւ սեռական բռնության զոհերի համար քրեական արդարադատության մատչելիությունը՝ առանց բողոքը ետ վերցնելու կամ իրենց դեմ բռնություն կիրառողի հետ «հաշտվելու» ճնշման, եւ ապահովել, որ ընտանեկան կամ սեռական բռնության հանցանքները դիտվեն նույն լրջությամբ, ինչպես եւ բռնությունն այլ հանգամանքներում,
- Ստեղծել կառավարական մարմին, որը կիրականացնի ընտանեկան բռնության, սեռական բռնության եւ սեռական ոտնձգության դեմ պետական միջոցառումները եւ կհամակարգի այս ոլորտում գործող կառավարության տարբեր գործակալությունների ջանքերը, ինչպես նախատեսված է ընտանեկան բռնության մասին օրինագծում: Այս մարմինը պետք է անհրաժեշտ իրավասություն եւ միջոցներ ունենա, որպեսզի արդյունավետ կերպով իրականացնի իր պարտականությունները:
- Քննարկել կանանց դեմ բռնությանը հակազդելու գործողությունների հատուկ ազգային ծրագրի մշակումը եւ իրականացումը. գործողությունների ազգային այս ծրագիրը պետք է ընդլայնի հասարակությունում կանանց դեմ բարձրացման ներկա գործողությունների ազգային ծրագրի դրույթները՝ ապահովելու գեղեթերային բռնության դեմ միջոցների համար ավելի համապարփակ շրջանակներ,
- Անհապաղ ստեղծել ընտանեկան եւ սեռական բռնությանը հակազդող միջոցառումների երկարաժամկետ եւ կայուն ֆինանսավորում, որը կներառի նաեւ ՀԿ-ներին ֆինանսական եւ այլ աջակցության տրամադրումը. տրամադրված ֆոնդերը պետք է իրատեսական լինեն՝ հաշվի առնելով գործողությունների ազգային ծրագրերի եւ օրենքի դրույթները,
- Ապահովել, որ կառավարական համապատասխան յուրաքանչյուր գործակալություն ունենա պատասխանատու անձ եւ արդյունավետորեն համագործակցի միջգործակալական այն մարմնի հետ, որը զբաղվում է ընտանեկան եւ սեռական բռնությանը վերաբերող բոլոր օրենսդրական եւ կառավարական ծրագրերի համակարգմամբ,
- Ստեղծել արդյունավետ երկկողմ ուղղորդման համակարգ, որը կընդգրկի ընտանեկան եւ սեռական բռնության հարցերով զբաղվող տարբեր գործակալությունները՝ ներառյալ ոստիկանությունը, առողջապահության մարմինները, իրավական աջակցության կենտրոնները, ապաստարանները եւ ճգնաժամային կենտրոնները,
- Ապահովել ընտանեկան եւ սեռական բռնության զոհերին աջակցություն եւ ուղղորդում տրամադրող «թեժ գծերի» ընդհանուր մատչելիությունը,
- Ապահովել ընտանեկան եւ սեռական բռնության զոհերի՝ աջակցության ծառայություններից օգտվելու մատչելիությունը՝ խորհրդատվություն եւ պաշտպանություն տրամադրող ճգնաժամային կենտրոնների եւ կացարանների ազգային համացանցի միջոցով: Պաշտպանական միջոցառումները պետք է ներառեն քաղաքացիական ու քրեական իրավունքի, սոցիալական ու առողջապահական ծառայությունների վերաբերյալ հեռախոսով կամ անձամբ տրամադրվող գաղտնի խորհրդատվություն: Այս ծառայությունը մատուցող խորհրդատուները պետք է վերապատրաստված լինեն եւ կապ ունենան համապատասխան գործակալությունների հետ, այդ թվում ոստիկանության, իրավաբան-փորձագետների, սոցիալական եւ առողջապահական ծառայությունների ու բնակվարչությունների հետ՝ ապահովելով արագ ուղղորդման ծառայության տրամադրումը,
- Ստեղծել սեփականության արդար եւ ժամանակին բաժանման եւ ապահարգանից հետո կանանց ու երեխաների՝ իրենց նախընտար Վայրում բնակության գրանցման ոչ խտրական, կենսունակ դատական մեխանիզմներ,
- Ընտանեկան եւ սեռական բռնության զոհերին մատչելի մասնագիտական դասընթացներ տրամադրել, օգնել աշխատանք գտնելու հարցում՝ հնարավորություն ընձեռելով ֆինանսապես

անկախ լինել (նախկին) ամուսիններից կամ զուգընկերներից,

- Ապահովել պատշաճ եւ ապահով բնակատեղի.
- Ոստիկանության, դատավորների եւ դատախազների՝ ընտանեկան եւ սեռական բռնության դիմումներին արձագանքելու ուղղեցույցների եւ վերջիններիս պարտադիր վերապատրաստման ֆինանսավորման եւ ապահովման միջոցով օրինակելի վարքի կիրառելի չափանիշներ սահմանել.
- Ապահովել բժիշկների, բուժքույրերի, մանկաբարձների, ուսանող-բժիշկների եւ դատաբժշկական փորձագետների պատրաստվածությունը՝ ընտանեկան բռնության, բռնաբարության եւ այլ սեռական հանցանքների հայտնաբերման ու ճիշտ արձագանքման համար.
- Թարգմանել, տարածել ու առողջապահության աշխատակիցների վերապատրաստման դասընթացներում ներառել Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2003 թվականի «Սեռական բռնության գոհերի բժշկաիրավական հսկողության ուղեցույցը».
- Ապահովել ընտանեկան եւ սեռական բռնությանը վերաբերող կցկտուր վիճակագրության համակարգումը եւ այս տվյալների մատչելիությունը հանրությանը.
- Շարունակել ՀԿ-ների հետ համագործակցությունը, օգտագործելով կանանց դեմ բռնության ծրագրերի պլանավորման ու իրագործման նրանց փորձն ու գիտելիքները, եւ հրապարակավ աջակցել նրանց աշխատանքին այս ոլորտում:

Amnesty International-ը կոչ է անում Հայաստանի հանրապետության ոստիկանությանը.

- Վերանայել ու գնահատել ընտանեկան եւ սեռական բռնության դեպքերը հետաքննելու ոստիկանության ընթացակարգերն ու ուղեցույցները՝ ապահովելով, որ վերջիններս ի կատար ածվեն նույնպիսի խստությամբ, ինչպես այլ ծանր հանցանքների դեպքում: Սա պետք է ներառի նախնական արձագանքման, բողոքների (ներառյալ ետ վերցվածները) փաստագրման եւ հետագա վերահսկման, ապացույցների հավաքագրման, դիմումների ընդունման եւ կասկածյալների հարցաքննման ու կալանավորման ընթացակարգերն ու ուղեցույցները:
- Ապահովել, որ ընտանեկան կամ սեռական բռնության դիմումին ոստիկանի կողմից համապատասխան արձագանք չդրսետորելու դեպքերը հստակորեն սահմանվեն որպես մասնագիտական պարտականության չկատարում եւ ենթարկվեն պատժի,
- Ապահովել, որ ընտանեկան բռնությունը բոլոր համայնքային ոստիկանների վերապատրաստման բաղկացուցիչ մասը դառնա, եւ ոստիկանների շրջանում տարածել ընտանեկան եւ սեռական բռնության դեպքերին արձագանքելու լավագույն պրակտիկայի ու վարքի կանոնների մասին նյութեր,
- Ավելացնել կին-ոստիկանների թիվը համայնքում եւ ապահովել, որ կին-ոստիկանների պարտավորությունները չսահմանափակվեն անչափահասների քրեական բաժինների աշխատանքով:

Amnesty International-ը կոչ է անում Արդարադատության նախարարությանը եւ Գլխավոր դատախազությանը.

- Ապահովել դատական ցանկացած ատյանի դատախազների եւ դատարանների իրավասության տակ գտնվող եւ ընտանեկան կամ սեռական բռնության վտանգի տակ գտնվող կնոջ կողմից ներկայացված գործերի (օրինակ ապահարզանին վերաբերող քաղաքացիական գործը կամ բռնության վերաբերյալ քրեական գործը) առաջնահերթ քննումը: Հետագա բռնության վտանգի դեպքում պետք է առաջնային համարել կնոջ եւ նրա խնամքի տակ գտնվողների անվտանգությունը:
- Դատախազներին վերապատրաստել՝ ընտանեկան եւ սեռական բռնության մեղավորների դեմ գործ հարուցելու եւ դատավարություն անցկացնելու կարգի վերաբերյալ,
- Ընտանեկան եւ սեռական բռնության գոհերին որպես վկա հանդես գալու հնարավորություն

տալ եւ այս վկաներին ճնշումից ու ահաբեկումից պաշտպանող ընթացակարգեր սահմանել,

- Հետաքննության եւ դատավարության ընթացքում խուսափել այնպիսի ընթացակարգերից ու պրակտիկայից, որոնք լրացուցիչ հոգեբանական տրավմայի կենթարկեն ընտանեկան եւ սեռական բռնության զոհերին եւ նրանց՝ գործի քննությունը շարունակելուց .
- Վկաների պաշտպանության ծրագրեր իրականացնել, որոնք կապահովեն վերջիններիս պաշտպանությունը նախքան քրեական գործընթացը, դրա ընթացքում եւ դրանից հետո, այդ թվում՝ հայցվորի ու վկայի պաշտպանության վերաբերյալ դատական հրամանների արձակումն ու իրագործումը, ինչպես նաեւ կանայք ահաբեկումից ու ճնշումներից պաշտպանող ապաստարանների տրամադրումը,
- Ընտանեկան եւ սեռական բռնության դեպքերում համապատասխան մարմիններից, ինչպիսիք են սոցիալական աշխատողները եւ կանանց ՀԿ-ները, փորձագիտական ցուցմունքներ ընդունել: Վերջիններիս թվում են ընտանեկան եւ սեռական բռնության՝ նախկինում տեղի ունեցած դեպքերին վերաբերող ցուցմունքները, բռնության ֆիզիկական կամ հոգեբանական ազդեցության ապացույցները:
- Ապահովել բռնության ենթարկված բոլոր կանանց ֆինանսական փոխհատուցման եւ սոցիալ-հոգեբանական ու բժշկական վերականգնման տրամադրումը:

Հանրային իրազեկության բարձրացման եւ կանանց նկատմամբ բռնությունը արդարացող հանրության վերաբերմունքը փոխելու ուղղությամբ Amnesty International-ը Հայաստանի կառավարությանից պահանջում է շարունակել եւ կրկնապատկել միջոցառումները, այդ թվում.

- Պետական հեռուստատեսության ալիքներով ընտանեկան եւ սեռական բռնության զոհերի համար «թեժ գծերի» եւ այլ օժանդակ ծառայությունների սոցիալական գովազի անվճար հեռարձակում,
- Կրթակարգում կանանց նկատմամբ բռնության առարկայի ընդգրկում, որը պետք է ընգծի այդպիսի բռնության՝ քրեական հանցանք, այլ ոչ ընտանիքի մասնավոր հարց լինելու հանգամանքը,
- Տղամարդկանց ու տղաների շրջանում իրազեկության բարձրացման հատուկ միջոցառումների անցկացումը,
- Կին-իրավաբանների, կին-դատավորների, կին-ոստիկանների ու բժիշկների աշխատանքի ընդունման աջակցության տրամադրումը եւ խրախուսումը՝ ուղղված այս մասնագիտություններում կանանց ընդունման խտրականության վերացմանը
- Կանանց կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությամբ սահմանված կանանց իրավունքների մասին հանրային իրազեկության արշավ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Amnesty International-ի հարցազրույցն ընտանեկան բռնության գոհի հետ, Երեւան, 2008թ փետրվարի 8

² Միննեսոտայի Մարդու իրավունքների փաստաբաններ, *Ընտանեկան բռնություն Չայաստանում* (Միննեսոտայի, 2000 թ. դեկտեմբեր), էջ.4: Այս հաշվետվության հետազոտությունն իրականացվել է ԿԻԿ-ի աջակցությամբ, Երեւան:

³ Տես *Ուկրաինա. Ընտանեկան բռնություն. մեղադրելով գոհին*, ՄՅ ինդեքս՝ EUR 50/005/2006; *Բելոռուս. Ընտանեկան բռնություն. ավելին, քան մասնավոր սկանդալ*, ՄՅ ինդեքս՝ EUR 49/014/2006; *Վրաստան. Հագարավորները՝ լռության մեջ տառապելով. ընտանիքում կանանց դեմ բռնություն*, ՄՅ ինդեքս՝ EUR 56/009/2006; *Ռուսաստանի դաշնություն. դիմելու տեղ չկա. ընտանիքում կանանց դեմ բռնություն*, ՄՅ ինդեքս՝ EUR 46/056/2005; *Թուրքիա. կանայք ընդդեմ ընտանեկան բռնության*, ՄՅ ինդեքս՝ EUR 44/013/2004:

⁴ ՄԱԿ, *Կանանց դեմ բռնության բոլոր ձևերի համապարփակ հետազոտություն. Գլխավոր քարտուղարի հաշվետվություն*, 2006թ. հուլիսի 6, ՄԱԿ-ի Ինդեքս A/61/122/Add.1

⁵ Հոդված 1 եւ 2, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/48/49 (1993 թ.):

⁶ Կանանց նկատմամբ բռնության Հատուկ զեկուցող Ռադիկա Քումարասվամի, *Մարդու իրավունքների կոմիտեի հաշվետվություն*, ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/2003/75, 2003թ. հունվարի 6, պարբերություն 30:

⁷ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե (CEDAW), Ընդհանուր հանձնարարագիր 19, Կանանց դեմ բռնություն, (11-րդ նստաշրջան, 1992), *Մարդու իրավունքների կոմիտեի կողմից ընդունված Ընդհանուր նկատառումների եւ ընդհանուր հանձնարարականների քաղվածքների հավաքածու*, ՄԱԿ-ի փաստաթուղթ HRI/GEN/1/Rev.1, 84 (1994), պարբերություն 1 եւ 6:

⁸ Կանանց դեմ բռնության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի Մարդու իրավունքների կոմիտեի 58-րդ նստաշրջանի հայտարարություն, 2002 թ. ապրիլի 10:

⁹ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, *Բռնության եւ առողջապահության համաշխարհային հաշվետվություն*, Ժնև, 2002թ.:

¹⁰ ՄԱԿ, *Վերջ դնենք կանանց դեմ բռնությանը. Բառերից դեպի գործողություն: Գլխավոր քարտուղարի հետազոտություն*, 2006թ., p.iv. Տես <http://www.un.org/womenwatch/daw/vaw>:

¹¹ Չայաստանի կողմից ստորագրված մարդու իրավունքների միջազգային պայմանագրերի մանրամասները տես Գլուխ 4-ում:

¹² Հայ-ադրբեջանական հակամարտության արդյունքում Չայաստանը կորցրեց իր էթնիկ փոքրամասնության զգալի մասը, ինչը հանգեցրեց տարածաշրջանում շատ մեծ էթնիկ համասեռության (2001 թվականի մարդահամարով բնակչության 97,9%-ը էթնիկ հայեր են):

¹³ Տես Ջեֆրի Սվեդբերգ, «Չայաստանի մարդահամարի արդյունքները քննարկման առակա, սակայն լավ լուր՝ նախագահի համա», *Կենտրոնական Ասիա-Կովկաս Ինստիտուտի վերլուծական*, 2002թ. մարտի 27. քաղված է 2008 թ. հունվարի 24-ի <http://www.cacianalyst.org/?q=node/140> կայքից:

¹⁴ 2001 թվականի մարդահամարի տվյալները տեղադրված են ՀՀ Ազգային վիճակագրության կայքում՝ <http://docs.armstat.am>:

¹⁵ Amnesty International-ի հարցազրույցներն միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, Երևան, 2007թ. մարտ:

¹⁶ Amnesty International-ի հարցազրույցներն միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, Երևան, 2007թ. մարտ:

¹⁷ Ջոն Յուզ, «Որոշում 2007 հատուկ խմբագրություն», *Armenianow.Com*, Համար 46 (216), 2006թ. դեկտեմբերի 8: Տես <http://www.armenianow.com/?IID=1110>:

¹⁸ Amnesty International-ի հարցազրույցը կանանց հայկական ՀԿ-ի ակտիվիստի հետ, Երևան, 2007-ի փետրվար:

¹⁹ Անդրեա Ստրասեր, «Համաշխարհային ցանցեր եւ տեղական հեռանկարներ. Կանանց իրավունքները Հայաստանում», «Globale Netzwerke - Lokale Perspektiven. Frauenrechte in Armenien»-ի չիրատարակված անգլերեն թարգմանություն, *Kulturelle Dynamik der Globalisierung. Ost- und Westeuropaeische Transformationsprozesse aus sozialanthropologischer Perspektive*, խմբագրված Ջոհանա Ռիզերի կողմից (Վիեննա, 2005), էջեր 153-174: Չիրատարակված թարգմանությունը Amnesty International-ին տրամադրել է հեղինակը:

²⁰ ՄԱԿ, *Վերջ դնենք կանանց դեմ բռնությանը*, էջ 31:

²¹ Զաղվածք՝ գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարանի դասախոս, Գալաթեա գեղեցկության կենտրոնի տնօրեն եւ «Արմյանկա» կանանց ամսագրի կողմից «ամսվա կին» ճանաչված Իրինա Քոչարյանի հետ հարցազրույցից, 2007թ. հոկտեմբեր:

²² Ստրասեր, «Համաշխարհային ցանցեր», էջ 3: Նույնը կատարվում էր խորհրդային կարգերի օրոք. օրինակ, 1990 թվականին ուսուցիչների 66%-ը կանայք էին, սակայն Կրթության նախարարության ղեկավար պաշտոններում եւ ոչ մի կին չկար. կրտսեր բժիշկների 90%-ը կանայք էին, մինչդեռ Առողջապահության նախարարության ղեկավարների միայն 1%-ն էր կին: Ահարոն Ադիբեկյան, «Գենդերայա սիտուացիա վ Արմենիի. իստորիա, ռեալնոսծ, պերսպեկտիվի» [Գենդերային իրավիճակը Հայաստանում. պատմություն, իրականություն, հեռանկարներ]: Անտպագիր գործ, տրված «Միջազգային Համաներմանը» հեղինակի կողմից:

²³ Ստրասեր, «Համաշխարհային ցանցեր», էջ 3:

²⁴ ՉԼՄ-ների սեփական մոնիտորինգի հիման վրա, Եվրոպայի Անվտանգության եւ համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) Ընտրությունների դիտորդական առաքելությունը եկավ այն եզրակացության, որ հանրային ՉԼՄ-ներով եւ հեռուստատեսության ալիքներով քաղաքական նորությունների 4%-ից պակասն էր լուսաբանում կին-թեկնածուներին: *ՀՀ խորհրդարանային ընտրություններ 2007 թ. մայիսի 12-ի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության զեկույց*, տես http://www.osce.org/documents/odihr/2007/09/26169_en.pdf, էջ 21: Իր առաջարկներում, դիտորդական առաքելությունը կոչ է արել «հետագա ջանքեր գործադրել... Էականորեն ու արդյունավետ կերպով բարձրացնելու կանանց ներկայացուցչությունը խորհրդարանում եւ կառավարությունում»: (էջ 31):

²⁵ Ջուլիա Հակոբյան, «Տղամարդկանց աշխարհում մեր հետքն ենք թողնում. կամքի թեր հայ կանայք ասում են՝ մայրությունն ու պետական գործը կարելի է համատեղել», *ArmeniaNow.Com*,

Համար 42 (212), 2006թ. նոյեմբերի 10: Տես <http://www.armenianow.com/women/overview.html>:

²⁶ IFES, *Հայաստանում քաղաքացիների իրազեկումն ու մասնակցությունը: 2004 թ. հարցում*, տես http://www.ifes.org/publication/9ae776581eb88e76e3448a40c707a1e1/2004_Armenia_CitizenParticipation.pdf, էջ 35:

²⁷ Ստրասեր, «Համաշխարհային ցանցեր», էջ 3:

²⁸ Ստրասեր, «Համաշխարհային ցանցեր», էջ 13:

²⁹ Ե.Գ. Կրյուզ եվ այլք, *Բռնության եւ առողջապահության համաշխարհային զեկույց* (ժնեւ. Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, 2002), էջ 89:

³⁰ Մինետտոյի Մարդու իրավունքների փաստաբաններ, *Ընտանեկան բռնությունը Հայաստանում*:

³¹ Ահարոն Ադիբեկյան, *Նասիլիե վ օտնոշենիի ժենսչին վ Արմենիի* (Կանանց դեմ բռնությունը Հայաստանում) (Երեւան. Կանանց Իրավունքի կենտրոն /Սոցիոմետր, 2001), էջ 76:

³² Ազգային վիճակագրական ծառայություն, Առողջապահության նախարարություն եւ ORC Macro, *Հայաստանի ժողովրդագրական եւ առողջապահական հարցում 2005* (Կալվերտոն, Մերիլենդ. Ազգային վիճակագրական ծառայություն, Առողջապահության նախարարություն եւ ORC Macro, 2006թ.), էջեր 217-223: տես <http://www.measuredhs.com/pubs/pdf/FR184/FR184.pdf>:

³³ Հարցման մեջ առաջարկված էր կնոջ ծեծելը արդարացնող հինգ պատճառ. ճաշը վառելը, ամուսնու հետ վիճաբանելը, տնից դուրս գալը առանց ամուսնուն տեղյակ պահելու, սեռական հարաբերությունից հրաժարվելը եւ երեխաներին անտեսելը:

³⁴ Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրփանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոն, *Ընտանեկան բռնությունը եւ կանանց նկատմամբ ճնշումները Հայաստանում* (Երեւան: Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրփանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոն/Կանանց Իրավունքների կենտրոն, 2007թ.):

³⁵ Մեկուսացումը, խեղդելը, բերանը գլանակ մտցնելը կամ կամքին հակառակ ֆիզիկական ուժ գործադրելը, հարվածելը, կսմթելը կամ աքացին, զոհին վնասվածք հասցնելու համար առարկայի օգտագործումը, սեփականության ավերումը կամ սեռական հարաբերության պահանջ ներկայացնելը հարցման մեջ սահմանվել են որպես միջին ծանրության ֆիզիկական բռնություն: Ծանր ֆիզիկական բռնության սահմանման մեջ ներառվել են երեխաներին վնաս հասցնելը, բռնի սեռական հարաբերությունը կամ բռնաբարությունը, խեղդամահ անելը, այրելը կամ ջրահեղձումը, զենքով կամ առարկայով սպառնալը կամ վնաս պատճառելը, ձեռքեր ոլորելը եւ մազ պոկելը:

³⁶ Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրփանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոն, *Ընտանեկան բռնությունը եւ կանանց նկատմամբ ճնշումները Հայաստանում*, էջ 89:

³⁷ Amnesty International-ի հարցազրույցը Սուսաննա Վարդանյանի հետ, Կանանց Իրավունքների կենտրոն, 2007թ. մարտի 29:

³⁸ Amnesty International-ի հարցազրույցները կանանց ՀԿ-ների ակտիվիստների հետ, Երեւան, 2008թ. փետրվար:

³⁹ Amnesty International-ի հարցազրույցը կանանց ՀԿ-ների ակտիվիստների հետ, Երեւան, 2008թ.

փետրվար:

⁴⁰ Նշված հանգամանքներն էին. կինը գիտի, որ ամուսինն ունի սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություն. կինը գիտի, որ ամուսինը սեռական հարաբերությունների մեջ է այլ կնոջ հետ. կինը հոգնած է կամ տրամադրություն չունի:

⁴¹ Ազգային վիճակագրական ծառայություն, *Չայաստանի ժողովրդագրական և առողջապահական հարցում*, էջ 220:

⁴² Տես Իզաբելլա Սարգսյան, «Սեռական ոտնձգությունը աշխատանքի վայրում», Չայաստանում Ամերիկյան համալսարանում մագիստրոսի կոչման թեզ, 2007թ., <http://www.aua.am/aua/masters/law/pdf/Sexual%20Harassment.pdf>:

⁴³ Կանանց արելեյք-արեւմուտք ցանց-Polska/NEWW, «Չայ կանանց դեմ բռնություն», 2005թ. փետրվարի 17, տես <http://www.neww.org.pl/en.php/news/news/1.html?&nw=792&re=2>:

⁴⁴ Միգրացիայի միջազգային կազմակերպություն (IOM), *Կանանց և երեխաների թրաֆիկինգ Չայաստանի հանրապետությունից. հետազոտություն* (Երեւան. IOM, 2001), էջ 10:

⁴⁵ Տես, օրինակ, Էդիկ Բաղդասարյան և Արա Մանուկյան, «Անապատի գիշերներ», 2005թ. փետրվարի 16, <http://archive.hetq.am/eng/society/0502-dub.html>:

⁴⁶ ԱՄՆ Պետդեպարտամենտ, *Մարդկանց թրաֆիկինգի զեկույց 2006*, տես <http://www.state.gov/g/tip/rls/tiprpt/2006/65988.htm>: 2003թ. Չայաստանը 3-րդ դասից տեղափոխվեց 2-րդ դասի երկրների ցանկ, սակայն 2005թ. ետ նահանջեց 2-րդ դասի վերահսկման ցուցակում և այս դիրքում է նաեւ 2007թ. զեկույցում:

⁴⁷ Ապաստարաններից մեկը գործում է United Methodist Committee on Relief կազմակերպության, մյուսը՝ «Չույս և հավատ» ՉԿ-ի հովանու տակ: Չայաստանում հակաթրաֆիկինգի մասին մանրամասն վերլուծության համար տես Վիկտորիա Ավակովա, Չասմիկ Էդիյան և Ենոք Շատվորյան, *Չայաստանում թրաֆիկինգի զոհերին աջակցություն* (Երեւան: ՄԶԳ, 2007թ.):

⁴⁸ Նույն տեղում, էջեր 30-32:

⁴⁹ Amnesty International-ի հարցազրույցը Ենոք Շատվորյանի հետ, «Չույս և հավատ» ՉԿ, Երեւան, 2008 թ. փետրվարի 13:

⁵⁰ Նույն տեղում, IOM, *Կանանց և երեխաների թրաֆիկինգ*, էջեր 20-21:

⁵¹ Amnesty International-ի հարցազրույցը Աշխատանքի և սոցիալական քաղաքականության հետազոտությունների ազգային ինստիտուտի բաժնի վարիչ Արմինե Մխիթարյանի հետ, Երեւան, 2008թ. փետրվարի 6:

⁵² Չայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրփանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոն, *Ընտանեկան բռնությունը և կանանց նկատմամբ ճնշումները Չայաստանում*, էջ 80:

⁵³ Գայանե Աբրահամյան, «Չայաստանի լուռ զոհերը», *Կովկասյան լրագրության ծառայություն* No.370, 2006 թ. դեկտեմբերի 14, տպագրված է Խաղաղության և պատերազմի ինստիտուտի կողմից: Տես http://www.iwpr.net/?p=crs&s=f&o=326150&apc_state=henpcrs:

⁵⁴ Amnesty International, *Ֆրանսիա: Կանանց դեմ բռնությունը՝ որպես պետության գործ*, ՄՅ Ինդեքս՝ EUR 21/001/2006:

⁵⁵ Amnesty International-ի հարցազրույցը Սուսաննա Վարդանյանի հետ, Կանանց իրավունքների կենտրոն, 2008թ. փետրվարի 7:

⁵⁶ Այս մեջբերումը վերցված է մի դեպքից, որը նկարագրված է «Նովոյե Վրեմյա» թերթի *ժեստիվա ի Պոլիտիկա* հավելվածում, 2007 թ. նոյեմբեր:

⁵⁷ Այս դեպքի մասին նյութերը հավաքագրել է Կանանց ռեսուրս-կենտրոնը, որը տեղադրված է նաեւ <http://www.stopvaw.org/Armenia.html> կայքում:

⁵⁸ «Աղջիկ փախցնելը» տարբերվում է զույգի կամավոր գաղտնի փախուստից, որը ծրագրում են երկու կողմերը: Այս տիպի գաղտնի փախուստները կարող են պայամանավորված լինել ընտանիքների միջեւ տնտեսական անհավասարությամբ՝ որպես օժիտի խնդրից ազատվելու միջոց:

⁵⁹ Amnesty International-ի հարցազրույցը առողջապահության մասնագետի հետ, Երեւան, 2008թ. հուլիսի 1:

⁶⁰ Այս դեպքի մասին նյութերը հավաքագրել է Կանանց ռեսուրս-կենտրոնը, որը տեղադրված է նաեւ <http://www.stopvaw.org/Armenia.html> կայքում:

⁶¹ Նույն տեղում

⁶² Նույն տեղում

⁶³ Amnesty International-ի հարցազրույցը ՅԿ-ի ակտիվիստի հետ, Երեւան, 2008 թ. փետրվարի 12:

⁶⁴ Amnesty International-ի հարցազրույցը սոցիոլոգի հետ, Երեւան, 2008 թ. փետրվարի 6:

⁶⁵ Աբրահամյան, «Չայաստանի լուռ զոհերը»:

⁶⁶ Ստրասեր, «Չամաշխարհային ցանցեր», էջ 2:

⁶⁷ ՄԱԿ, *Վերջ դնենք կանանց նկատմամբ բռնությանը*, էջ 13:

⁶⁸ CEDAW, Ընդհանուր առաջարկություն No.19, 1992 թ., ՄԱԿ-ի փաստաթուղթ A/47/38:

⁶⁹ ՄԱԿ-ի Կանանց դեմ բռնության վերացման հռչակագիր, Գլխավոր համաժողով 48/104, 1993 թ. դեկտեմբերի 20:

⁷⁰ Չայաստան, *Անդամ երկրների երկրորդ պարբերական զեկույցների շարք*, CEDAW/IC/ARM/2, 1999թ. սեպտեմբերի 9:

⁷¹ CEDAW, *Կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ - CEDAW*. Չայաստան, A/57/38, պարագրաֆներ 25-69 (Եզրափակիչ դիտարկումներ/ Մեկնաբանություններ), 2002թ. օգոստոսի 23:

⁷² Չայաստանի Զրեական օրենսգրքով սա ձեւակերպված է որպես «համասեռամոլություն կամ սեռական բնույթի այլ գործողություններ, որոնք կատարվում են զոհի [արական կամ իգական սեռի] կամքին հակառակ՝ զոհի կամ այլ անձի նկատմամբ ուժով կամ ուժի սպառնալիքով, կամ զոհի անօգնական վիճակից օգտվելով»:

⁷³ Կանանց իրավունքների եւ մասամբ գենդերային բռնության հարցերով ազգային քաղաքականության մշակումը սկսվեց 2002 թվականի մայիսի վարչապետի որոշմամբ՝ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունում ստեղծել Կանանց հարցերով

փոխնախարարի պաշտոն: Այս պաշտոնը իրավասու էր համակարգել տարբեր նախարարությունների կողմից կանանց վերաբերվող ծրագրերը եւ ապահովել դրանց համապատասխանությունը Կանանց կոնվենցիային: Ստեղծվել են նաեւ երկու կոմիտեներ՝ մեկը կանանց վիճակը բարելավելու գործողությունների ազգային ծրագրի մշակման, իսկ մյուսը՝ թրաֆիկինգի հարցերով զբաղվելու համար:

⁷⁴ 2004-2010թթ. Հայաստանի հանրապետությունում Կանանց կարգավիճակը բարձրացնելու եւ նրանց դերը հասարակության մեջ ուժեղացնելու Գործողությունների ազգային ծրագիր, որը Amnesty International-ին է տրամադրել Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը:

⁷⁵ Թրաֆիկինգի խնդիրներով զբաղվելու համար ընդունվել է առանձին՝ Գործողությունների ազգային ծրագիր՝ մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարելու միջոցների վերաբերյալ, 2004-2006թթ.:

⁷⁶ Amnesty International-ի հարցազրույցը Կանանց հարցերի բաժնի պետ եւ Ընտանիքի, կանանց եւ երեխաների հարցերով բաժնի փոխտնօրեն Արմինե Թանաշյանի հետ, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն, Երեւան, 2008թ. փետրվարի 8:

⁷⁷ ՀՀ Մշտական առաքելություն՝ ի պատասխան Կանանց դեմ բռնության հարցերով Հատուկ զեկուցողի հարցման, որը ՀՀ կառավարության էր ուղղվել 2005թ. օգոստոսի 16-ին (G/SO 214 (89-9)):

⁷⁸ Amnesty International-ի հարցազրույցը Կանանց հարցերի բաժնի պետ եւ Ընտանիքի, կանանց եւ երեխաների հարցերով բաժնի փոխտնօրեն Արմինե Թանաշյանի հետ, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն, Երեւան, 2008թ. փետրվարի 8:

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ ԱՄՆ Պետդեպարտամենտ, 2007 TIP զեկույց Հայաստանի պատմություն, տես <http://yerevan.usembassy.gov/news/2007/june/news061207.php>:

⁸¹ ԱՄՆ Պետդեպարտամենտ, 2007 TIP Միջանկյալ գնահատում, տես <http://yerevan.usembassy.gov/news/2008/march/news031408.php>:

⁸² Amnesty International-ի հարցազրույցը կանանց ՀԿ-ների ակտիվիստների հետ, Երեւան, 2008 թ. փետրվար:

⁸³ Amnesty International-ի հարցազրույցը Կանանց հարցերի բաժանմունքի պետ եւ Ընտանիքի, կանանց եւ երեխաների հարցերով բաժնի փոխտնօրեն Արմինե Թանաշյանի հետ, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն, Երեւան, 2008թ. փետրվարի 8:

⁸⁴ Amnesty International-ի հարցազրույցը կանանց ՀԿ-ների ակտիվիստի հետ, Երեւան, 2008թ. հուլիսի 1:

⁸⁵ Հայաստանի 1999 թվականի զեկույցում նշված է, որ «բռնության ենթարկված կանայք երեւի ոչ միշտ են դիմում իրավապահ մարմիններին օգնությանը»: Հայաստան, *Երկրորդ պարբերական զեկույց*, էջ 5:

⁸⁶ Amnesty International-ի հարցազրույցը ՀԿ-ի ակտիվիստի հետ, Երեւան, 2008թ. փետրվարի 12:

⁸⁷ Amnesty International-ի հարցազրույցը Լառա Ահարոնյանի հետ, Երեւան, 2007թ. մարտ:

⁸⁸ Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրփանջյան» հասարակական

հետազոտությունների կենտրոն, *Ընտանեկան բռնությունը եւ կանանց նկատմամբ ճնշումները Հայաստանում*, էջ 77:

⁸⁹ Այս մեջբերումը վերցված է մի դեպքից, որը նկարագրված է *Նովոյե Վրեմյա* թերթի *ժենսչինա* ի *Պոլիտիկա* հավելվածում, 2007թ. նոյեմբեր:

⁹⁰ Amnesty International-ի հարցազրույց ՀԿ-ի ակտիվիստի հետ, Մարտունի, 2008թ. հուլիսի 4:

⁹¹ Հայկական ՀԿ-ի ակտիվիստ, որի հետ հարցազրույցը վարել է Amnesty International-ը, 2006թ., հուլիսի 4:

⁹² Amnesty International-ի հարցազրույցը Ժաննա Հարությունյանի հետ, «Հայկական Կարիտաս», Գյումրի, 2008թ., հուլիսի 5:

⁹³ Amnesty International-ը ստացել է տեղեկությունը ՀՀ Գլխավոր փոխդատախազից, 2008թ. հուլիսի 20:

⁹⁴ Էլիզեբեթ Վիլլագոմես, «Ընտանեկան բռնության արժեքը. Իսպանիայի Անդալուսիայի փորձը», Ելույթ, հիմնված *Los costes sociales y económicos de la violencia contra las mujeres en Andalucía* (Seville: Instituto Andaluz de la Mujer, 2004). Տես <http://app.parlamento.pt/violenciadomestica/conteudo/pdfs/intervencoes/ElisabethVilagomez.pdf>:

⁹⁵ Նույն տեղում, էջ 9:

⁹⁶ Amnesty International-ի հարցազրույցը առողջապահության աշխատակցի հետ, Երեւան, 2008թ. հուլիս:

⁹⁷ Amnesty International-ի հարցազրույցը կանանց ՀԿ-ի ակտիվիստի հետ, Երեւան, 2008թ. հուլիս:

⁹⁸ Amnesty International-ի հարցազրույցը Կարել Հոֆստրայի հետ, Զաղաքական-նազմական հարցերով պատասխանատու, Երեւանում ԵԱՀԿ-ի գրասենյակ, 2008թ. հուլիսի 2:

⁹⁹ Նույն տեղում:

¹⁰⁰ Amnesty International-ի հարցազրույցը տեղի ուստիկանի հետ, Մարտունի, 4 հուլիսի 2008թ.:

¹⁰¹ Amnesty International-ի հարցազրույցը Զաղաքական եւ նազմական հարցերով պատասխանատու Կարել Հոֆստրայի եւ Ժողովրդավարության հարցերով պատասխանատու Սվեն Հոլդարի հետ, ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակ, 2008թ. հուլիսի 2:

¹⁰² Նույն տեղում:

¹⁰³ Ստրասեր, «Համաշխարհային ցանցեր», էջ 4:

¹⁰⁴ Սուսաննա Ասլանյան, «Հույս» ճգնաժամային կենտրոն, *Ընտանեկան բռնության կանխման եւ բռնության դեմ աջակցության ծրագիր* (Երեւան, Հայաստանի մայրության ֆոնդ, 2004թ.), էջ 19:

¹⁰⁵ Amnesty International-ի հարցազրույցը սոցիոլոգի հետ, Երեւան, 2008թ. փետրվար:

¹⁰⁶ ՄԱԿ, *Վերջ դնելը կանանց դեմ բռնությանը*, էջ 37:

¹⁰⁷ Amnesty International-ը տեղեկությունը ստացել է ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալից, 2008թ. հուլիսի 20:

¹⁰⁸ Amnesty International-ի հարցազրույցը ուստիկանի հետ, Մարտունի, 2008թ. հուլիսի 3:

¹⁰⁹ Amnesty International-ի հարցազրույցը կառավարության պաշտոնյայի հետ, Երեւան, 2008թ.

հուլիսի 4:

¹¹⁰ Հանցագործության կանխարգելման եւ քրեական արդարադատության ոլորտում կանանց դեմ բռնության վերացման համար մոդելային ռազմավարություններ եւ պրակտիկ միջոցառումներ՝ ընդունված Գլխավոր ասամբլեայի 1997 թ. դեկտեմբերի 12-ի 52/86 բանաձեւով, պարբերություն 7(բ):

¹¹¹ Amnesty International-ին հարցազրույց տված 35-ն անց կանայք մասնավորապես անհանգստացած են այսօր Հայաստանում աշխատանք գտնելու հեռանկարով:

¹¹² Amnesty International-ը հարցազրույցը ՀԿ-ի ակտիվիստի հետ, Երեւան, 2008թ. փետրվար:

¹¹³ Սրա մասին են վկայում կանանց նկատմամբ բռնության հարցերով ոչ ուղղակիորեն զբաղվող բազմաթիվ կազմակերպություններ, որոնք «ընդդեմ 16 ակտիվ օր կանանց դեմ բռնության» արշավի շրջանակներում մասնակցում էին հասարակությանն իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներին: 2006թ. միջոցառմանը մասնակցած մի ակտիվիստի խոսքերով՝ «հիմա ոչ ոք չի ասում՝ սա իմ գործը չէ»: Amnesty International-ի հարցազրույց Ջինա Սարկիզովայի հետ, Երեւան, 2008թ. փետրվարի 11:

¹¹⁴ Տեղեկությունը տրամադրել է Կանանց իրավունքների կենտրոնը, Երեւան:

¹¹⁵ Amnesty International-ի հարցազրույց կանանց ՀԿ-ների ակտիվիստների հետ, Երեւան, 2007թ. մարտ:

¹¹⁶ Ալլանյան, «Հուլյս» ճգնաժամային կենտրոն, էջ 11

¹¹⁷ Amnesty International-ն հարցազրույց Սուսաննա Ալլանյանի հետ, Երեւան, 2008թ. փետրվարի 14:

¹¹⁸ Այս մոտեցումը խորհրդանշված է կազմակերպության հրապարակություններում եւ գովազդային նյութերում, որտեղ տղամարդը մեջքի ետեւում նվեր է թաքցնում՝ որպես իրենից հեռացած զուգընկերուհու հետ հաշտեցման նշան:

¹¹⁹ Amnesty International-ի հարցազրույց Ժաննա Հարությունյանի հետ, «Հայկական Կարիտաս» Գյումրի, 2008թ. հուլիսի 5:

¹²⁰ Amnesty International-ի հարցազրույց ՀԿ ակտիվիստի հետ, Գյումրի, 2008թ. հուլիս:

¹²¹ Ռադիկա Քումարասվամի՝ Կանանց դեմ բռնության Հատուկ զեկուցողի *Կանանց դեմ բռնություն*, ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/2003/75, 2003թ., հուլիսի 6, պարբերություն 85:

¹²² ՄԱԿ, *Վերջ դնենք կանանց դեմ բռնությանը*, էջ 38-39

¹²³ CEDAW A/57/38, մաս III (2002), հոդվածներ 25-69:



**Ուզում
եմ օգնել**

Լայնածավալ հակամարտության մեջ թե աշխարհի մոռացված անկյունում՝ Միջազգային Համաներումը պայքարում է հանուն արդարության ու ազատության բոլորի համար եւ ձգտում ուժեղացնել հասարակական աջակցությունն ավելի բարեկեցիկ աշխարհ ստեղծելու համար:

Դու ի՞նչ կարող ես անել:

Ակտիվիստներն աշխարհով մեկ ապացուցում են, որ մարդու իրավունքները խարխուղ վտանգավոր ուժերին հնարավոր է հակազդել: Եղի՛ր այս շարժման մասը: Պայքարի՛ր ընդդեմ վախ ու ատելություն սերմանողների:

- Միացի՛ր Միջազգային Համաներմանն ու մաս կազմի՛ր համաաշխարհային մի շարժման, որը պայքարում է վերջ դնելու մարդկանց իրավունքների ոտնահարմանը: Օգնի՛ր մեզ փոփոխության հասնել:
- Նվիրատվություն կատարի՛ր ի նպաստ Միջազգային Համաներման աշխատանքների:

Միասին մեր ձայնը կարող ենք լսելի դարձնել:

Ես ցանկանում եմ ավելի մանրամասն տեղեկություն ստանալ Միջազգային Համաներմանն անդամակցելու վերաբերյալ.

անունը _____

հասցեն _____

երկիրը _____

Էլ. փոստը _____

Ես ցանկանում եմ նվիրատվություն կատարել Միջազգային Համաներմանը (նվիրատվություններն ընդունվում են ֆունտ ստեռլինգով, ԱՄՆ դոլարով կամ եվրոյով)

գումարը _____

խնդրում եմ պարտագրել իմ _____ Visa Mastercard

համարը _____

Ժամկետը լրանում է _____

ստորագրություն _____

Խնդրում ենք այս ձեռք վերադարձնել ձեր երկրում Միջազգային Համաներման գրասենյակ: Միջազգային Համաներման գրասենյակներն աշխարհում՝ www.amnesty.org/en/worldwide-sites

Եթե ձեր երկրում Միջազգային Համաներման գրասենյակ չկա, վերադարձրեք այս ձեռք՝ Amnesty International, International Secretariat, Peter Benenson House, 1 Easton Street, London WC1X 0DW, United Kingdom հասցեով:



www.amnesty.org

Լռությունը պատվարեր չէ. Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքար

Տեղական հարցումների համաձայն, Հայաստանում չորս կանանցից ավելի քան մեկը ֆիզիկական կամ սեռական բռնության է ենթարկվում իր ամուսնու կամ ընտանիքի այլ անդամների կողմից: Կառավարությունը պետք է շատ ավելի անի այս ամոթալի խնդրի առնչությամբ:

Ընտանեկան բռնությունը Հայաստանում քրեական հանցագործություն չի համարվում: Առկա է ընտանեկան բռնության մասին լռություն պահպանելու հիմնավորված մշակույթ: Քրեական արդարադատության համակարգը, հասարակության վերաբերմունքն ու պետության կողմից համապատասխան պաշտպանական միջոցներ ֆինանսավորելու եւ ապահովելու անկարողությունը կանանց հարկադրում են արդարություն չփնտրել: Բայց կա հարաճուն շարժում դեպի փոփոխություն:

Այս գեկույցով Միջազգային Համաներումը միանում է ընտանեկան բռնությունը հանցագործություն որակելու՝ Հայաստանի քաղաքացիական հասարակության կոչին: Ձեկույցում իշխանություններին խորհուրդ է տրվում «թեժ գծեր», ապաստարաններ ու օգնության ծառայություններ ստեղծել: Անհապաղ վերապատրաստման կարիք ունեն ոստիկանության եւ առողջապահության աշխատակիցները՝ կանանց խնդիրներն առավել արդյունավետ լուծելու համար:

Ձեկույցում տեղ եւ գտել Հայաստանում ընտանեկան եւ սեռական բռնություն վերապրածների իրական պատմությունները: Այս կանայք բարձրաձայնում են. կանանց նկատմամբ բռնությունը քրեական հանցագործություն է եւ մարդու իրավունքների ոտնահարում, այլ ոչ անձնական հարց, որի մասին պետք է լռել:

Amnesty International
International Secretariat
Peter Benenson House
1 Easton Street
London WC1X 0DW
United Kingdom

www.amnesty.org

Ինդեքս՝ EUR 54/004/2008
Նոյեմբեր 2008

STOP VIOLENCE
AGAINST WOMEN
AMNESTY
INTERNATIONAL

